ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(75-րդ տարի) Թիվ-11 (1657) Նոյեմբեր 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Իսրայելի դերակատարությունը 44-օրյա պատերազմի օրերին և ոչ միայն (հոդված 2) (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Խաղաղության դարաշրջա՞ն, թե՞ խաղաղ հանձնում (էջ 4-6)

Արմեն Պետրոսյան
Դիրքային մրցակցության միտումները հետպատերազմյան տարածաշրջանում (էջ 7-11)

3- Իրավաքաղաքական

Արմեն Մարուքյան
2020 թ. նոյեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման մասին եռակողմ հայտարարության» իրավաքաղաքական վերլուծություն (էջ 12-19)

4- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Իրան-Ադրբեջան հարաբերություններում երրորդ ուժի գործոնը (էջ 20-22)

Արտյոմ Տոնոյան
Կրոնական բռնաճնշումների նոր ալիք Ադրբեջանում. պատճառներ և հնարավոր զարգացումներ (էջ 23-25)

5- Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Թուրք-իրանական շահերի բախումը Սյունիքում (էջ 26-28)

6- Տնտեսական

Անտոն Քոչինյան
Ինչո՞ւ և ինչպե՞ս է կառուցվել ատոմակայանը (էջ 29-33)

7- Պատմության լուսարձակ

Տիգրան Չանդոյան
Էրդողանի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում, կամ Յենի Սուլթան Էրդողան (հոդված 2) (էջ 34-37)

Խմբագրություն
Թուրք-գերմանական փոխհարաբերությունների պատմությունից. Երկրորդ աշխարհամարտի տարիներ (էջ 38-40)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Չինուորեալը՝ միշտ զինուոր
Նուէր պատնէշի վրայ մնացողներուն (էջ 41-42)

9- Անմահները

(էջ 43-44)

Իսրայելի դերակատարությունը 44-օրյա պատերազմի օրերին և ոչ միայն (հոդված 2)

Թուրք-իսրայելական համագործակցությունն՝ ընդդեմ ընդհանուր թիրախների

«Դրօշակ»-ի նախորդ համարի «Առաջնորդողում» անդրադարձել էինք Իսրայելի դերակատարությանը Արցախի դեմ 44-օրյա պատերազմում և ընդհանրապես Ադրբեջանի անկախացումից հետո այս երկու երկրների քաղաքական ու հատկապես ռազմական գործակցությանը: Փաստերն անառարկելիորեն վկայում են, որ այս ողջ ընթացքում Իսրայելը ոչ միայն եղել է պատերազմող Ադրբեջանի զենքի գլխավոր մատակարարներից մեկը, այլև ներգրավվածության չափով կարող է համարվել տվյալ հակամարտության մասնակից՝ ընդդեմ իր ազատության համար պայքարող արցախահայության: Հրեաները Ադրբեջանին ցուցաբերել ու ցուցաբերում են նաև լոբբիստական օժանդակություն տարբեր երկրներում և մասնավորապես ԱՄՆ-ում ու Ռուսաստանում:

Իրականում այս համագործակցությունն ավելի ընդգրկուն է, և դրա գլխավոր մասնակիցներից մեկն էլ Թուրքիան է: Ինչ վերաբերում է թուրք-իսրայելական համագործակցությանը, ապա Արցախի դեմ ագրեսիային մասնակցությունը դարձել է այս երկու երկրների միջև եղած լարվածության հաղթահարման, փոխհարաբերությունների ակտիվացման գործոններից մեկը: Ավելին, «Newsru.co.il»-ի վկայությամբ, իսրայելացի լրագրող Բարաք Ռավիդը «Axios» ամերիկյան պարբերականում, հղում անելով Իսրայելի բարձրաստիճան պաշտոնյաներին, գրել է, որ այժմ Թուրքիայի և Իսրայելի բանակցություններում որպես միջնորդ հանդես է գալիս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը: Նշվում է նաև Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի և Իսրայելի արտգործնախարար Գաբի Աշկենազիի զրույցի մասին, որի ընթացքում շեշտվել է, որ, Բաքվի կարծիքով, Իսրայելի և Թուրքիայի համար բարենպաստ ժամանակ է երկխոսություն սկսելու համար:

Պատահական չէ, որ, 44-օրյա պատերազմից շատ չանցած, Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, թե եկել է Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման պահը: Նույն՝ 2020 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած մամլո ասուլիսում Թուրքիայի նախագահը նաև ասել է. «Հետախուզության ոլորտում Իսրայելի հետ մեր հարաբերությունները երբեք չեն դադարել»: Ի դեպ, այս փաստը ինչոր չափով հաստատում է և այն ենթադրությունը, որ տասնամյակի չափ ձգված թուրք-իսրայելական լարվածությունը, որի գլխավոր պատճառներից մեկն էլ իբրև թե հանուն ողջ իսլամական աշխարհի պաշտպանության Թուրքիայի կեցվածքն էր, մասնավորապես՝ Իսրայելի հասցեին պարբերաբար հնչող կոշտ հայտարարությունները Պաղեստինի ժողովրդի իրավունքների մասին, չուներ լուրջ և խորքային բնույթ: Միաժամանակ՝ Անկարան զգուշանում էր Իսրայելի հետ հարաբերությունների ջերմացումից, որպեսզի դրանով լարվածություն չստեղծեր Թեհրանի հետ հարաբերություններում: Արցախի դեմ նոր ագրեսիան, սակայն, այնքան մեծ խաղ էր, որի համար Թուրքիան խաղասեղանին էր դրել քաղաքական մեծ խաղադրույքներ: Էրդողանը հաշվարկել էր նաև, որ հաջողության դեպքում զգալիորեն կմեծացնի Թուրքիայի ազդեցությունը Ռուսաստանի վրա: Հիմքեր կան պնդելու, որ դա նրան հաջողվել է, թեև խաղը թելադրողը մնացել է Ռուսաստանը: Վերջին հանգամանքը որոշակիորեն սահմանափակել է նոր ձևավորվող կոնֆլիկտային տարածաշրջանում Թուրքիայի, ինչպես և Իսրայելի մանևրելու հնարավորությունները, բայց և այնպես, այսօրվա աշխարհի ամենանախաձեռնող ու համարձակ քաղաքական գործիչը՝ Էրդողանը, երբեք կանգ առնողը կամ սեփական ագրեսիվ ծրագրերից նահանջողը չէ: Որ դա այդպես է, ցայտուն կերպով երևում է մեր սահմաններում ու Արցախի շուրջ թուրք-ադրբեջանական ծավալապաշտական նախաձեռնություններից ու հավակնություններից:

Ռուսաստանը իր խաղաղապահներով դեռ երկար ժամանակ կարող է «սանձերն իր ձեռքում պահել», ինչին հակակշռելու համար Թուրքիան և Ադրբեջանը կարող են միջնորդության խնդրանքով դիմել Ամերիկայի հրեա լոբբիստներին: Այդ լոբբին մեծ հաջողությամբ գործեց արցախյան վերջին պատերազմի օրերին: ԱՄՆ-ի Քուինսի քաղաքի պետական կառավարման ինստիտուտի քաղաքական դիտորդ Էլդար Մամեդովի խոսքերով. «Ղարաբաղյան պատերազմում իսրայելական լոբբին ԱՄՆ-ում կարողացավ չեզոքացնել հայկական ազդեցիկ սփյուռքի ազդեցությունը, ինչը մեծապես նպաստեց Ադրբեջանի հաղթանակին»: Ըստ Մամեդովի՝ իսրայելական լոբբիստներին հաջողվել է ընդունելի դարձնել այն թեզը, թե Հայաստանը Իրանի դաշնակիցն է, իսկ Ադրբեջանը՝ Իսրայելի: Ի դեպ, այս թեզը միաժամանակ պատրվակ պետք է ծառայեր իրանցի ազերիների պանթուրքիստական շրջանակների ակտիվացման համար, ինչը և որոշ չափով տեղի ունեցավ: Կարելի է հիշել պատերազմի օրերին նրանց բարձրացրած աղմուկը իբրև թե Իրանի տարածքով Հայաստան մտնող ռուսական և իրանական զենքի համար: Կարելի է նաև ենթադրել, որ Իրանի պանթուրքիստների աշխուժացումը որոշակի ազդեցություն ունեցավ հարևան Իրանի արդեն նախկին իշխանությունների վրա, որոնք հենց իրենց երկրի շահերի տեսանկյունից դրսևորեցին ճակատագրական անվճռականություն:

Վերադառնանք, սակայն, մեր հիմնական ասելի-

քին: Ամերիկայում հրեական լոբբիի ջանքերով թուրք-ադրբեջանական տանդեմի նոր հաջողությունների համար անհրաժեշտ է, որ Էրդողանը բարելավի հարաբերությունները Ջո Բայդենի հետ: Այդ բարելավման նշանները դեռևս չեն զգացվում, դեռ ավելին՝ վերջին շրջանում ԱՄՆ-ն, Ֆրանսիան և անգամ Թուրքիայի ավանդական բարեկամ Միացյալ Թագավորությունը առանձնաբար ռազմաքաղաքական համագործակցության սերտացմանն ուղղված համաձայնագրեր են կնքում ՆԱՏՕ-ի մեկ այլ անդամի՝ Հունաստանի հետ, որի հարաբերությունները Թուրքիայի հետ ներկայումս սրվում են:

Իսրայելին էլ չի կարող չանհանգստացնել այն հանգամանքը, որ Սպիտակ տան նոր ղեկավարը, մերժելով իր նախորդի քաղաքականությունը, կարծես թե վերադառնում է իր կուսակից նախագահ Օբամայի որդեգրած՝ Իրանի հետ հարաբերությունների մեղմացման քաղաքականությանը: Միջուկային գործարքի շուրջ վերագործարկելով նախկին գործընթացները, բարելավելով հարաբերությունները Իրանի հետ՝ ԱՄՆ նախագահը կարող է ստեղծել տարածաշրջանում Թուրքիայի աճող ազդեցությանը հակակշռող ևս մեկ լծակ:

Մյուս կողմից, Մերձավոր Արևելքից և Աֆղանստանից զորքերը դուրս բերելով, Ամերիկան թուլացնում է իր ազդեցությունն այս տարածաշրջանում, ինչին զուգահեռ՝ իր ազդեցությունն է մեծացնում Իսրայելը: Վերջին շրջանում նրան հաջողվել է բարելավել հարաբերությունները մի քանի արաբական երկրների հետ, հատկապես նրանց, որոնք վատ հարաբերություններ ունեն Իրանի հետ: Այստեղ ևս բացվում են Թուրքիայի հետ համագործակցության լայն հորիզոններ, և այդ ուղղությամբ նրանք կատարում են ընդառաջող քայլեր: Արցախյան պատերազմը ակնառու և հաջող օրինակ է, թուրք-իսրայելական համագործակցության՝ ընդդեմ ընդհանուր թիրախների:

ՌԴ քաղաքական էլիտան, ադրբեջանա-հրեական կլանը, Հայաստանը և Արցախը

Ի տարբերություն Հայաստանի՝ անցած տասնամյակներին Ադրբեջանը բազմաձև ու բազմամակարդակ ակտիվ աշխատանք է իրականացրել ամբողջ աշխարհում: Այդ աշխատանքների շրջանակներում է նաև դիվանագիտական-լոբբիստական գործունեությունը: Իսկ թե դրանք Ադրբեջանն ինչ մեթոդներով է իրականացրել, եղել են բազում բացահայտումներ ու հրապարակումներ:

Երևի ոչ մի երկրում ադրբեջանցիները այնպիսի հզոր տնտեսական հնարավորություններ չունեն, ինչպես Ռուսաստանում: Այդ հնարավորությունների առյուծի բաժինը կապվում է Ադրբեջանից Ռուսաստան ներգաղթած լեռնային կամ աշկենազի հրեաների հետ:

Ռուսաստանյան անկախ հետաքննող լրագրողների «Proekt.media» միավորումը 2020 թ. դեկտեմբերի 18-ին հրապարակել է «**Ադրբեջանի տարին Ռուսաստանում. Գոդ Նիսանովի դիմանկարը, մարդ, ով գիտի՝ ինչպես ընկերանալ և առևտուր անել**» վերնագրով հետաքննությունը: Հետաքննության թեման ՌԴ մայրաքաղաքում Ադրբեջանից սերված հրեական կլանի՝ գլխավորապես տնտեսական ոլորտում գործունեությունն է, որի աչքի ընկնող դեմքերից մեկը **Գոդ Նիսանովն** է: «Գոդ» բառը, որը ռուսերեն նշանակում է «տարի», որպես բառախաղ է գործածվել վերոնշյալ նյութի վերնագրում՝ այդպիսով ակնարկելով նաև 2020 թ. պատերազմի և նշյալ կլանի անտեսանելի ազդեցության մասին:

Գոդ Նիսանովի և ադրբեջանական տարածքում ապրած աշկենազի հրեաների ունեցած կապերը Ռուսաստանի քաղաքական բարձր շրջանակների հետ կարող էին արդյոք ազդեցություն ունենալ Ռուսաստանի կրավորական դիրքորոշման վրա Արցախյան 44-օրյա պատերազմի օրերին: Կարող էր այդ դիրքորոշման վրա որոշակի ազդեցություն ունենալ այն հանգամանքը, որ ռուսաստանցի բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ կամ նրանց զավակները ներգրավված են Ռուսաստանում, գլխավորաբար Մոսկվայում գործունեություն ծավալող ադրբեջանական ծագմամբ հրեաների բիզնեսներում, իսկ նրանց ընտանիքները օգտվում են այդ առատաձեռն ու Ռուսաստանը շատ սիրող գործարարների բազմաբնույթ ծառայություններից:

Վերադառնանք Գոդ Նիսանովին և Ռուսաստանում գործունեություն ծավալած ադրբեջանական ծագմամբ մյուս հրեա գործարարներին:

Ըստ «Forbes»-ի տվյալների՝ Գոդ Նիսանովը երկար տարիներ եղել է Ռուսաստանի ամենահաջողակ գործարարներից մեկը: Նրա կարողությունը 2021 թ. կազմել է **3,3 մլրդ դոլար:**

Նիսանովը պատանի տարիքում է տեղափոխվել Մոսկվա ադրբեջանական **Կրասնայա Սլոբոդա** (ներկայումս՝ Քիրմիզի Քասաբա/Qirmizi q.s.b.) ավանից, որը հիմնականում բնակեցված է լեռնային հրեաներով: Մոսկվայում նա իր մշտական գործընկեր **Զարախ Իլիևի** հետ սկսել է հայտնի Չերքիզևսկյան շուկայում զբաղվել առևտրով:

Պետք է նշել, որ լեռնային հրեաները միշտ ակտիվ մասնակցություն են ունեցել մոսկովյան առևտրին: Չերքիզևսկյան շուկայի սեփականատերը Նիսանովի հայրենակից **Թելման Իսմայիլովն** էր, որը նույնպես լեռնային հրեա էր, բայց Բաքվից: Գոդ Նիսանովի բազմամյա գործընկեր **Զարախ Իլիևը** նույնպես բիզնեսը սկսել է Չերքիզևսկյան շուկայում:

Գենադի և Սոլոմոն Մանաշիրով եղբայրները Մոսկվայի բազմաթիվ առևտրի կենտրոնների սեփականատերերն էին, որոնցից էին «Պրաժսկի պասսաժ»-ը, «Արմադա»-ն, «Կոլումբուս»-ը և այլն: Լեռնային հրեա **Թահիր Գիլալովը** Իզմայլովսկու շուկայի համասեփականատեր էր, նրա որդիները՝ **Ակիֆը** և **Զաուրը**, Մոսկվայում մի քանի առևտրային համալիրներ ունեին:

Հայտնի «Ելիսեևսկի» մթերային խանութի սեփականատերը ադրբեջանցի մեկ այլ լեռնային հրեա էր՝ **Յակով Յակուբովը**, ով մամուլում ստացել

էր «Տվերսկայայի տերը» տիտղոսը: Յակուբովը «լավագույն տների» անշարժ գույքի ամենամեծ ցանցի տերն էր համարվում: Նա նաև հայտնի է նրանով, որ սեփական եռահարկ «պալատ» է կառուցել խորհրդային ժամանակներից հայտնի «VDNKh»-ի (Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես) կենտրոնում: Նրանք, ովքեր հասցրել էին մեծ բիզնեսի աշխարհ մտնել ելցինյան ամենաթողության տարիներին և հետագայում էլ իհարկե չէին փայլել ազնիվ գործելակերպով վատ վերջ են ունեցել (բացառությամբ Նիսանովի և Իլիևի):

«Նիսանովը անզուսպ կիրք է տածում առևտրի կենտրոնների նկատմամբ»,- ասել է Ռուսաստանի կառավարության նախկին անդամներից մեկը: «Proekt»-ի թղթակցի հարցին, թե ով է պաշտպանում Գոդ Նիսանովին, երբ վերջինս բիզնեսում դժվարություններ է ունենում, կառավարության նախկին բարձրաստիճան պաշտոնյան պատասխանել է. «Նրանք շատ կարևոր մարդիկ են»:

«Proekt»-ը հաշվել է «Կիևսկայա պլոշչադ»-ին (Կիևյան հրապարակ) պաշտոնապես պատկանող ընկերություններում մոտ 40 հիմնադիրների անուններ: Ընթերցելով այդ անունները՝ կարելի է այն տպավորությունը ստանալ, թե Ադրբեջանի Կրասնայա Սլոբոդա բնակավայրի յուրաքանչյուր բնակիչ մասնակցում է «Կիևսկայա պլոշչադ»-ի բիզնեսին: «Կիևսկայա պլոշչադ»-ը Ռուսաստանի առևտրային անշարժ գույքի շուկայում ամենախոշոր վարձակալն է (rantie), իսկ ըստ «Forbes»-ի «Ռուսաստանի անշարժ գույքի թագավորներ» վարկանիշի՝ 2017 թ. վերջին նրա եկամուտը կազմել է 1,5 մլրդ դոլար:

Նիսանովի մերձավոր շրջապատի ներկայացուցիչներից է **Էլման Բայրամովը**: Նրան է պատկանում «**Մոսասերվինզավոդ**» ընկերությունը, որն արտադրում է կոնյակ, պորտվեյն և օղի: Բայրամովը նաև Ադրբեջանի առաջին փոխվարչապետ **Յագուբ Էյուբովի** ընտանիքի անդամ է. գործարարի դուստրն ամուսնացած է քաղաքական գործչի որդու հետ:

Ադրբեջանական հետքը և քաղաքականությունը

2014 թ. «Արխնադզոր» շարժման համակարգող Անդրեյ Նովիչկովը հրապարակում է **«Atlantic Aeronautic»** ընկերության կողմից Մոսկվայի Տվերսկայա-Յամսկայա 1-ին պատմական հուշարձանի ավերման մասին նյութեր: **«Atlantic Aeronautic»** ընկերությունը գրանցված է Ադրբեջանում՝ Բաքվի Լև Տոլստոյի 170 հասցեում, որտեղ գտնվում է **«PASHA Insurance»** ընկերության գրասենյակը, որն էլ **«PASHA Holding»**-ի՝ Ադրբեջանի նախագահի ընտանեկան ընկերության մաս է: Քանդումից մեկ տարի անց Մոսկվայի քաղաքային սեփականության դեպարտամենտի՝ կառուցապատող «Atlantic Aeronautic»-ի դեմ հայցադիմումում **Ադրբեջանի նախագահի դուստրը՝ Լեյլա Ալիևան,** ուղղակիորեն նշվում է որպես պատասխանող:

Ադրբեջանի նախագահի դստեր բիզնեսը նույնպես առնչվում է Գոդ Նիսանովին: Նա է ֆինանսական օգնություն ցուցաբերում Ալիևային Ռուսաստանում: «MFK» ընկերությունը, որը «Կիևսկայա պլոշչադ» խմբի անդամ է, հանդես է եկել որպես երաշխավոր «Atlantic Aeronautic»-ի կողմից՝ առնվազն 400 միլիոն ռուբլի վարկի դիմաց: Բացի այդ՝ Նիսանովի հետ կապված «Akkord Spetsstroy» ընկերությունը վերակառուցել է Ադրբեջանի տաղավարը «VDNKh»-ում (տաղավարը կառավարում է «Բաքվի բիզնես կենտրոնը», որը կապված է Լեյլա Ալիևայի հետ): «Akkord Spetsstroy»-ի հիմնադիրներն էին **Իլգար Հաջիևը** և երկու տղամարդ, որոնց անուններով նախկինում գրանցված էին «Կիևսկայա պլոշչադի» բիզնեսները: Հաջիևը նշում է, որ «Akkord Spetsstroy»-ում իրենք ներկայացնում էին Նիսանովին:

Ադրբեջանի ղեկավարության հետ սերտ հարաբերությունների միջոցով Նիսանովը ներգրավվել է միջազգային քաղաքականության ոլորտ: **2020 թ. ամռանը՝ հայ-ադրբեջանական նոր հակամարտության բռնկման ժամանակ,** «Food City»-ի շուկան դարձել էր այն վայրը, որտեղ հաշիվներ են մաքրվել, և ուր պարզապես այլևս թույլ չէին տալիս մուտք գործել հայ առևտրականներին՝ իրենց բեռնատարներով:

Նիսանովի գործընկեր **Իլգամ Ռահիմովը** ադրբեջանական **«Մուսավաթ»** թերթին տված հարցազրույցում պարծեցել է, որ իրենց կողմից հայերին հասցված վնասը կազմել է «հարյուրավոր միլիոն» դոլարներ: Նրա խոսքերով՝ ռուսաստանցի պաշտոնյաները կապ են հաստատել իր հետ, սակայն ինքը և Նիսանովը նրանց ասել են. «Մի՛ խառնվեք այս գործին»: Որոշումը ուրախություն է առաջ բերել ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչների շրջանում: Հայ դիվանագետներին, որոնք գնացել էին բանակցելու, «Վիտյազ» մասնավոր անվտանգության ընկերության պահակները վտարել են տարածքից:

Ըստ «vlasti.info» լրատվամիջոցի 2021 թ. մայիսի 31-ի հաղորդագրության՝ Մեծ Բրիտանիայում ապաստանած նույնպես լեռնային հրեա օլիգարխ **Թելման Իսմայիլովը** նամակ է գրել **Վլադիմիր Պուտինին**: Նամակում նա մանրամասն նկարագրել է Կրասնայա Սլոբոդա ավանի օլիգարխների սխեմաները, մասնավորապես պատմել այն մասին, թե ինչպես է Գոդ Սեմյոնովիչ Նիսանովը միատեղել քրեականներին օլիգարխներին և իշխանությանը:

Ի դեպ, Ռուսաստանի՝ ադրբեջանական ծագմամբ լեռնային հրեաների գերազդեցիկ կլանի գործունեության և այլ, այդ թվում՝ քաղաքական ու քրեական ոլորտներում համագործակցության կամ ազդեցության մասին կան փաստացի տվյալներ, որոնք թույլ են տալիս Մեծ Մերձավոր Արևելքի որոշ տարածաշրջաններում ընթացող իրադարձություններում ևս, այդ թվում՝ պատերազմական, տեսնել նրանց «հետքերը»: ■

Խաղաղության դարաշրջա՞ն, թե՞ խաղաղ հանձնում

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի առցանց նիստի ժամանակ՝ հոկտեմբերի 15-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերահաստատել է իր կողմից մի քանի անգամ հնչեցված այն միտքը, որ ՀՀ կառավարությունը նպատակ է դրել բացելու «մեր երկրի և մեր տարածաշրջանի համար խաղաղ զարգացման նոր դարաշրջան»: Խոսելով Ադրբեջանի սադրիչ գործողությունների, սահմանին անընդհատ տեղի ունեցող միջադեպերի, մինչ օրս Բաքվում պահվող հայ գերիների և այլ խնդիրների մասին՝ Փաշինյանն այնուամենայնիվ նշել է. «Մենք վճռական ենք և կանենք հնարավորը՝ մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության հասնելու համար»: Նա նույնիսկ ասել է, որ ՀՀ իշխանությունները պատկերացում ունեն, թե ինչպես պետք է հասնել այդ նպատակին. «Երկխոսությունը, մեր տարածաշրջանում գոյություն ունեցող թշնամանքի մթնոլորտի աստիճանական հաղթահարումը, բոլոր տարածաշրջանային տրանսպորտային և տնտեսական հաղորդակցությունների ապաշրջափակումը միակ ճանապարհն է, որը, մեր կարծիքով, կարող է հասցնել այս նպատակին»: Արժանահավատ թվալու համար նա զարգացրեց միտքը և խոստացավ, որ Ադրբեջանը Հայաստանի տարածքով Նախիջևանի հետ երկաթգծային և ավտոմոբիլային կապ կստանա...

«Դրօշակ»-ի նախորդ համարում խոստացել էինք անդրադառնալ ՀՀ կառավարության որդեգրած այդ քաղաքականությանը՝ փորձելով հասկանալ, թե նման նպատակադրումների համար գաղափարական և ծրագրային ինչ հիմքեր կան: Եվ ամենակարևոր հարցը՝ Հայաստանը տարածաշրջանի «խաղաղ զարգացման դարաշրջան» սկսելու ներուժ ունի՞, թե՞ ոչ:

Իհարկե, խաղաղությունն արժեք է, որին պետք է ձգտել և ամեն կերպ փորձել ապահովել այն: Բոլոր ժամանակներում աշխարհի բոլոր ժողովուրդները խաղաղություն են ցանկացել, և սա մարդու բնական պահանջն է: Բայց նույն պատմությունը սովորեցրել է, որ խաղաղությունը հենց այնպես չի լինում: Դրա համար պետք է աշխատանք տանել, պայքարել, միջոցներ ներդնել, ճիշտ հասկանալ երկրի ու ժողովրդի գոյատևման միջավայրը, դրանից բխող սպառնալիքները, ընձեռած հնարավորությունները և այլն, և այլն: «Խաղաղությո՞ւն ես ուզում՝ պատրաստվի՛ր պատերազմի»: Վերջիվերջո, ահա այս մտքին է հանգել մարդկությունը՝ լավ հասկանալով, որ խաղաղ ապրում են միայն այն պետությունները, որոնց թշնամիները նրանց վրա հարձակվելու ոչ մի հնարավորություն պարզապես չունեն: Արդյոք այդ վիճակո՞ւմ է այսօրվա Հայաստանը: Իհարկե՝ ոչ: Ցավոք, անցած մեկ տարվա զարգացումները ցույց տվեցին, որ հայկական պետությունն ի վիճակի չէ անգամ իր միջազգայնորեն ճանաչված տարածքները պաշտպանելու: Այդ խնդիրը լուծելու համար մենք դիմում ենք դաշնակից երկրներին, ապավինում Իրան-Ադրբեջան հակամարտության՝ մեզ ձեռնտու հանգուցալուծմանը, միջազգային դիտորդներ հրավիրում և այլն: Ինչպե՞ս կարելի է այս իրավիճակում մտածել խաղաղության մասին: Ինչպիսի՞ խաղաղության մասին մտածել: Եվ ամենակարևորը՝ ինչի՞ հաշվին պետք է լինի այդ խաղաղությունը:

Փորձենք այս հարցին ավելի համակարգված անդրադառնալ: Խաղաղություն առաջին հերթին նշանակում է անվտանգություն: Խաղաղ ապրելու համար պետության սահմաններին և նրա բնակչությանը պետք է ոչինչ չսպառնա: Մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ այսօր դա այդպես չէ: Ադրբեջանի զինված ուժերը շարունակում են խախտել զինադադարի պայմանները, զորքը տեղաշարժում են դեպի Հայաստանի ու Արցախի խորքերը, կրակում մեր զինվորների վրա, գերեվարում նրանց և այլն: Հիմա կարևոր մի հարց. պատերազմի ավարտից ուղիղ մեկ տարի է անցել, ի՞նչ են արել հայկական երկու պետությունների ռազմաքաղաքական իշխանությունները սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու համար: Ոչինչ: Նրանք ոչինչ չեն արել: Անգամ խրամատներ չեն փորել պատերազմից հետո ձևավորված նոր սահմաններում, եղածներն էլ շատ դեպքերում անտերության են մատնել: Եվ ուրեմն խաղաղության կարևոր բաղադրիչը՝ սահմանների անվտանգությունը, չկա:

Անցնենք առաջ: Արցախյան վերջին պատերազմում հայոց բանակը լուրջ կորուստներ է ունեցել: Մենք կորցրել ենք հազարավոր զինվորներ, հրամանատարներ, բնագծեր, ռազմական տեխնիկա և այլն: Նորից եմ կրկնում՝ պատերազմի ավարտից ուղիղ մեկ տարի է անցել: Ո՞ւր է համալրումը: Ո՞ւր է բանակի վերազինումը: Կա՞ արդյոք մշակված նոր ռազմավարություն մեր զինված ուժերի համար: Չկա: Այդ ամենն էլ չկա: Փոխարենը ՀՀ իշխանություններն այդ ժամանակն օգտագործել են բանակը

վերջնականապես իրենց կամքին ենթարկելու համար: Ավելին՝ հետպատերազմյան շրջանում հայկական զինված ուժերում շարունակվել են այն բոլոր կործանարար գործողությունները, որոնք 2018-2020 թթ. դարձել են Արցախի պաշտպանության բանակի մարտունակության թուլացման պատճառ: Այսպես՝ 2021 թ. հուլիսին փաստացի գլխատվեց ՀՀ ԶՈՒ ամենամարտունակ երրորդ բանակային կորպուսը. հրամանատարի պաշտոնից ազատվեց ոչ միայն գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովը, այլև մի շարք այլ զինվորականներ:

Շատ վատ վիճակում է նաև մեր սահմանների աշխարհագրությունը: Ոգևորվելով պատերազմում տարած հաղթանակով՝ հետպատերազմյան շրջանում մեր թշնամիները կարևոր բարձունքներ են գրավել Հայաստանի սահմանների երկայնքով: Դրա հետևանքով լրջագույն սպառնալիքներ են առաջացել Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերում: Նշված բոլոր շրջաններում ադրբեջանցիներն ուղիղ նշանառության տակ են առել ոչ միայն մեզ համար կենսական նշանակություն ունեցող ճանապարհները, այլև բազում ենթակառուցվածքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն թե՛ անվտանգության ապահովման և թե՛ ժողովրդի բնականոն գործունեության ու զարգացման համար: Իսկ Արցախում ստեղծված իրավիճակի մասին խոսելն ավելորդ է: Այնտեղ ամեն ինչ շատ ավելի վատ է: Մինչդեռ մենք պետք է հաշվի առնենք, որ սահմանների անվտանգությունը անվտանգության համակարգի ընդամենը մեկ բաղադրիչն է: Ես հիմա խնդիր չեմ դնում խոսելու անվտանգության, հետևաբար նաև խաղաղության ներքին մյուս բաղադրիչների՝ տնտեսության, դիվանագիտության, հանրային համերաշխության, քաղաքական կայունության, առողջապահության և այլ հարցերի մասին: Վստահ եմ՝ ընթերցողը քաջ տեղյակ է, թե ինչ խնդիրներ ունենք մենք այս ոլորտներում: Հարցը շարունակում է նույնը մնալ՝ ինչպե՞ս է ՀՀ կառավարությունը փորձում խաղաղություն բերել տարածաշրջանին: Ինչպես տեսնում ենք, Հայաստանն այսօր ոչ միայն դրա ներքին ներուժը չունի, այլև չի փորձում կուտակել դրա համար անհրաժեշտ ներքին կայունության և կանխատեսելիության պաշարներ:

Նկատենք՝ ես դեռ փորձում եմ խուսափել Նիկոլ Փաշինյանին ու նրա կառավարությանը պոպուլիզմի հերթական մեղադրանքն առաջադրելուց՝ անկեղծ փորձելով հասկանալ, թե ինչպես են նրանք պատկերացնում իրենց առջև դրված նպատակի իրականացումը: Որովհետև այն լուծումները, որոնք ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստին առաջարկել է Փաշինյանը, այն է՝ երկխոսությունը, թշնամանքի մթնոլորտի հաղթահարումը և Ադրբեջանին ՀՀ տարածքով դեպի Նախիջևան ճանապարհ տրամադրելը, իրատեսական չեն և ավելի շատ կենացներ են հիշեցնում: Համենայնդեպս, առաջին երկու կետերը միանշանակորեն այդպիսին են, իսկ երրորդը՝ թուրք-

Բոլշևիկները հոչակեցին խաղաղության դեկրետ, որին հետևեց Հայաստանի հսկայական տարածքների զիջումը հարևան պետություններին

ադրբեջանական դաշինքի կոմունիկացիաների սպասարկումը՝ թշնամու պարտադրանք: Ընդ որում, Ադրբեջանի իշխանությունները չեն էլ սպասում, թե երբ Հայաստանը կբացի այդ ճանապարհները: Նրանք արդեն ներդրողներ են փնտրում, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» համար՝ զուգահեռաբար սպառնալով Հայաստանին ուժով բացել այդ ճանապարհը, եթե հանկարծ հայկական կողմը որևէ խնդիր ստեղծի այդ հարցում: Այսինքն՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հիմնական խնդիրն այս պահին ոչ թե Հայաստանի համաձայնությունը, այլ ներդրումների հարցն է:

Ինչևէ, շարունակենք «մեր երկրի և մեր տարածաշրջանի համար խաղաղ զարգացման նոր դարաշրջան» սկսելու համար անհրաժեշտ ռեսուրսների փնտրտուքը: Գուցե Նիկոլ Փաշինյանի հույսը ոչ թե Հայաստանի, այլ տարածաշրջանային տերությունների կարողություններն են: Օրինակ՝ Ռուսաստանի ցանկությունը, որ տարածաշրջանում ոչ ոք ոչ մեկի դեմ չպատերազմի, համագործակցեն, կոմունիկացիաներ ու տնտեսական կապեր ստեղծեն և բոլոր խնդրահարույց հարցերը Մոսկվայում լուծեն, կամ Իրանի Իսլամական Հանրապետության պահանջը, որ տարածաշրջանի պետությունների միջազգայնորեն ճանաչված սահմանները որևէ փոփոխության չենթարկվեն: Ինչի՞ վրա է հույս դրել Նիկոլ Փաշինյանը՝ «կիրթ» Ալիևի վարքագծի փոփոխման: Հիշենք սովետական այն հայտնի մուլտֆիլմը, երբ փոստատարն ասում է, թե ինքը չար էր, որովհետև նախկինում հեծանիվ չուներ, իսկ հիմա ունի: Մի՞թե Փաշինյանը կարծում է, որ Ալիևը հիմա, երբ գրեթե ամբողջությամբ զավթել է Արցախը, հանկարծ կբարիանա: Լո՞ւրջ:

Գիտեք, հեգնելու ցանկություն ամենևին չունեմ, բայց որևէ կերպ չեմ կարողանում դուրս գալ այդ հոգեվիճակից: Տարածաշրջանն այսօր եռում է: Անցած մի քանի ամիսների ընթացքում մենք մշտապես եղել ենք տարբեր պետությունների՝ մեր տարածքում այս կամ այն խնդիրը լուծելու հնարավորության համար մղվող պայքարի վկան: Սյունիքի մարզը դարձել է Ռուսաստանի, Ադրբեջանի, Իրանի ու Թուրքիայի մրցակցության ասպարեզ: Ընդ որում, բոլոր չորս երկրներն էլ իրենց ծրագրերում չեն բացառում Սյունիքը նվաճելու սցենարը: Ավելին, ըստ իրանական աղբյուրների տեղեկությունների, թուրք-ադրբեջանական դաշինքը ծրագրում էր հոկտեմբերի սկզբին անսպասելի հարձակմամբ գրավել Սյունիքը և վերջապես իրականացնել երկու թյուրքական պետությունների միջև ցամաքային կապի՝ իր այդքան փայփայած երազանքը: Բաքվի ու Անկարայի հենց այդ արկածախնդրությունը կանխելու համար է իրանական կողմը հոկտեմբերի 1-ին լայնածավալ զորավարժություն սկսել Հայաստանի ու Ադրբեջանի սահմանին՝ ցույց տալու համար, որ դեպի Հայաստան թուրքական ինտերվենցիայի պարագայում իրենք անմասն չեն մնա այդ պատերազմից և ամեն ինչ կանեն, որ Սյունիքը ոչ թե Ադրբեջանի կամ Թուրքիայի վերահսկողության տակ հայտնվի, այլ հենց Իրանի:

Պակաս լարված չեն նաև ռուս-թուրքական և ռուս-իրանական հարաբերությունները: Ակնհայտ է, որ արցախյան վերջին պատերազմից առաջ բոլոր այս կողմերի միջև որոշակի պայմանավորվածություններ են ձեռք բերվել, որոնք չեն պահպանվել: Այդ են հուշում նաև հոկտեմբերի 6-ին Մոսկվա այցելած Իրանի արտգործնախարար Ամիր Աբդոլլահիանի հայտարարություններն ու գնահատականները: Ադրբեջանական կողմը, ոգևորվելով պատերազմում տարած իր հաղթանակով, փորձում է ավելին ձեռք բերել, քան թույլատրված է նրան: Որպես արդյունք՝ բոլոր հիշատակված երկրները միմյանց հետ հարաբերություններ են ճշտում, պայմանավորվածություններ ձեռք բերում, խախտում դրանք և այլն, ու այդ բոլորը՝ հայկական պետությունների կենսական շահերի, այդ թվում՝ տարածքների հաշվին: Նկատենք նաև, որ Հայաստանը դուրս է բոլոր այդ քննարկումներից: Որևէ մեկը որևէ հարցով Նիկոլ Փաշինյանի կարծիքը չի հարցնում: Եվ ուրեմն ինչպես կարող է Հայաստանի ղեկավարն այս պայմաններում խոսել տարածաշրջանում խաղաղության դարաշրջան սկսելու մասին:

Մնում է, թերևս, վերջին տարբերակը՝ ոչ թե խաղաղության դարաշրջան, այլ հայկական պետությունների կենսական շահերի խաղաղ հանձնում թշնամուն: Եվ սա, ցավոք, կյանքի կոչվող ամենաիրական սցենարն է: Այս տողերը գրելիս նոր տեղեկատվություն ստացվեց, որ ՀՀ իշխանությունները Կապանի Փելա սարը հանձնում են Ադրբեջանին: Այդ մասին սկզբում ահազանգեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը, իսկ ավելի ուշ հաստատեց նաև «Պատիվ

Ռուս խաղաղապահները Արցախում

ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը: Նշվում է, որ հանձնման գործընթացը Հայաստանի և Ադրբեջանի սահմանների գծման և զատման շուրջ կողմերի միջև գաղտնի ձեռք բերված պայմանավորվածության հետևանք է: Իսկ ամենացավալին այն է, որ Հայաստանում դա արդեն ոչ ոքի չի զարմացնում, էլ չասեմ՝ զայրացնում:

2021 թ. մայիսի 28-ին՝ Անկախության տոնի օրը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Սև լճի 30 տոկոսի համար պատերազմ չենք սկսելու: Այդպես նա արդարացրեց այն փաստը, որ թշնամին Սյունիքի մարզում անխոչընդոտ հատել է ՀՀ միջազգայնորեն ճանաչված սահմանը և գրավել Գորիսի նկատմամբ ռազմավարական բարձունք հանդիսացող՝ Սև լճին հարող տարածքները: ՀՀ ղեկավարը չէր կարող չգիտակցել, որ հիշատակված հատվածը զուտ քառակուսի մետրեր չեն, որտեղ հաստատվել է ադրբեջանական զորքը: Դա թշնամու համար Սյունիքի նկատմամբ ստրատեգիական վերահսկողություն սահմանելու անհրաժեշտ բարձունք է: Ի դեպ, նույն նպատակն են հետապնդում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզ ներխուժած թշնամիները: Այդ կողմից էլ Ադրբեջանի հիմնական թիրախը Սյունիքը ՀՀ մնացած շրջանների հետ կապող Վարդենյաց (Սելիմի) լեռնանցքն է, որն այս պահին դեպի Սյունիք տանող միակ ճանապարհն է, որը դեռևս չի դիտարկվում և ինչ-որ առումով վերահսկվում Ադրբեջանի կողմից: Պատերազմ պետք էր սկսել ոչ թե «Սև լճի 30 տոկոսի», այլ Սյունիքի անվտանգության ու Հայաստանի գոյության համար: Բայց՝ ոչ, Փաշինյանը որոշել է խաղաղության դարաշրջան սկսել և, ինչպես արդեն նշել եմ, խաղաղ ամեն ինչ հանձնում է թշնամուն:

Հասկանալի է, որ այդպիսի «խաղաղությունը» ավելի վտանգավոր է, քան ցանկացած պատերազմ: Ես իհարկե չեմ վիճարկում խաղաղության անհրաժեշտությունը մեր պետությունների և ժողովրդի համար: Բայց խաղաղությունը երկնային պարգև չէ: Այն պետք է կառուցել, վաստակել: Եվ եթե Հայաստանն իսկապես խաղաղություն է ցանկանում, ապա պետք է պատրաստ լինի երկարատև քրտնաջան աշխատանքի: Այլ տարբերակ պարզապես չկա: Սա ճշմարտություն է, որում մենք ինքներս բազմիցս համոզվել ենք մեր իսկ պատմության տարբեր ժամանակաշրջաններում: ■

Դիրքային մրցակցության միտումները հետպատերազմյան տարածաշրջանում

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

Նոր ուժային հարաբերակցությունն ու վերադիրքավորման ընդհանուր միտումները

Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով Այսրկովկասում հիմնովին փոխված ուժային հարաբերակցությունն առարկայորեն հանգեցրել է նաև դիրքային նոր պայքարի, բարդ վերադասավորումների՝ անզիջում մրցակցության պայմաններում նախկին և նոր բանաձևումների միջոցով կորսված հնարավորությունները վերականգնելու, ձեռք բերված առավելություններն ամրապնդելու տրամաբանությամբ: Տարածաշրջանում դիրքային մրցակցության բովանդակային նոր շրջափուլն ընթանում է ոչ միայն առանձին դերակատարների, այլև ֆորմալ և ոչ ֆորմալ դաշինքների, բանակցային ձևաչափերի, ենթակառուցվածքային նախագծերի հարթություններում՝ առավել խտացնելով հետպատերազմյան ժամանակահատվածում շահերի բախման խճանկարը:

Պատերազմի հետևանքները հանգեցրին տարածաշրջանում «հաղթած-պարտված», «դիրքերը կորցրած-ամրապնդած», «գործընթացներից դուրս մնացած-հաստատվել ձգտող» պայմանական «խաղային» բանաձևումների: Այսպես՝ **հայկական երկու պետությունների** հետպատերազմյան դիրքավորումը տարածաշրջանում կարելի է բնութագրել որպես պարտվածի, **Ադրբեջանինը՝** հաղթածի, **Վրաստանինը՝** թուլացածի: Տարածաշրջանում շահեր և ներկայություն ունեցող խաղացողների դիրքավորման տիրույթում կատարված փոփոխությունների հետևանքով ձևավորված մրցակցային պատկերը հետևյալն է. **Իրանը՝** որպես կորցրած, ԵԱՀԿ ՄԽ արևմտյան համանախագահ երկրները՝ **ԱՄՆ**-ն և **Ֆրանսիան**՝ գործընթացներից դուրս մղված, **Ռուսաստանը՝** դիրքերն ամրապնդած, **Թուրքիան՝** ազդեցությունը մեծացրած, **Իսրայելը, Պակիստանը և Հնդկաստանը՝** բացահայտորեն հաստատվել, ամրապնդվել ձգտող դերակատարներ:

Զարգացնելով վերոնշյալ տրամաբանությունը՝ փաստենք, որ պատերազմի հետևանքով հաջողություն արձանագրեց **Ադրբեջան-Թուրքիա** դաշինքը, լայն առումով՝ **Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան-Իսրայել** ոչ ֆորմալ համագործակցությունը, պարտվեց **Հայաստան-Ռուսաստան** դաշինքը: Հակամարտության կարգավորման բանակցային ձևաչափերից, որպես մենաշնորհային իրավազորությամբ օժտված միջազգային կառույց, իր դիրքերը զիջեց ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափը, ձևավորվեց նորը՝ «**Նոյեմբերի 9**-ի եռակողմ հայտարարության» (պայմանականորեն՝ «Նոյեմբերի 9-ի»), խաղի մեջ է մտել «**Վրացական հարթակը**», ակտիվորեն քննարկվում է նոր՝ թուրք-

ադրբեջանական «**3+3**»-ի կամ «**6**»-ի հարթակի ստեղծման հարցը:

Վերոնշյալ բազմակողմանի դիրքավորումների համատեքստում տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերից մրցակցության մեջ են մտել նաև բովանդակային առումով իրար մոտ, փոխլրացնող իրանական «**Պարսից ծոց-Սև ծով**» ու հնդկա-իրանական «**Կովկասյան միջանցքի**», հնդկական «**Հյուսիս-Հարավ**» նախագծերը՝ մի կողմից, թուրք-ադրբեջանական «**Զանգեզուրի միջանցքը**»՝ մյուս կողմից՝ որպես նաև «**Արևելք-Արևմուտք**» կապուղու լրացուցիչ նախագիծ:

Միևնույն ժամանակ հարկ է հավաստել, որ վերոնշյալ մրցակցային հարթությունների դասակարգումը խիստ պայմանական է, քանի որ առաջացած և խտացող շահերի պատկերը կարևոր է դիտարկել ամբողջական համատեքստում, իսկ մրցակցային տարաբնույթ դրսևորումները՝ որպես փոխլրացնող, մեկը մյուսին օժանդակող միջոցներ:

Դիրքային մրցակցության դրսևորումները

Արցախյան 44-օրյա պատերազմն ավարտվեց Ադրբեջանի, Հայաստանի և **Ռուսաստանի** ղեկավարների՝ **նոյեմբերի 9**-ի եռակողմ հայտարարությամբ, որը, մեծ հաշվով, ոչ միայն ռազմական գործողությունների ավարտն ազդարարող նոր հրադադարի ռեժիմի վերաբերյալ պայմանավորվածություն է, այլև, ըստ էության, ճանապարհային քարտեզ՝ Արցախյան հիմնախնդրի և հայ-ադրբեջանական հակամարտության երկարաժամկետ կարգավորման՝ Մոսկվայի վճռորոշ միջնորդական դերակատարմամբ: Ընդ որում, վերջինը ոչ միայն դե-յուրե ամրագրված իրավաքաղաքական միջնորդության վավերացում է, այլև ամրապնդված է մարդասիրական գործառույթների

հիմքով ձևավորված ռազմական գործիքակազմով ևս՝ ի դեմս Արցախում հրադադարի հսկման ՌԴ խաղաղապահ առաքելության, որը, հումանիտարին զուգահեռ, փաստացի իրականացնում է Արցախի անվտանգության ապահովման գործառույթը: Որպես «Նոյեմբերի 9»-ի ձևաչափի զարգացման տրամաբանություն կարելի է դիտարկել նաև հունվարի 11-ի հերթական եռակողմ հայտարարությունը, որը տարածաշրջանի տնտեսական և ենթակառուցվածքային ապաշրջափակման մեխանիզմի միջոցով զարգացնում է Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստան-Ադրբեջան խնդիրների ամբողջական փաթեթի կարգավորման գործընթացը: Ընդ որում, հարկ է նշել, որ «Նոյեմբերի 9-ի» ձևաչափի ստեղծումից ի վեր Մոսկվան ակտիվորեն ջանքեր է գործադրում հենց այս հարթակում պահելու հայ-ադրբեջանական հիմնախնդրի կարգավորման բոլոր բաղադրիչները՝ հրադադարի վերահսկումից մինչև Հայաստան-Ադրբեջան սահմանագծման, սահմանազատման գործընթացները, Արցախի կարգավիճակի հարցը, մարդասիրական խնդիրներ և այլն՝ դրանով իսկ պահպանելով տարածաշրջանում ներգրավված մրցակիցների հանդեպ ձեռք բերված առավելությունները: Որպես նշվածի հավաստում կարելի է դիտարկել նաև հոկտեմբերի 21-ին «Valdai» *միջազգային բանավիճային* ակումբում ՌԴ նախագահ Վ. Պուտինի հայտարարությունը հայ-ադրբեջանական հակամարտության հետպատերազմյան զարգացումների և օրակարգային խնդիրների վերաբերյալ. «….Այժմ ամենակարևորը սահմանին իրավիճակի վերջնական կարգավորումն է: Եվ այստեղ, իհարկե, առանց Ռուսաստանի մասնակցության, ոչինչ հնարավոր չէ անել: Սակայն այստեղ թերևս մեզ ուրիշ ոչ ոք պետք չէ՝ բացի երկու կողմերից: Ինչո՞ւ: *Կան պարզ պրագմատիկ բաներ՝ քարտեզներ, որոնք ռուսական բանակի գլխավոր շտաբում են*»:

Վերոնշյալի համատեքստում կարելի է փաստել, որ պատերազմի հետևանքով և հետպատերազմյան շրջանում ձեռք բերած առավելությունները Ռուսաստանը ձգտում է կապիտալիզացնելու ինչպես Հայաստանի և Ադրբեջանի հետ երկկողմ հարաբերությունների, այնպես էլ հենց «Նոյեմբերի 9»-ի ձևաչափի հարթությունում՝ երկու տիրույթում էլ փորձելով չեզոքացնել մրցակիցների հավակնությունները: Բայց և այնպես, Մոսկվան սկսել է բախվել մրցակիցների՝ սեփական դիրքերը վերականգնելու փորձերին: Մասնավորապես, հատկապես պաշտոնական Երևանի դիրքորոշման և գործադրվող ջանքերի շնորհիվ արցախյան հակամարտության վերջնական կարգավորման նպատակով աստիճանաբար վերակենդանանում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափը՝ որպես այս հիմնախնդրի հանգուցալուծման հարցով միակ իրավազոր միջազգային կառույց: Բացի նշվածից՝ Ռուսաստանը զգալի բարդությունների է բախվում նաև Ադրբեջանում ու Հայաստանում: Առաջին

Շարլ Միշելը՝ Երևանում

դեպքում հատկապես պատերազմի արդյունքների ազդեցությամբ Մոսկվան էականորեն զիջում է Անկարային: Իսկ Հայաստանում, հատկապես հասարակական շրջանակներում, զգալիորեն անկում է ապրում Ռուսաստանի հեղինակությունը՝ որպես «իր պարտավորություններում թերացած» դաշնակից պետության:

Պատերազմի հետևանքով ունեցած ձեռքբերումները զարգացնելու և հաղթածի էֆեկտը հնարավորինս կապիտալիզացնելու նպատակով **թուրք-ադրբեջանական տանդեմի** կողմից առաջ քաշվեց «**6-յակ**»-ի հարթակը՝ Այսրկովկասի երեք երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և տարածաշրջանին հարևան տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի մասնակցությամբ: Այդ մասին առաջին անգամ 2020 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում տեղի ունեցած զորահանդեսին հաջորդած Ալիև-Էրդողան հանդիպումն ամփոփող ասուլիսից հետո հայտարարել է Թուրքիայի նախագահը: Իր խոսքում քննադատելով ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափի 30-ամյա ապարդյուն գործունեությունը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում՝ Ռ. Թ. Էրդողանը մասնավորապես նշել է. «Եթե Ռուսաստանը, Թուրքիան, Ադրբեջանը, Իրանը, Վրաստանը ընդունեն, համաձայնեն, Հայաստանն էլ այս հարթակում կարող է տեղ գտնել: Այսպիսով «**6-յակ**» հարթակի միջոցով տարածաշրջանային խաղաղություն կհաստատենք... Բավական է, որ դրական քայլ անեն: Մեր դարպասները Հայաստանի առաջ փակելու խնդիր չունենք, քանի որ ուզում ենք խաղաղության աղավնիները լինել, ուզում ենք խաղաղության համար քայլեր անել»:

Փաստացի, այս ձևաչափի առաջմղմամբ Անկարան և Բաքուն նպատակ էին հետապնդում տնտեսական, ապա նաև քաղաքական հիմքով նոր հարթակի ձևավորմամբ ստեղծելու այլընտրանք մինչ այդ Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում առանցքային դերակատարում ունեցած ԵԱՀԿ ՄԽ համանախագահության և «Նոյեմբերի

9»-ի ձևաչափերին, որոնցում ուղղակիորեն բացակայում էր Թուրքիան: Ձևավորվելիք «**6-յակ**» հարթակում ունենալով պարզ մաթեմատիկական տրամաբանությամբ առնվազն 2 ձայն՝ թյուրքական տանդեմը ձգտում է առաջնային դեր ստանձնելու տարածաշրջանում իրադրության գլոբալ վերահսկման առումով: Սակայն այս հարթակի ձևավորումը բավականաչափ խնդրահարույց է՝ հաշվի առնելով դրան ներգրավվելիք որոշ խաղացողների միջև եղած բարդ, անգամ հակամարտային հարաբերությունները: Մասնավորապես, շատ դժվար է պատկերացնել՝ ինչպես միասին կաշխատեն Վրաստանն ու Ռուսաստանը, Իրանն ու Թուրքիան, Հայաստանն ու Ադրբեջանը: Ի դեպ, Վրաստանն արդեն իսկ հայտարարել է այդ հարթակից հրաժարվելու մասին, ինչի հետևանքով թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից «**6-յակ**»-ի հարթակը սահուն կերպով վերաձևակերպվել է «**5-յակ**»-ի հարթակի:

Հարկ է նշել, որ, բացի նշված հարթակից, թյուրքական դաշինքի՝ սեփական դիրքերի համակողմանի ամրապնդմանը միտված մեկ այլ քայլ էր նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ նախատեսվող տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման գործընթացում սեփական՝ միջանցքային տրամաբանությամբ «**Զանգեզուրի միջանցքի**» նախագծի առաջմղումը: Ուշագրավ է, որ ծրագիրը «Թյուրքական միջանցք», «Թյուրքական դարպաս», «Նախիջևանի միջանցք» ձևակերպումներից հետո վերջնականապես ամրագրվեց «Զանգեզուրի միջանցք» ալիևյան անվանումով: Դրա տրամաբանությունը Հայաստանի ինքնիշխանությունից դուրս Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանին ու Թուրքիային կապող ճանապարհային ենթակառուցվածքների ստեղծումն է: Հատկապես մեծ է այս նախագծի ռազմավարական կարևորությունը, քանի որ, մաս կազմելով «Արևելք-Արևմուտք» միջանցքին, այն նաև պետք է ապահովեր նոր՝ ավելի կարճ և իրավական առումով շահավետ ցամաքային այլընտրանքային կապուղի մի կողմից Թուրքիայի և թյուրքախոս երկրների, մյուս կողմից՝ Ադրբեջանի և Նախիջևանի միջև՝ դրանով իսկ էականորեն նվազեցնելով ներկայումս նշված կապի առումով կախվածությունն Իրանից ու Վրաստանից: Սակայն թյուրքական միջանցքային այս նախագծի իրականացումը ևս առայժմ բախվում է էական խոչընդոտների՝ մի կողմից՝ Երևանի ու Թեհրանի բացահայտ ընդդիմության, մյուս կողմից՝ այլ հնարավոր շահագրգիռ դերակատարների բացահայտ կողմ դիրքորոշման բացակայության պատճառով:

Պատերազմի արդյունքներով պայմանավորված՝ տարածաշրջանային գործընթացներից դուրս մնացած **Իրանի** կողմից ևս ակտիվորեն ձեռնարկվում են քայլեր՝ սեփական դիրքերի վերականգնման համար:
Այս տեսանկյունից հատկապես քաղաքական հռետորաբանության և քարոզչական հարթություններում Թեհրանն օգտագործում է մի շարք թեմատիկ թեզեր, ինչպես՝ «տարածաշրջանային երկրների տարածքային ամբողջականությունը որպես կարմիր գիծ», «տարածաշրջանում ահաբեկիչների և Իսրայելի ներկայության բացառում», «բոլոր հարևանների հետ հարաբերություններում բարիդրացիականություն», որոնք տեղ էին գտել նաև ընթացիկ տարվա հունվարին և մայիսին տարածաշրջանային այցերի ընթացքում Իրանի նախկին ԱԳ նախարար Մ. Ջ. Զարիֆի շեշտադրումներում: Մասնավորապես հունվարի 27-ին Զարիֆը Երևանում հայտարարել է. «Իրանը շատ է կարևորում բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը և հարգում է ու հետևում, *որ բոլոր ժողովուրդների կրոնական և այլ իրավունքներ միշտ պաշտպանված լինեն: Մեր կարմիր գիծը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունն է, որի մասին մենք հստակ արտահայտվել ենք*»:

Հարկ է նշել, որ «Զանգեզուրի միջանցքի» թուրք-ադրբեջանական նախագիծը Թեհրանի կողմից գնահատվել է որպես Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ լրջագույն սպառնալիք, որի իրացման մարտահրավերները բազմիցս բարձրաձայնվել են իրանական տարբեր ազդեցիկ շրջանակների տեղեկատվական-քարոզչական ռեսուրսներում և վերլուծական շրջանակների կողմից:

Թեհրանը սեփական դիրքերի վերականգնման ակտիվ փորձեր է անում նաև տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերի առաջմղման միջոցով՝ ընդ որում փորձելով ապահովել մասնակից դերակատարների հնարավորինս լայն համախոհություն: Մասնավորապես, խոսքն իրանական «**Պարսից ծոց-Սև ծով**», իրանահնդկական «**Կով-կասյան**» և հնդկական «**Հյուսիս-Հարավ**» միջանցքների նախագծերի գործարկման մասին է, որոնք նախատեսում են Իրանից դեպի Սև ծով, Ռուսաստան ու Եվրոպա ելքի հնարավորություն Հայաստանի և Վրաստանի տարածքներով՝ նպատակ ունենալով նվազեցնելու ներկայումս նշված ուղղություններով Իրանի կախվածությունը Թուրքիայից ու Ադրբեջանից: Այս խնդիրը Թեհրանի համար օրակարգի առաջնային հարց դարձավ հատկապես ս.թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ադրբեջան-Իրան լարվածության ընթացքում, երբ Բաքուն, ունենալով Անկարայի անվերապահ աջակցությունը, տարանցման խոչընդոտներ ստեղծեց իրանցի վարորդների համար Հայաստանի Գորիս-Կապան ավտոճանապարհի՝ ադրբեջանական վերահսկողության տակ անցած հատվածներում:

Բայց և այնպես, հարկ է հավաստել, որ սեփական դիրքերի վերականգնման փորձերում առայժմ Իրանը ևս հանդիպում է զգալի խոչընդոտների, որոնք ստեղծում է թյուրքական տանդեմը Ադրբեջանում և տարածաշրջանում Իրանի հնարավորությունների, ազդեցության լծակների զրոյացման նպատակային քաղաքականության միջոցով, Արևմուտք-Իրան հակամարտության (սա կողմնակի բացասական ազդեցություն է ունենում տարածաշրջանային գործընթացների վրա՝ Իրանի հետ և դեմ համագործակցու-

թյան առումով), ինչպես նաև Հայաստանի սահմանափակ և խնդրահարույց տրանսպորտային ենթակառուցվածքների պատճառով:

Սեպտեմբերի 25-ին կայացած ՄԱԿ-ի ԳԱ վեհաժողովի ընթացքում Վրաստանի վարչապետ Ի. Ղարիբաշվիլին հայտարարեց տարածաշրջանում «**Խաղաղ հարևանության նախաձեռնության**» մասին, որն առավելապես շրջանառվում է «**Վրացական հարթակ**» պայմանական անվամբ: Այս նախաձեռնությունը ևս բազմանպատակ է: Առարկայական առումով այն միտված է նախ Վրաստանի տարածաշրջանային կշռի բարձրացմանը, որը ևս օբյեկտիվորեն նվազել է 44-օրյա պատերազմում Ադրբեջան-Թուրքիա դաշինքի հաղթանակից հետո: Բովանդակային տեսանկյունից նախաձեռնությունը ենթադրում է Այսրկովկասում «3»-ի, այսինքն՝ տարածաշրջանային 3 երկրների՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի մասնակցությամբ քաղաքական ձևաչափի ստեղծում, որի հիմքում տարածաշրջանի խնդիրները հենց իր շրջանակներում ու ներուժով լուծելու գաղափարն է: Աշխարհաքաղաքական տեսանկյունից «Վրացական հարթակը» իր թիկունքում ունի Վաշինգտոնի և Բրյուսելի աջակցությունը: Նրանք մի կողմից իրենց տարածաշրջանային ռազմավարական գործընկերոջ ձեռամբ փորձում են մեկ այլ ձևաչափի միջոցով ևս անուղղակի մասնակցություն ունենալ Այսրկովկասում, մյուս կողմից՝ հնարավորինս չեզոքացնել տարածաշրջանային մրցակիցների՝ Արևմուտքին դուրս թողնելու փորձերը, որոնք ցայժմ ուրվագծվում են «Նոյեմբերի 9»-ի, «6-յակ»-ի հարթակի առաջմղման ջանքերում: Որպես հարթակի գործադրման հաջողված նախերգանք կարելի է դիտարկել Թբիլիսիի ուղղակի միջնորդությամբ, Բրյուսելի և Վաշինգտոնի աջակցությամբ ս.թ. հունիսի 12-ին Ադրբեջանից 15 հայ գերիների վերադարձի և Երևանի կողմից Բաքվին ականապատված տարածքների որոշ քարտեզների փոխանցման վերաբերյալ պայմանավորվածության իրացումը:

«Վրացական հարթակի» նախագծի կենսագործման նպատակով ս.թ. սեպտեմբերի 29-ին Ղարիբաշվիլին այցելեց Բաքու, հոկտեմբերի 9-ին՝ Երևան: Եվ չնայած 2 մայրաքաղաքներում էլ տրամադրվածությունը դրական է, այնուամենայնիվ, տարածաշրջանում խտացված արտատարածաշրջանային դերակատարների շահերը և դրանց առարկայացմանը միտված նպատակային ջանքերը զգալիորեն նվազեցնում են վրացական նախաձեռնության հնարավորությունները:

Հայտնի արդյունքներով պատերազմի ավարտից հետո նաև մի շարք օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ տարածաշրջանային գործընթացներից զգալիորեն դուրս էին մղվել արևմտյան դերակատարները: Նրանցից երկուսը՝ **ԱՄՆ**-ն ու **Ֆրանսիան**, ուղղակի ներգրավվածություն ունեն նաև Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում՝ որպես **ԵԱՀԿ ՄԽ** համանախագահ երկրներ: Եթե հետպատերազմյան շրջանում նշված դերակատարները որոշակի փորձեր էին կատարում՝ սեփական դիրքերը վերականգնելու նպատակով (օրինակ՝ Հայաստանում ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի դեսպանների բացահայտ նպատակային գործունեությունը), ապա ՄԽ ձևաչափի առումով առանձնակի ակտիվություն չէր նկատվում՝ չհաշված պատերազմից հետո հնչեցված մի քանի հերթապահ արարողակարգային, ոչ առարկայական, հստակ թիրախավորված հայտարարությունները:

Ս.թ. սեպտեմբերի 24-ին ձևաչափի համանախագահների մասնակցությամբ Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի ԳԱ 76-րդ նստաշրջանի շրջանակում, տեղի ունեցավ Հայաստանի արտգործնախարար Ա. Միրզոյանի և Ադրբեջանի արտգործնախարար Ջ. Բայրամովի հանդիպումը, որը նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո ՄԽ համանախագահության մասնակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների առաջին հանդիպումն էր: Հանդիպումից հետո տարածված հաղորդագրության մեջ նշվում էր. *«Միջնորդները ողջունում են արտգործնախարարների առաջին հանդիպումը 2020 թ. նոյեմբերից ի վեր՝ այն գնահատելով որպես տարածաշրջանում անվտանգությանը, կայունությանը և բարգավաճմանը նպաստելու նպատակով ուղիղ երկխոսության միջոցով խաղաղ գործընթացում վերստին ներգրավվելու՝ երկու երկրների վճռականության նշան: ԵԱՀԿ ՄԽ համանախագահները վերահաստատում են ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող կամ դրանից բխող բոլոր մնացյալ խնդիրներին համապարփակ լուծումներ գտնելու նպատակով կողմերի հետ աշխատանքն իրենց տրված մանդատով շարունակելու հանձնառությունը»*: Այս հանդիպումից հետո նաև տեղեկատվություն տարածվեց ԵԱՀԿ ՄԽ համանախագահների՝ Արցախի տարածաշրջան աշխատանքային այցերի վերսկսման մասին, ինչը համաձայնեցվել է նաև Բաքվի ու Երևանի հետ: Վերոնշյալի համատեքստում, սակայն, դեռևս անորոշ է ձևաչափի շրջանակներում բանակցությունների ոլորտային և թեմատիկ շրջանակը: Այս տեսանկյունից Երևանը փորձում է ձևաչափի օրակարգ մղել Արցախի կարգավիճակի հստակեցման հարցը: Մինչդեռ ադրբեջանական կողմը, որը պատերազմից հետո մշտապես ընդգծում է հակամարտության ավարտի մասին, չընդունելով ձևաչափի հետագա նպատակահարմարությունը, վերջին շրջանում փորձում է ՄԽ գործունեությունը սահմանափակել հումանիտար խնդիրների կարգավորմամբ կամ ավելի լայն՝ Հայաստան-Ադրբեջան խաղաղության համաձայնագրի ստորագրման գործընթացով: Միևնույն ժամանակ Բաքվի նախկին՝ ձևաչափը մերժելու դիրքորոշման փոփոխությունը կարելի է պայմանավորել ադրբեջանական կողմի՝ դրանից բխող վտանգների (դիցուք՝ Արցախի միջազգային ճանաչման գործընթացի հնարավորությունը) օբյեկտիվ գնահատմամբ: Այդուհանդերձ, այս ձևաչափի հետագա գործունեությունը զգալիորեն բարդանում է

ինչպես եռանախագահ երկրներից Ռուսաստանի սեփական խաղի հնարավորությունների, Ադրբեջանի՝ ձևական շահագրգռվածության ցուցադրման, այնպես էլ Բաքվի դաշնակից Թուրքիայի կողմից կողմնակի քայլերի նախաձեռնման պատճառով:

Բացի նշվածից՝ հետպատերազմյան ժամանակահատվածում **Արևմուտքը** տարածաշրջանում ակտիվանալու փորձեր է կատարում նաև տնտեսական ոլորտում, հատկապես **ԵՄ**-ի նպատակային քայլերի միջոցով: Այսպես՝ ս.թ. հուլիսի 17-ին Երևանում Եվրոպական խորհրդի նախագահ Շ. Միշելը հայտարարել է. «*Եվրամիությունը ցանկանում է շատ հավատարիմ, ներգրավված, ակտիվ գործընկեր լինել Հայաստանի բարօրության, կայունության և անվտանգության համար: Եվ այս շրջանակներում մենք առիթ ենք ունեցել Եվրամիության ու Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունների մասին խոսելու: Ես մի շատ հզոր ուղերձ եմ Ձեզ հղում. մենք Հայաստանի կողքին ենք և հաստատում ենք ևս մեկ անգամ, աննախադեպ՝ 2,6 միլիարդ եվրոյի ֆինանսական փաթեթ ենք տրամադրելու Հայաստանին, որպեսզի աջակցենք երկրի առաջնահերթությունների իրականացմանը*»: Հատկանշական է, որ Բրյուսելի պահանջով ֆինանսական աջակցության մի զգալի հատված ուղղվելու է հետպատերազմյան շրջանում անվտանգային, տնտեսական և հոգեբանական էական խնդիրների բախված Սյունիքի մարզի խնդիրների լուծմանը և ենթակառուցվածքների բարեկարգմանը:

Հարկ է նշել, որ ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո տարածաշրջանում ստեղծված բարենպաստ իրավիճակից փորձում են հնարավորինս օգտվել մի շարք կողմնակի արտատարածաշրջանային դերակատարներ: Այսպես, օրինակ, **Իսրայելը և Պակիստանը՝** որպես Ադրբեջանի ռազմավարական գործընկերներ, հակամարտության ողջ ընթացքում Բաքվին ցուցաբերած համակողմանի աջակցության դիմաց ստացան նոր հնարավորություններ: Մյուս կողմից՝ Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ռազմավարական գործընկերության հավակնությունները զսպելու համար տարածաշրջանում ակտիվանում է **Հնդկաստանը** (որպես նշվածի հավաստում կարելի է դիտարկել այդ երկրի ԱԳ նախարարի աննախադեպ այցը Հայաստան**)**:

Հայաստանի՝ որպես պատերազմում պարտված և դիրքերն էականորեն զիջած դերակատարի համար ստեղծված իրավիճակը բավականաչափ բարդ է միաժամանակ մի քանի հարթություններում: Գլոբալ դիրքային մրցակցության պայմաններում Երևանի համար զգալի խնդիր է բազմակողմանի արտաքին ճնշումներին դիմակայելը, ընդ որում՝ ինչպես թշնամական տանդեմի, այնպես էլ ռազմավարական դաշնակցի, այլ գործընկերների: Թուրք-Ադրբեջանական դաշինքը, որի գործողությունները հնարավորինս համաձայնեցված են, և կատարված է հստակ դերաբաշխում, հետպատերազմյան շոկային իրավիճակից օգտվելով, ձգտում է Հայաստանից հնարավորինս արագ կորզելու առավելագույն զիջումներ՝ Արցախյան հիմնախնդրի, «Զանգեզուրի միջանցք» նախագծի, Անկարայի և Բաքվի հետ մի շարք այլ խնդրահարույց հարցերի առնչությամբ: Ընդ որում, այդ նպատակով զուգահեռաբար օգտագործվում են բոլոր հնարավոր գործիքները՝ և՛ դիվանագիտական-քաղաքական, և՛ քարոզչական-հոգեբանական, և՛ շանտաժի:

Ռուսաստանը՝ որպես Հայաստանի դաշնակից և հետպատերազմյան գործընթացների առանցքային միջնորդ, օգտվելով Մոսկվայից Երևանի կախվածության զգալի աճի հանգամանքից, Հայաստան-Ադրբեջան հակամարտության գոտում հնարավորինս անցնցում մթնոլորտ ապահովելու խնդիրը երբեմն լուծում է Հայաստանից զիջումներ պահանջելով: Բացի դրանից՝ նկատվում են Հայաստանի արտաքին մանևրների նկատմամբ Ռուսաստանի ակնդետ վերահսկողության և զգայուն արձագանքի միտումներ:

Սեփական դիրքերը վերականգնելու, ամրապնդելու նպատակով Երևանի վրա տարաբնույթ ճնշումներ են գործադրվում նաև այլ գործընկերների՝ Արևմուտքի, Իրանի և այլոց կողմից:

Բայց և այնպես, այս իրավիճակում Հայաստանի համար ստեղծվել են ինչպես մտահոգիչ մարտահրավերներ, այնպես էլ հնարավորություններ: Այս համատեքստում Երևանի համար գերխնդիր է զգուշավոր, հեռատես, հավասարակշռված, ճկուն, ոչ շտապողական վարքի դրսևորումը: Օրակարգային հարց է և՛ ռազմական, և՛ տրանսպորտային ներուժի ու ենթակառուցվածքների հնարավորինս արագ վերականգնումը: Առանցքային է կենսական խնդիրները մեկ ձևաչափի շրջանակներում լուծելու արտաքին փորձերը չեզոքացնելու ուղեգիծը: Որպես վերոնշյալի օրինակ կարելի է դիտարկել Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծման գործում ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափին այլընտրանքի բացակայության ընդգծումը, տարածաշրջանային խնդիրները «Վրացական հարթակում» լուծելու շեշտադրումը և այլն:

Դիվանագիտական հարթությունում կարևոր է մանևրի հնարավորությունների ընդլայնումը՝ հետպատերազմյան տարածաշրջանում ձևավորված նոր ուժային հարաբերակցության պայմաններում փնտրելով համադրելի շահեր, **անգամ պատերազմի ցավալի արդյունքներից հետո սեփական տարածքի և քաղաքական սուբյեկտայնության կարևորության ճիշտ ներկայացման միջոցով**: Իսկ նման համադրելի շահեր վստահաբար կան հարավում՝ հանձինս Իրանի և Թուրքիայի հետ մրցակցող արաբական մի շարք կարևոր դերակատարների, արևելքում՝ հանձինս Հնդկաստանի և Չինաստանի, արևմուտքում՝ հանձինս ավանդական գործընկերների, և բնականաբար հյուսիսում՝ ի դեմս դաշնակից Ռուսաստանի: ■

2020 թ. նոյեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման մասին եռակողմ հայտարարության» իրավաքաղաքական վերլուծություն

Արմեն Մարուքյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լրանում է Արցախյան երրորդ պատերազմի տարելիցը, և անհրաժեշտություն է ծագում օբյեկտիվորեն և համակողմանիորեն վերլուծելու նաև 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված փաստաթուղթը, առավել ևս, որ պարբերաբար լուրեր են շրջանառվում դրանից բխող նոր եռակողմ փաստաթուղթ ստորագրելու վերաբերյալ: Փաստաթղթի ստորագրումից հետո անցած մեկ տարվա ընթացքում դրա մասին, անշուշտ, շատ է խոսվել, տարբեր լրատվամիջոցներում նյութեր են հրատարակվել, սակայն դրանք գերազանցապես եղել են հրապարակախոսական բնույթի, ուստի առաջ է եկել այն գիտական քննարկման առարկա դարձնելու անհրաժեշտությունը:

2020 թ. նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների ստորագրած «Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման մասին եռակողմ հայտարարության» (այսուհետ՝ «Եռակողմ հայտարարություն») բովանդակության համակողմանի ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ այն ոչ միայն և ոչ այնքան «կրակի դադարեցման մասին հայտարարություն» է, այլև պարունակում է ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն առնչվող որոշ էական դրույթներ, որոնք մինչ այդ տեղ էին գտել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից մշակված և բանակցային գործընթացի կողմերին նախկինում ներկայացված փաստաթղթերում: Ինչպես հայտնի է, 1994 թ. մայիսի 9-11-ը Ռուսաստանի միջնորդությամբ ստորագրվեց «Հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև ռազմական գործողությունների լրիվ դադարեցման վերաբերյալ համաձայնագիր»[1], որով հաստատված երկարամյա հրադադարի ռեժիմը խախտվեց Ադրբեջանի կողմից սանձազերծված Արցախյան երկրորդ (2016 թ. ապրիլյան քառօրյա) պատերազմով, որը նույնպես դադարեցվեց Ռուսաստանի միջնորդությամբ: 2016 թ. մայիսի 16-ին Վիեննայում Մինսկի խմբի ԵԱՀԿ համանախագահների և նույն տարում՝ հունիսի 20-ին, Պետերբուրգում Ռուսաստանի նախագահի հետ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հանդիպումների ժամանակ ձեռք բերվեցին հրադադարի ռեժիմի խախտման հետաքննության մեխանիզմների ներդրման և ԵԱՀԿ մոնիթորինգային առաքելության ընդլայնման վերաբերյալ պայմանավորվածություններ, որոնք, սակայն, Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման հետևանքով չիրականացվեցին:

Արդեն Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ՝ 2020 թ. հոկտեմբերի 10-ին, Մոսկվայում ստորագրվեց

Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի արտգործնախարարների հայտարարությունը[2], սակայն Ադրբեջանը խախտեց ձեռք բերված պայմանավորվածությունները՝ շարունակելով Արցախի դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմը: Հետագայում Ադրբեջանը խախտեց նաև հոկտեմբերի 26-ին Վաշինգտոնում և հոկտեմբերի 30-ին Ժնևում կրակի դադարեցման վերաբերյալ ձեռք բերված նոր պայմանավորվածությունները՝ կրկին շարունակելով ռազմական գործողությունները: Շարունակելով ռազմական ագրեսիան ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության դեմ՝ նոյեմբերի 9-ին ադրբեջանական հակաօդային պաշտպանության ուժերը Նախիջևանի կողմից Հայաստանի օդային տարածքում խոցեցին ՌԴ ՋՈՒ 102-րդ ռազմաբազայի ռազմական ուղղաթիռը, ինչից հետո Ադրբեջանի նախագահը ստիպված եղավ ներողություն խնդրել և հայտարարել պատճառված վնասի փոխհատուցման պատրաստակամության մասին[3]: Դրանից անմիջապես հետո՝ նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը, երեք պետությունների ղեկավարների բանակցությունների արդյունքում ստորագրվեց «Եռակողմ հայտարարությունը»[4], որով ադրբեջանա-թուրքական ահաբեկչական տանդեմի կողմից Արցախի դեմ սանձազերծված ագրեսիան դադարեցվեց: Պետք է արձանագրել, որ 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված «Եռակողմ հայտարարությունը» ակնհայտորեն հակասում է ավելի վաղ՝ 2020 թ. հոկտեմբերի 10-ին, Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների միջև ստորագրված հայտարարությանը, որի 4-րդ կետով ամրագրվում էր ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի պահպանումը: Հակառակ դրան՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով համանախագահ երկրնե-

րից միայն Ռուսաստանի նախաձեռնությամբ հայկական կողմին պարտադրվեց ստորագրել գերազանցապես ադրբեջանական կողմի շահերն արտահայտող մի փաստաթուղթ, որով, փաստորեն, շրջանցվեց շուրջ երեք տասնամյակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցությունների՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջազգային ձևաչափը:

Ինչպես հայտնի է, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները, այդ թվում՝ Ռուսաստանը, ամենաբարձր մակարդակով պարբերաբար հայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական լուծում ունենալ չի կարող[5]: «Եռակողմ հայտարարության» ստորագրումը նախաձեռնելով ու դրա կողմ հանդիսանալով՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր՝ Ռուսաստանը փաստացի շրջանցեց 1975 թ. հելսինկյան «Եզրափակիչ ակտի»՝ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման արգելքի սկզբունքը, որն ամրագրված է նաև ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման՝ համանախագահների մշակած «Մադրիդյան սկզբունքներում»[6], և այդպիսով ոչ միայն ճանաչեց, այլև օրինականացրեց Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետևանքները՝ վերջինիս կողմից Հադրութի շրջանի և Շուշիի շրջանի մի մասի բռնազավթումը:

Ի տարբերություն 1994 թ. ռազմական գործողությունների դադարեցման համաձայնագրի և կրակի դադարեցման մասին երեք արտգործնախարարների հայտարարության՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարության» 9-ը հոդվածներից միայն 1-ին, 5-րդ և 8-րդ հոդվածներն են համապատասխանում կրակի դադարեցման ռեժիմի պահպանման չափանիշներին, իսկ այդ փաստաթղթի հիմնական մասը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հնարավոր կարգավորման խնդիրներին:

Հարկ է նշել, որ Արցախյան առաջին պատերազմի ժամանակ նույն Ռուսաստանի միջնորդությամբ հակամարտող կողմերի միջև կրակի դադարեցման մասին 1994 թ. համաձայնագիրն առանց ավելորդ շտապողականության ստորագրվել է երեք օրվա ընթացքում. մայիսի 9-ին Բաքվում՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարի, մայիսի 10-ին Երևանում՝ Հայաստանի պաշտպանության նախարարի և մայիսի 11-ին Ստեփանակերտում՝ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի հրամանատարի կողմից[7]: Հակառակ դրան՝ նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարության» հապճեպ ստորագրումը պայմանավորված էր ոչ այնքան ռազմի դաշտում զինծառայողների և թիկունքում խաղաղ բնակչության կյանքերը փրկելու մտահոգությամբ, որքան անգամ հայկական կողմի համար ամենածանր պայմաններով ռուս խաղաղապահների մուտքն Արցախի տարածք հնարավորինս արագ ապահովելու հարցում Ադրբեջանի համաձայնությունը ստանալու ձգտումով: «Եռակողմ հայտարարության» ստորագրմամբ Արցախի և Հայաստանի Հանրապետություններին պարտադրվեցին կրակի դադարեցման ծայրահեղ ծանր պայմաններ՝ գոյաբանական նոր սպառնալիքներ ստեղծելով Արցախի և Հայաստանի բնակչության համար, որոնք առաջացել էին թվաքանակով գերազանցող թուրք-ադրբեջանական տանդեմի և Թուրքիայի կողմից հակամարտության գոտի տեղափոխված ահաբեկչական խմբավորումների ագրեսիայի հետևանքով:

«Եռակողմ հայտարարությունը» ոչ միայն իր բովանդակությամբ և կարգավորող հարցերի շրջանակով, այլև իրավական տեսանկյունից համապատասխանում է ոչ թե «հայտարարության», այլ միջազգային պայմանագրի կարգավիճակին: 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 2-րդ հոդվածով «միջազգային պայմանագիր» հասկացությունը սահմանվում է որպես «պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն՝ անկախ նրանից, թե այդ համաձայնությունը ներառված է մեկ կամ երկու կամ միմյանց հետ փոխկապակցված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև **անկախ դրա կոնկրետ անվանումից** (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»[8]: Ինչպես հայտնի է, «Եռակողմ հայտարարությունը» կազմվել է գրավոր և ստորագրվել է երեք պետությունների ղեկավարների կողմից՝ այդ երկրների համար սահմանելով հստակ պարտավորություններ, ուստի միջազգային իրավունքի տեսանկյունից տվյալ փաստաթուղթը միջազգային պայմանագիր է, թեպետ փաստաթուղթը մշակող և ստորագրող անձինք այն միտումնավոր անվանել են «հայտարարություն»՝ այդ կերպ փորձելով շրջանցել նման փաստաթղթեր օրինական ուժի մեջ մտցնելու համար պարտադիր վավերացման գործընթացը: Այսպիսով՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին երեք երկրների ղեկավարները, ըստ էության, ստորագրել են միջազգային պայմանագիր, որը չի վավերացվել այդ երկրների օրենսդրական մարմինների կողմից և հետևաբար չի մտել օրինական ուժի մեջ, սակայն, չնայած դրան, փաստաթղթի դրույթները սկսել են գործադրվել:

Արցախյան երրորդ պատերազմի ավարտի վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, անկախ միջազգայնորեն ճանաչված լինել-չլինելու հանգամանքից, պետք է ստորագրվեր պատերազմի կողմ հանդիսացող Արցախի Հանրապետության, այլ

ոչ թե պատերազմող կողմ չհանդիսացող Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի կողմից: Համեմատության համար հիշեցնենք, որ Արցախյան առաջին պատերազմի ավարտն ազդարարող 1994 թ. հրադադարի պայմանագիրը ստորագրվել է Արցախի ներկայացուցչի մասնակցությամբ և Ադրբեջանի կողմից որոշ խախտումներով գործել է շուրջ երեք տասնամյակ: Առանց Արցախի ներկայացուցչի մասնակցության «Եռակողմ հայտարարությունը» ստորագրած Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչն ակնհայտորեն չարաշահել է իր իրավասությունները, քանզի նա ստորագրել է մի փաստաթուղթ, որով նախատեսվում էր ոչ միայն կրակի դադարեցում, այլ նաև Արցախի Հանրապետության տարածքների՝ Քարվաճառի (Քելբաջար), Բերձորի (Լաչին) և Ակնայի (Աղդամ) շրջանների՝ Ադրբեջանի վերահսկողությանը փոխանցում, ինչպես նաև ռուս խաղաղապահների տեղակայում այն տարածքներում, որոնք գտնվում են Արցախի Հանրապետության ինքնիշխանության ներքո, առանց վերջինիս կողմից պատշաճ գրավոր լիազորություն ստանալու:

Այս ամենը միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի կոպիտ խախտում է, քանզի, Վիեննայի կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն, միջազգային պայմանագիրը երրորդ պետության համար կարող է պարտավորություններ առաջացնել միայն այն դեպքում, երբ վերջինս գրավոր ձևով ստանձնում է տվյալ պարտավորությունը: Տվյալ դեպքում երրորդ կողմը Արցախի Հանրապետությունն էր, որը որևէ կերպ նման իրավասություն չի ստանձնել, ինչից ելնելով՝ կարելի է պնդել, որ, համաձայն նույն կոնվենցիայի 34-րդ հոդվածի, Հայաստանի ներկայացուցչի կողմից ստորագրված «Եռակողմ հայտարարությունը» միջազգային իրավունքի տեսանկյունից Արցախի Հանրապետության համար որևէ պարտավորություն չի առաջացնում[9]:

Այս տեսանկյունից «Եռակողմ հայտարարությունը» հիշեցնում է Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին ստորագրված «Բարեկամության և եղբայրության մասին» Մոսկվայի անօրինական պայմանագիրը, երբ միջազգային պայմանագրային իրավունքի կոպիտ խախտումներով, առանց Խորհրդային Հայաստանի ներկայացուցչի մասնակցության և համաձայնության, Կարսի մարզը և Սուրմալուի գավառը հանձնվեցին Թուրքիային, իսկ Նախիջևանը՝ Ադրբեջանին[10], ինչպես նաև առանց քվեարկության ընդունված՝ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական որոշումը, որով Ղարաբաղը փոխանցվեց Ադրբեջանին[11]՝ բացարձակապես անտեսելով ինչպես Նախիջևանի ու Ղարաբաղի բնակչության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տեսակետը:

Ինչպես ընթացակարգային նորմերի, այնպես էլ փաստաթղթի՝ օրինական ուժի մեջ մտնելու կարգի խախտումից բացի՝ միջազգային պայմանագիր հանդիսացող «Եռակողմ հայտարարությունը» ստորագրվել է նաև միջազգային պայմանագրային իրավունքի մի շարք հիմնարար նորմերի և պահանջների խախտումներով, ինչը հիմք է տալիս խոսելու տվյալ փաստաթղթի հակահիրավական լինելու մասին:

Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը համարվում է անվավեր, եթե պետության կողմից դրա ստորագրումը ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի հետևանք է[12]: «Եռակողմ հայտարարությունը» Հայաստանի ներկայացուցչի կողմից ստորագրվել է այնպիսի պայմաններում, երբ ագրեսոր կողմը՝ ի դեմս Ադրբեջանի, փաստաթուղթը չստորագրելու դեպքում սպառնում էր շարունակել ռազմական ագրեսիան Արցախի դեմ, ինչից հետևում է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից ստորագրված փաստաթուղթը պարզապես օրինական համարվել չի կարող: Ավելին՝ նույն կոնվենցիայի 51-րդ հոդվածում նշվում է, որ եթե պետության համար պարտադիր ուժ ունեցող համաձայնագիրը ստորագրվել է նրա ներկայացուցչի նկատմամբ հարկադրանքի գործողությունների և սպառնալիքի պայմաններում, ապա այն իրավաբանական ուժ ունենալ չի կարող[13]: Ոչ միայն Արցախի Հանրապետության, այլև Հայաստանի Հանրապետության ու ողջ հայ ժողովրդի համար այնպիսի բախտորոշ ու ճակատագրական փաստաթղթի՝ «Եռակողմ հայտարարության» ստորագրման տեսակոնֆերանսի ժամանակ Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների կողքին Հայաստանի ներկայացուցչի բացակայությունը վկայում է Վիեննայի կոնվենցիայի հիշյալ հոդվածի առերևույթ խախտման մասին: Ի դեպ, Ադրբեջանի նախագահն իր երկրի բնակչությանն ուղղված տեսաուղերձում, անդրադառնալով փաստաթղթի ստորագրման տեսակոնֆերանսին Հայաստանի ներկայացուցչի բացակայությանը, հայտարարեց, որ նա այն կստորագրի երկաթյա բռունցքի տակ[14]:

2021 թ. հունվարի 11-ին, «Եռակողմ հայտարարության» 9-րդ կետի վրա հիմնվելով, Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարները ստորագրեցին երկրորդ հայտարարությունը: Վիեննայի կոնվենցիայի 2-րդ հոդվածում արձանագրված է, որ միջազգային պայմանագիրը կարող է բաղկացած լինել մեկ, երկու կամ միմյանց հետ փոխկապակցված մի քանի փաստաթղթերից[15]: Քանի որ հունվարի 11-ին ստորագրված երկրորդ հայտարարության ստորագրման հիմնական նպատակն է հռչակված նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարության» 9-րդ հոդվածի դրույթների կենսագործումը՝ տարածաշրջանի բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակումը, ուստի միանգամայն ակնհայտ է, որ դրանք միմյանց փոխլրացնող և միևնույն միջազգային պայմանագրի փոխկապակցված մասերը կազմող փաստաթղթեր են: Այսպիսով՝ հունվարի 11-ի հայտարարությունն ընդամենը հանդիսանում է «Եռակողմ հայտարարության», ըստ էության՝ միջազգային պայմանագրի 9-րդ հոդվածի հավելվածը: Ասվածից հետևում է, որ հունվարի 11-ի հայտարարությունը նույնպես միջազգային պայմանագրային իրավունքի տեսանկյունից հակահիրավական փաստաթուղթ է:

«Եռակողմ հայտարարության» 9-րդ հոդվածով, ինչպես նաև 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ երկրորդ հայտարարության դրույթներով Նախիջևանի ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածքով Ադրբեջանին հաղորդակցության ուղիների տրամադրումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության որոշ տարածքների նկատմամբ վերջինիս ինքնիշխանության փոփոխություններ, առավել ևս, որ Ադրբեջանը Նախիջևանին միացնող հաղորդակցության ուղիները, ըստ «Եռակողմ հայտարարության» 9-րդ հոդվածի, հսկվելու են ռուս սահմանապահների կողմից: Այս առումով պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության տարածքային ինքնիշխանության ցանկացած փոփոխության հարցը կարգավորվում է «Անկախության հռչակագրի» 2-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է, որի ողջ տարածքում գործում են ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները[16], ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ Հայաստանի տարածքային փոփոխություններին վերաբերող հարցերը որոշվում են հանրաքվեով: Ակնհայտ է, որ «Եռակողմ հայտարարության» 9-րդ հոդվածը և հունվարի 11-ի եռակողմ երկրորդ հայտարարությունը հակասում են «Անկախության հռչակագրի» 2-րդ հոդվածին և ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասին, որոնց համաձայն՝ Հայաստանի տարածքային ինքնիշխանության փոփոխությունները կարող են կատարվել միայն Հայաստանի ժողովրդի կամարտահայտության (հանրաքվեների) միջոցով[17]: Առանց Հայաստանի ժողովրդի անցկացրած հանրաքվեի համապատասխան արդյունքների՝ պետության տարածքային ինքնիշխանության փոփոխություններին վերաբերող հարցերում Հայաստանի ներկայացուցիչը միայնակ որոշում կայացնելու իրավասություն չուներ:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Հայաստանի կողմից 2020 թ. նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարության»* և 2021 թ. հունվարի 11-ի երկրորդ հայտարարության ստորագրողի կողմից այս տեսանկյունից տեղի է ունեցել պաշտոնական դիրքի ակնհայտ չարաշահում: Քանի որ այս հակաիրավական փաստաթղթերի դրույթների իրագործման դեպքում խախտվելու է ՀՀ օրենսդրությունը, ուստի տվյալ փաստաթղթերի օրինականությունը կարող է դատական կարգով վիճարկվել ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային դատական ատյաններում:

Ամփոփելով նշենք, որ ինչպես 2020 թ. նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարությունը», այնպես էլ 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ հայտարարությունը՝ որպես միջազգային պայմանագրի երկու մասեր, Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից ստորագրվել են միջազգային պայմանագրային իրավունքի հիմնարար նորմերի մի շարք կոպիտ խախտումներով, ուստի դրանք օրինական համարվել չեն կարող: Ելնելով վերոնշյալից՝ և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալուց հետո Արցախի Հանրապետությունը միջազգային իրավունքի



Ռուս խաղաղապահները Արցախում

համապատասխան նորմերի և ընթացակարգերի հիման վրա կարող են վիճարկել հիշյալ փաստաթղթերի օրինականությունը միջազգային դատական ատյաններում և վերականգնել հայկական երկու պետությունների խախտված իրավունքներն ու շահերը:

Հարկ է նշել, որ միջազգային պայմանագրային իրավունքի կոպիտ խախտումներով կնքված և ապօրինաբար ուժի մեջ մտած տվյալ միջազգային պայմանագրով (որը բաղկացած է «Եռակողմ հայտարարագրից» և հունվարի 11-ի հայտարարությունից) ստանձնած պարտավորությունները հայկական կողմը, այդուհանդերձ, հետևողականորեն կատարում է, ինչի հետևանքով անվտանգային նոր լրջագույն սպառնալիքներ են առաջացել ոչ միայն Արցախի Հանրապետության, այլև Հայաստանի Հանրապետության համար: Փաստաթղթի մյուս կողմ հանդիսացող Ադրբեջանը, սակայն, արհեստականորեն ձգձգում և ամեն կերպ խուսափում է իր պարտավորությունների կատարումից, և այս առումով անհրաժեշտություն է առաջանում բովանդակային վերլուծության ենթարկելու տվյալ փաստաթղթերի հոդվածներով կողմերի համար սահմանված պարտավորությունները:

«Եռակողմ հայտարարության». 1-ին հոդվածում հստակորեն նշված է, որ 2020 թ. նոյեմբերի 10-ից Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բոլոր ռազմական գործողությունները ամբողջովին դադարեցվում են, և կողմերը մնում են տվյալ պահին իրենց զբաղեցրած դիրքերում: Պետք է արձանագրել, որ տվյալ պահի դրությամբ Ադրբեջանի կողմից բռնագրավված՝ Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի վերջին երկու գյուղերը՝ Հին Թաղերը և Խծաբերդը, գտնվում էին հայկական զինված ուժերի վերահսկողության տակ, և նույն փաստաթղթի 4-րդ հոդվածի համաձայն՝ այդ դիրքերից նրանք պետք է դուրս բերվեին միայն այնտեղ ռուս խաղաղապահների տեղակայումից հետո[18]: Օգտվելով ռուս խաղաղապահների հրամանատարության բացթողումից, որը տվյալ տարածքում դեռևս իր դիտակետերը չէր տեղակայել, և կոպտորեն խախտելով «Եռակողմ հայտարարության» 1-ին հոդվածի պահանջն առ այն, որ բոլոր ռազմական գործողությունները դադարեցվում են, և կողմերը մնում են իրենց զբաղեցրած դիրքերում,

ադրբեջանական զինված ուժերը դեկտեմբերի 12-ին այդ գյուղերի ուղղությամբ հարձակում իրականացրին, ինչի հետևանքով նաև գերեվարվեցին այնտեղ տեղակայված տասնյակ հայ զինծառայողներ: Հին Թաղեր և Խծաբերդ գյուղերում տեղի ունեցած միջադեպի պատճառների բացահայտման նպատակով այնտեղ ուշացումով ռուս խաղաղապահներ ուղարկվեցին, և թվում էր, որ նշված գյուղերն ի վերջո կընդգրկվեն նրանց պատասխանատվության գոտու մեջ, սակայն, հակառակ եռակողմ փաստաթղթի դրույթների և առանց պատշաճ հիմնավորման, դրանք թողնվեցին ադրբեջանական կողմի վերահսկողության ներքո:

Ռազմական գործողությունների ավարտի պահին հայկական ռազմական ուժերի վերահսկողության տակ էր գտնվում նաև Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզին հարակից Արցախի Հանրապետության Կովսականի (Զանգելան) և Սանասարի (Կուբաթլու) շրջանների հատվածը՝ մոտ 11 կմ լայնությամբ շերտով: «Եռակողմ հայտարարության» տեքստում այդ շրջանների տարածքներն Ադրբեջանի վերահսկողությանը հանձնելու մասին բացարձակապես ոչինչ չէր ասվում, ինչը, ըստ ամենայնի, պայմանավորված էր նրանով, որ, չափազանց ոգևորված լինելով Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի և Շուշիի շրջանի շուրջ 40 %-ի (ներառյալ Շուշի քաղաքը) օկուպացմամբ, որոնք Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կողմերի և եռանախագահների միջև համաձայնեցված որևէ փաստաթղթով («Մադրիդյան սկզբունքներ», Կազանի փաստաթուղթ, «Լավրովի պլան») Ադրբեջանի վերահսկողության տակ չպետք է լինեին, ագրեսոր պետության նախագահը, ձգտելով հայկական կողմին հապշտապ պարտադրելու այդ տարածքների զիջումը, թերևս ժամանակին վրիպել էր նաև այս շրջանների հանձնման մասին դրույթը փաստաթղթի տեքստում ներառելու պահանջի հարցում: Ադրբեջանական կողմն այդ պահանջը բարձրացրեց փաստաթղթի ստորագրումից հետո, երբ դրա դրույթներն արդեն սկսել էին կատարվել, ինչի հետևանքով, ինչ-ինչ անհասկանալի «բանավոր պայմանավորվածություններից»* ելնելով, դեկտեմբերի 18-ին հայկական ուժերին հրաման տրվեց հետ քաշվելու իրենց զբաղեցրած դիրքերից և վերադիրքավորվելու Սյունիքի մարզի սահմաններում, ինչի հետևանքով մարզի մի շարք գյուղեր ու քաղաքներ միանգամից վերածվեցին սահմանային բնակավայրերի՝ ստեղծելով անվտանգային լրջագույն սպառնալիքներ:

Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Հին Թաղեր և Խծաբերդ գյուղերի, ինչպես նաև Բերձորի շրջանի Կովսականի և Սանասարի տարածքներն Ադրբեջանի վերահսկողությանը փոխանցելը, որոնք կրակի դադարեցման հաստատման պահին գտնվում էին հայկական ուժերի վերահսկողության տակ, երեք պետությունների ընդունած «Եռակողմ հայտարարության» 1-ին հոդվածի կոպիտ խախտում էր, ինչն անկասկած չէր կարող տեղի ունենալ առանց միջնորդ պետության՝ Ռուսաստանի գիտության և համաձայնության:

«Եռակողմ հայտարարության» հոդվածներով նախատեսվում էր Ադրբեջանին հանձնել 44-օրյա պատերազմից հետո հայկական ուժերի հսկողության տակ մնացած Արցախի Հանրապետության Քարվաճառի (Քելբաջար), Քաշաթաղի (Լաչին) և Ակնայի (Աղդամ) շրջանները: Հայկական երկու հանրապետությունների համար նախընտրելի էր, որ իրենց իրար կապող Քարվաճառի և Քաշաթաղի շրջանները թշնամու հսկողության տակ անցնեին գոնե վերջին հերթին, սակայն, փաստաթղթի 6-րդ հոդվածի համաձայն, մինչև դեկտեմբերի 15-ը և մինչև դեկտեմբերի 20-ը պահանջվում էր նախ Ադրբեջանի վերահսկողությանը հանձնել հենց Քելբաջարի և Լաչինի շրջանները և միայն դրանից հետո՝ մինչև դեկտեմբերի 1-ը՝ Աղդամի շրջանը (հոդված 2): Բացի այդ՝ 6-րդ հոդվածում զետեղվել էր հայկական կողմի համար վնասակար և անընդունելի ձևակերպում առ այն, որ **«Հայաստանի Հանրապետությունը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը պետք է Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնի Քելբաջարի շրջանը, իսկ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի շրջանը** (ընդգծումը մերն է – Ա. Մ.)[19]»: Այս կապակցությամբ պետք է նշել, որ հայկական կողմը պետք է հասներ նրան, որ տվյալ հոդվածում արձանագրվեր, որ նշված շրջանները Ադրբեջանի վերահսկողությանը ոչ թե «վերադարձվում», այլ «փոխանցվում» էին, ավելին՝ դրանք փոխանցվում էին ոչ թե Հայաստանի, այլ Արցախի Հանրապետության կողմից, որի ինքնիշխանության տակ գտնվում էին մինչև պատերազմի սկիզբը: Փաստաթղթի տեքստում նման հակահայկական ձևակերպումների առկայությամբ անուղղակիորեն «հաստատվում է» ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից տասնամյակներով տարածվող այն կեղծ թեզը, թե այդ տարածքներն օկուպացված էին Հայաստանի Հանրապետության կողմից և վերջապես վերադարձվում են իրենց «օրինական» տիրոջը:

Ի դեպ, «Եռակողմ հայտարարության» 2-րդ և 6-րդ հոդվածների՝ Արցախի Հանրապետության Քարվաճառի, Քաշաթաղի և Ակնայի շրջաններն Ադրբեջանին փոխանցելու դրույթները հակասում են նույն փաստաթղթի 1-ին հոդվածի պահանջին, որի համաձայն՝ պատերազմող կողմերը պետք է մնային տվյալ պահին իրենց զբաղեցրած դիրքերում, իսկ պատերազմի ավարտի պահին նշված շրջանները գտնվում էին հայկական ուժերի հսկողության ներքո, հետևաբար «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բոլոր ռազմական գործողություններն ամբողջովին դադարեցնելու մասին» հայտարարության տրամաբանությամբ դրանք հակառակորդին չպետք է հանձնվեին: «Եռակողմ հայտարարության» հենց 1-ին հոդվածի պահանջին նույն փաստաթղթի 2-րդ և 6-րդ հոդվածների դրույթների հակասելը ևս մեկ անգամ հաստատում է այն, որ 2020 թ. նոյեմբերի 9-ին երեք երկրների ղեկավարների կողմից ստորագրված փաստաթուղթը ոչ թե կրակի դադարեցման մասին

հայտարարություն է, այլ հակամարտության կարգավորման դրույթներ պարունակող միջազգային պայմանագիր, որում գերազանցապես զետեղված են Կազանի փաստաթղթի՝ Ադրբեջանի շահերից բխող դրույթները:

«Եռակողմ հայտարարության» մեջ բացարձակապես անտեսվել է Ադրբեջանի կողմից բռնազավթված ԼՂԻՄ-ի Հադրութի, Մարտունու և Շուշիի շրջանները (ներառյալ Շուշի քաղաքը) հայկական կողմին վերադարձնելու հարցը: Մինչդեռ հայկական կողմը կարող էր առաջնորդվել «տարածքներ տարածքների դիմաց» սկզբունքով և հակընդդեմ պահանջ ներկայացնել վերջին պատերազմի ընթացքում Հադրութի և Շուշիի, ինչպես նաև ավելի վաղ Ադրբեջանի կողմից բռնազավթված Մարտակերտի, Մարտունու շրջանների տարածքներն ու Շահումյանի շրջանը վերադարձնելու վերաբերյալ[20]՝ հիմք ունենալով գոնե ԼՂԻՄ-ի տարածքային ամբողջականության վերականգնման առաջնահերթությունը, ինչի շուրջ Մինսկի խմբի շրջանակներում մշտապես եղել է կոնսենսուս:

Պատերազմի ավարտից հետո Լեռնային Ղարաբաղում կրակի և ռազմական գործողությունների դադարեցման, ինչպես նաև Արցախի խաղաղ բնակչության անվտանգության ապահովման իրական երաշխիքը շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքով ռուս խաղաղապահ ուժերի տեղակայումն է: Փաստաթղթի 3-րդ հոդվածի համաձայն՝ ռուսական խաղաղապահ ուժերը կազմում էին հրաձգային զենքով 1960 զինծառայող՝ 90 զրահամեքենաներով, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկայով, իսկ 4-րդ հոդվածով Արցախում ռուս խաղաղապահների տեղակայումը նախատեսված է 5 տարով՝ հերթական 5 տարի երկարաձգմամբ, եթե կողմերից որևէ մեկը ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ չծանուցի տվյալ դրույթի գործառության դադարեցման մասին[21]:

Փաստաթղթի տեքստում Լեռնային Ղարաբաղում տեղակայվող ռուս խաղաղապահների թվաքանակի, տեխնիկայի, ինչպես նաև ժամկետների ճշգրտման հարցերով շահագրգռված էր ոչ միայն Ադրբեջանը, այլև Թուրքիան, որը պատերազմի ընթացքում բացահայտ համակողմանի օգնություն (ռազմատեխնիկական, ֆինանսական, նյութական, տեղեկատվական-դիվանագիտական և այլն) ցուցաբերեց Ադրբեջանին: Այդուհանդերձ, Թուրքիան պատերազմի ելքից դժգոհ էր մնացել, քանի որ, հակառակ իր գործադրած հսկայական ջանքերին, տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության փոփոխությունից վերջին պահին առավելապես օգտվեց Ռուսաստանը, որը «Եռակողմ հայտարարության» միջոցով կարողացավ հակամարտության գոտում իր ռազմական ներկայության «իրավունքը» ստանալ: Պատահական չէ, որ փաստաթղթի ստորագրումից անմիջապես հետո Թուրքիան փորձեց Ռուսաստանից կորզել խաղաղապահ կենտրոնի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն:

«Եռակողմ հայտարարության» 5-րդ հոդվածով խաղաղապահ կենտրոնի ստեղծում է նախատեսվել, որը պետք է իրականացնի կրակի և ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ հակամարտող կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների պահպանման մշտադիտարկում: Քանի որ Լեռնային Ղարաբաղում տեղակայվելու էին ռուս խաղաղապահներ, ակնհայտ է, որ խաղաղապահ կենտրոնը նույնպես լինելու էր ռուսական, առավել ևս, որ այդ կենտրոնի միջազգային լինելու մասին փաստաթղթում ոչ մի խոսք չկա: Փաստաթղթի ստորագրումից մեկ օր անց, սակայն, Ռուսաստանի և Թուրքիայի պաշտպանության նախարարները հուշագիր ստորագրեցին «Համատեղ մշտադիտարկման կենտրոնի ստեղծման մասին», որի նպատակն էր վերահսկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի և ռազմական գործողությունների դադարեցման ռեժիմը: Ռուս-թուրքական համատեղ կենտրոնը զբաղվելու էր կրակի և ռազմական գործողությունների դադարեցման ռեժիմի պահպանման շուրջ կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների խախտման գործողությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, ընդհանրացման և ստուգման աշխատանքներով և քննության էր ենթարկելու նկատված խախտումներին վերաբերող բողոքներն ու հարցերը[22]:

Անշուշտ, տվյալ որոշումը բխում էր Ադրբեջանի, բայց ոչ երբեք հայկական կողմի շահերից, որը, ի դեպ, Ռուսաստանին գրավոր լիազորություն չէր տվել կրակի դադարեցման ռեժիմին հետևելու համար նախատեսված խաղաղապահ կենտրոնի ձևաչափի ընդլայնման վերաբերյալ, առավել ևս, որ դրան մասնակցելու էին Թուրքիայի այն սպաները, որոնք Ադրբեջանի կողմից անմիջականորեն ներգրավված էին Արցախի դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմում և դրա ընթացքում հայ բնակչության դեմ իրականացված հանցավոր գործողություններում:

«Եռակողմ հայտարարության» 6-րդ հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետության հետ Լեռնային Ղարաբաղի կապն ապահովող Լաչինի միջանցքին, որի լայնությունը, որը, կազանյան փաստաթղթի համաձայն, պետք է կազմեր 15 կմ[23], նվազեցվել է՝ հասցվելով 5 կմ-ի՝ ներառելով Արցախի Հանրապետության Բերձոր քաղաքը, Աղավնո և Սուս գյուղերը: Սակայն, հենց այդ նույն հոդվածով, մոտակա երեք տարիների ընթացքում նախատեսվում է Շուշին շրջանցող նոր ճանապարհի կառուցում, այսինքն՝ Լաչինի նոր միջանցքի ստեղծում՝ ռուս խաղաղապահների վերատեղակայմամբ: Նշված բնակավայրերից հայկական բնակչության հերթական տեղահանությունը կանխելու նպատակով հայկական կողմը, հիմնվելով փաստաթղթի տեքստում տեղ գտած «կողմերի համաձայնությամբ» ձևակերպման վրա, չպետք է թույլ տա Լաչինի միջանցքի երթուղու ամբողջական փոփոխությունը, այլ պետք է փորձի հասնել նրան, որ փոփոխության ենթարկվի Շուշի-Ստեփանակերտ ճանապարհի՝ միայն Շուշիի շրջանցումն ապահովող վերջին հատվածը:

Փաստաթղթի 7-րդ հոդվածի համաձայն՝ ներքին

տեղահանված անձանց և փախստականների վերադարձը պետք է իրականացվեր փախստականների գծով ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարի հսկողության ներքո, սակայն, ցավոք, այդ գործընթացն իրականացվեց բացառապես ռուս խաղաղապահների ուղեկցությամբ և անվտանգության ապահովմամբ: Ակնհայտ է, որ ՄԱԿ-ը և նրա ենթակայության տակ գործող մյուս միջազգային կառույցները չցանկացան տրամադրել փախստականների վերադարձի անվտանգության միջազգային երաշխիքները այն պարզ պատճառով, որ նրանց անվտանգ վերադարձն իրենց բնակավայրեր ապահովվում է միայն Ռուսաստանի կողմից:

Հայտարարության 8-րդ հոդվածը, որով նախատեսվում է զոհվածների մարմինների, ռազմագերիների, պատանդների և պահվող անձանց փոխանակումը, ձևակերպված է բավական հակիրճ և անորոշ ձևով: Այս հոդվածի առնչությամբ տեղին է նշել, որ եթե հայկական կողմը նախատեսված ժամկետներում Ադրբեջանի վերահսկողությանը փոխանցեց Քարվաճառի, Քաշաթաղի և Ակնայի շրջանները, ապա ադրբեջանական կողմը հայ ռազմագերիներին և այլ պահվող անձանց վերադարձնելու հարցում նման ճշտապահություն չի ցուցաբերում: Պատճառն այն է, որ եթե շրջանների փոխանցմանը վերաբերող 2-րդ և 6-րդ հոդվածներում ադրբեջանական կողմին հաջողվեց հասնել կոնկրետ ժամկետների ամրագրման, ապա զոհվածների մարմինները, ռազմագերիներին և այլ պահվող անձանց վերադարձնելուն վերաբերող 8-րդ հոդվածում որևէ ժամկետ նշված չէ: Ժամկետների և տվյալ հոդվածի դրույթների իրականացման մեխանիզմների բացակայությունը ադրբեջանական կողմին հնարավորություն է տալիս հայ ռազմագերիներին, պատանդներին և այլ պահվող անձանց ենթարկելու զանազան ստորացումների ու խոշտանգումների՝ հրաժարվելով նրանց վերադարձնել հայրենիք՝ այդպիսով հայկական կողմից կորզելով տվյալ փաստաթղթով չսահմանված հավելյալ զիջումներ:

Փաստաթղթի 9-րդ հոդվածի առաջին նախադասությամբ կողմերը պարտավորվել են ապաշրջափակել բոլոր տրանսպորտային և տնտեսական հաղորդակցության ուղիները, սակայն ադրբեջանական կողմը, շրջանցելով իր կողմից շրջափակված հաղորդակցության ուղիները բացելու պարտավորությունը, խոսում է միայն Ադրբեջանի և Նախիջևանի միջև տրանսպորտային հաղորդակցության ուղիների անվտանգությունն ապահովելու Հայաստանի պարտավորության մասին, որոնց վերահսկողությունը պետք է իրականացվի Ռուսաստանի դաշնային անվտանգության ծառայության սահմանային ստորաբաժանման մարմինների կողմից[24]: Կարծում ենք, որ այս հարցում հայկական կողմը պետք է հետևողականություն դրսևորի, և մինչև Ադրբեջանի կողմից չապաշրջափակվեն բոլոր տրանսպորտային և տնտեսական հաղորդակցության ուղիները, դեպի Նախիջևան ճանապարհի բացման ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկի: Այս հոդվածի շրջանակներում ադրբեջանական կողմին հաջողվեց հասնել նրան, որ պահանջներում ներառվի նաև Նախիջևանն Ադրբեջանի տարածքի հետ կապող տրանսպորտային **նոր հաղորդակցության ուղիների**[25] շինարարության դրույթը: Ստացվում է, որ Արցախի և Հայաստանի Հանրապետությունները կապում է սոսկ Լաչինի միջանցքը, մինչդեռ Հայաստանի տարածքով կարող են կառուցվել Ադրբեջանը Նախիջևանին կապող նոր ցամաքային ուղիներ:

2021 թ. հունվարի 11-ի դրույթների իրականացման նպատակով, երեք երկրների ղեկավարների ստորագրած եռակողմ երկրորդ հայտարարության դրույթներից ելնելով, երեք երկրների փոխվարչապետերի մակարդակով համատեղ աշխատանքային խումբ է ստեղծվել, որը պետությունների ղեկավարների հաստատմանը կներկայացնի վերականգնման կամ նոր տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման իրականացվելիք ծրագրերի ցանկ և ժամանակացույց՝ ապահովելու Ադրբեջանի և Հայաստանի միջև երկաթուղային և ավտոմոբիլային բեռնափոխադրումների անվտանգությունը, ինչպես նաև այնպիսի բեռնափոխադրումների, որոնք անցնելու են Ադրբեջանի և Հայաստանի տարածքով[26]:

Եռակողմ երկրորդ հայտարարության ստորագրումից անմիջապես հետո Ադրբեջանի նախագահը Նախիջևանի հետ Հայաստանի տարածքով ցամաքային հաղորդակցությունների մասին դրույթները փորձեց ներկայացնել որպես Լաչինի «միջանցքին» համարժեք ուղու ստեղծում: Նրա կողմից, սակայն, անտեսվում է այն փաստը, որ Նախիջևանը ցամաքային սահման ունի ոչ միայն Իրանի, այլև Թուրքիայի հետ, իսկ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին տարածքների փոխանցման վերաբերյալ «Եռակողմ հայտարարության» դրույթների իրականացումից և ադրբեջանական կողմից Արցախի տարածքների բռնազավթման «օրինականացումից» հետո փաստացիորեն վերածվեց անկլավի, և հայ բնակչությունը բախվեց գոյաբանական լրջագույն մարտահրավերների, ընդհուպ մինչև ցեղասպանության սպառնալիքը: Եթե Լաչինի միջանցքը Արցախի համար «կյանքի ճանապարհ» է, ապա Նախիջևանի հետ Ադրբեջանի վերգետնյա այս հաղորդակցական ուղին ապահովում է նաև նրա կապը Թուրքիայի հետ և համապատասխանաբար կնպաստի պանթուրքիզմի գաղափարների իրագործմանը՝ ապահովելով Թուրքիայի ցամաքային կապը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների հետ:

«Եռակողմ հայտարարության» մեջ ոչինչ չի ասվում Ադրբեջանի ռազմական հանցագործությունների մասին: Անպատժելիությունը և համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների կողմից այդ հանցավոր գործողություններին իրավաքաղաքական հստակ գնահատական չտալը քաջալերում են ոչ միայն Ադրբեջանին, այլև Թուրքիային՝ հայ ժողովրդի նկատմամբ նոր հանցագործություններ կատարելու: Փաստաթղթում ոչինչ չի ասվում

Ադրբեջանի կողմից քաղաքացիական օբյեկտների և ենթակառուցվածքների, պատմամշակութային ժառանգության օբյեկտների ռմբակոծման հետևանքով հայկական կողմին հասցված վնասների և վնասի հատուցման մասին: Նախիջևանի պատմական օրինակով ապացուցված է, որ երբ հայ ժողովրդի մշակութային ժառանգության օբյեկտները մնում են Ադրբեջանի հսկողության տակ, դրանք մշակութային ցեղասպանության քաղաքականության հետևանքով ոչնչացվում կամ վերաձևվում են այնպես, որ հնարավոր լինի դրանք ներկայացնել որպես ադրբեջանական մշակույթի նմուշներ:

Ամբողջացնելով «Եռակողմ հայտարարության» հոդվածների բովանդակության, ինչպես նաև դրա դրույթների իրականացման գործընթացի վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ տվյալ փաստաթղթի յուրաքանչյուր հոդված պետք է դառնար առանձին համաձայնագրի առարկա՝ բոլոր մանրամասների և իրականացման մեխանիզմների ճշգրտումով, մինչդեռ կողմերը սահմանափակվեցին միայն 2021 թ. հունվարի 11-ի առանձին փաստաթղթի ստորագրմամբ, որով հստակեցվում են միայն «Եռակողմ հայտարարության»՝ հաղորդակցման ուղիների ապաշրջափակման մասին 9-րդ հոդվածի դրույթները:

Ամփոփելով մեկ միասնական միջազգային պայմանագիր հանդիսացող 2020 թ. նոյեմբերի 9-ի, ինչպես նաև 2021 թ. հունվարի 11-ի Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից ստորագրված եռակողմ երկու հայտարարությունների իրավաքաղաքական վերլուծությունը՝ պետք է արձանագրենք, որ Հայաստանը, Արցախը և ողջ աշխարհի հայերը դրանք ընկալում են որպես հետպատերազմյան փաստաթղթավորված իրողություն և ոչ երբեք ղարաբաղյան հակամարտությունը վերջնականապես կարգավորող իրավական փաստաթուղթ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության համապարփակ կարգավորման միակ ուղին ԵԱՀԿ Մինսկի խմբի միջազգայնորեն հաստատված ձևաչափի շրջանակներում բանակցային գործընթացի վերականգնումն է՝ ձգտելով հասնելու առնվազն 1991 թ. սահմաններով Արցախի Հանրապետության կարգավիճակի վերջնական հաստատմանը, ինչը մի կողմից թույլ կտա իրացնել Արցախի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը և ապահովել նրա անվտանգ գոյությունը, իսկ մյուս կողմից՝ երաշխիքներ ստեղծել տարածաշրջանի կայուն և անվտանգ զարգացման համար:

Հղումներ

1- Տես Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т. I, сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. д.ю.н., проф. Ю.Г. Барсегов, М., «Кругъ», 2008, էջ 746:
2- Տես Заявление министров иностранных дел России, Азербайджана и Армении от 10 октября 2020 года, https://bit.ly/3F73fhg:
3- Տես Алиев принес извинения Путину за сбитый российский вертолет, https://tass.ru/ proisshestviya/9956199:
4- Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, https://bit.ly/3n4S16J:
5- Տես Выступление президента России на заседании международного дискуссионного клуба «Валдай», http://kremlin.ru/events/president/transcripts/64261:
6- Տես «Мадридские принципы», http://www.aniarc.am/2016/04/11/madrid-principles-full-text/:
7- Տես Нагорный Карабах в международном праве и мировой политике, էջ 746:
8- Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., изд. «Юрид. лит.», 1982, с. 70.
9- Տես նույն տեղում, էջ 81:
10- Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստա-թղթերում (1828-1923), խմբ.՝ Ջ. Կիրակոսյան, Եր., «Հայաստան», 1972, էջ 499-507:
11- Տես Нагорный Карабах в международном праве и мировой политике, էջ 639:
12- Տես Международное право в документах, էջ 86:
13- Տես նույն տեղում:
14- Տես Президент Азербайджана обратился к азербайджанскому народу, https://moscow-baku.ru/news/politics/:
15- Տես Международное право в документах, էջ 70:
16- Տես ՀՀ անկախության հռչակագիր, https://www.gov.am/am/ independence/:
17- Տես ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015 փոփոխություններով, http://www.parliament.am/ parliament.php?lang =rus&id=constitution:
* Նոյեմբերի 10-ի առավոտյան ՌԴ նախագահի կայքում տեղադրված «Եռակողմ հայտարարության» տեքստը որոշակիորեն տարբերվում է բազմաթիվ լրատվամիջոցների կողմից ավելի վաղ հրապարակված փաստաթղթի նախնական տարբերակից: Մասնավորապես, հայտարարության 2-րդ հոդվածի վերջնական տարբերակում բացակայում է «Ադրբեջանի Ղազախի շրջանում հայկական ուժերի կողմից վերահսկվող տարածքներն Ադրբեջանին փոխանցելու» մասին ձևակերպումը, որը նախնական տարբերակում առկա էր: Բացի այդ՝ նախնական տարբերակի 6-րդ հոդվածից հանվել էր այն ձևակերպումը, որ հայկական կողմն իր վերահսկողության տակ էր պահում Լաչինի միջանցքը, փոխարենը միայն նշվում է, որ Լաչինի միջանցքը թողնվում է ռուս խաղաղապահ ուժերի վերահսկողության տակ: Հաջորդ փոփոխությունը վերաբերում է Նախիջևանի և Ադրբեջանի «արևմտյան շրջանների» միջև տրանսպորտային կապի ապահովման ձևակերպումներին: Վերջնական տարբերակի 9-րդ հոդվածում խոսվում է միայն տրանսպորտային հաղորդագրության համար Հայաստանի կողմից անվտանգության երաշխիքների տրամադրման մասին, մինչդեռ նախնական տարբերակում խոսքը տրանսպորտային կապի տրամադրման մասին է, ինչը կարող է մեկնաբանվել որպես Հայաստանի տարածքով դեպի Նախիջևան Ադրբեջանին տրանսպորտային հատուկ (էքստերիտորիալ) միջանցքի կարգավիճակի տրամադրում:
18- Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384:
* Այս կապակցությամբ պետք է նշել, որ որոշ ժամանակ անց համացանցում տարածվեց նոյեմբերի 9-ի «Եռակողմ հայտարարությունից» բխող Ադրբեջանի, Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված «Գորիս–Դավիթ-Բեկ և Կապան–Ճակատեն ավտոճանապարհներով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անվտանգ տեղաշարժը կազմակերպելու մասին» հուշագրի ոչ պաշտոնական տեքստը, որի իսկությունը պատշաճ կերպով դեռևս չի հերքվել: Անստորագիր այդ փաստաթղթի 1-ին հոդվածում նշվում է, որ հայկական կողմը 2020 թ. դեկտեմբերի 18-ին պետք է դուրս բերի իր զինված ուժերը Քանգելանի և Կուբաթլուի շրջանների տարածքներից, իսկ ճանապարհի նշված հատվածներով երթևեկության անվտանգությունը պետք է համատեղ ապահովվի ադրբեջանցի, ռուս և հայ սահմանապահների կողմից:
19- Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года.
20- Տես Бабаян К., Мадридские принципы Нагорно-Карабахского урегулирования, «Вестник РУДН», серия Международные отношения, М., 2014, № 2, էջ 123:
21 Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года:
22- Տես Министры обороны России и Турции подписали меморандум о совместном центре, http://mil.ru/russian_peacekeeping_forces/news/more.htm?id=12324236@egNews:
23- Տես Казанский документ, http://www.aniarc.am/2016/ 06/23/kazan-document-23-june/:
24- Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года:
25- Տես նույն տեղում:
26- Տես Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 11 января 2021 года, http://www.kremlin.ru/supplement/5606:

Իրան-Ադրբեջան հարաբերություններում երրորդ ուժի գործոնը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրանի և Ադրբեջանի միջև քաղաքական, դիվանագիտական և նույնիսկ ռազմական լարվածության մակարդակը դեռևս չի նվազում, թեև որոշ վերլուծաբաններ վստահ են, որ ճգնաժամի գագաթնակետն ընդհանուր առմամբ հաղթահարված է: Չնայած երկու երկրների միջև հարաբերությունների ջերմացման միտումներին՝ Թեհրանի և Բաքվի միջև հակամարտության վերջնական կարգավորման մասին խոսելը, մեր կարծիքով, դեռ վաղ է: Հատկապես հոկտեմբեր ամսին տեղի ունեցած իրադարձություններից հետո ստեղծված իրավիճակը բացահայտեց իրանա-ադրբեջանական հարաբերությունների մութ կողմերը և արտաքին ուժերին, որոնք այս կամ այն կերպ ազդում են երկու երկրների հարաբերությունների կարգավորման վրա: Խոսքը, մասնավորապես, Թուրքիայի և Իսրայելի մասին է, որոնք, օգտագործելով Ադրբեջանի նախագահի վրա իրենց ազդեցության լծակները, նրան ստիպում են հակադրվել Իրանի Իսլամական Հանրապետությանը:

Կարելի է փաստել, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը վերաճել է միջազգային բարդ և վտանգավոր առճակատման՝ մի կողմից՝ Իրանի, Հայաստանի ու Ռուսաստանի և մյուս կողմից՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Իսրայելի ու Պակիստանի մասնակցությամբ: Ըստ էության, Արցախյան պատերազմում հաղթանակը կարող է դառը հետևանքներ ունենալ Ադրբեջանի և նրա վարչակարգի համար: Թուրքիան և Իսրայելը նկատելիորեն ուժեղացրել են իրենց ազդեցությունը Ադրբեջանում՝ նպաստելով Արցախյան պատերազմում Բաքվի հաղթանակին, սակայն, մյուս կողմից, Իրանը մտադիր չէ համակերպվել դրա հետ՝ Թուրքիային համարելով իր մրցակիցը, իսկ Իսրայելին՝ ոխերիմ թշնամին: Իրանը նաև չի ցանկանում, որ Ադրբեջանը, որին ատամները սեղմած շնորհավորել է Արցախյան պատերազմում հաղթանակի կապակցությամբ, իր առևտրային և ռազմավարական կարևոր գործընկեր Հայաստանի ցամաքային սահմանը կտրի Իրանից: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության կտրուկ փոփոխությամբ, երբ Ռուսաստանը նույնպես ամրապնդել է իր դիրքերը, օրակարգ է մղվում Անդրկովկասում ռուսների և իրանցիների առավել սերտ փոխգործակցության հեռանկարը: Բոլորի շահերից է բխում, որ Թուրքիա-Ադրբեջան-Իսրայել տանդեմը չամրապնդվի Հարավային Կովկասում, իսկ թուրքական նավատորմն էլ՝ Կասպից ծովում:

Ադրբեջանցի զինվորականների կողմից Արցախ մեկնող իրանական բեռնատարների վարորդների ձերբակալումը առաջ էր բերել Իրանի զայրույթը

և իրանական ղեկավարության կողմից որպես մարտահրավեր ընկալվել՝ դառնալով Իրան-Ադրբեջան խորքային խնդիրների սրման պատճառ: Այդ պահից ի վեր Իրանը սկսեց խոսել ոչ միայն իր քաղաքացիների նկատմամբ Ադրբեջանի գործողությունների, այլև իր սահմաններին Իսրայելի ազդեցության աճի անթույլատրելիության մասին: Բանն այն է, որ Արցախյան պատերազմից հետո Ադրբեջանի կողմից օկուպացված շրջաններում իր ներկայությունն է փորձում հաստատել նաև Իսրայելը: Մասնավորապես, իսրայելական ընկերությունները նախատեսում են շինարարական աշխատանքներ սկսել Արցախի օկուպացված տարածքներում: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի խոսքերով՝ երկու երկրների միջև նախատեսվում է ականազերծման, ենթակառուցվածքների, խելացի քաղաքների ու գյուղերի կառուցման աշխատանքների շուրջ համագործակցություն[1]:

Փաստն այն է, որ Ադրբեջանը սերտորեն համագործակցում է Իսրայելի հետ, նրանից զենք է գնում և իսրայելական ռազմական արտադրանքի երկրորդ ներկրողն է (առաջինը Հնդկաստանն է): Բացի այդ՝ իրանցիները կարծում են, որ Ադրբեջանում կարող են Իրանի դեմ Իսրայելի հետախուզական գործունեության օբյեկտներ լինել: Իրանական կողմն անհանգստանում է, որ իր հյուսիսարևմտյան սահմանին կարող է թշնամու բազա ձևավորվել: Իրանցի փորձագետները ժամանակին հայտարարում էին, որ 2018 թ. Բենիամին Նեթանյահուի բացահայտած իրանական միջուկային արխիվը գողացվել Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից՝ Ադրբեջանի միջնորդությամբ[2]: 44-օրյա պատերազմից հետո Թեհրանն արդեն մեղադրում է Ադրբեջանին պատերազմում իսրայելցի ռազմական մասնագետներ ներգրավելու մեջ: Խոսքը,

ըստ ամենայնի, իսրայելական էլեկտրոնային հետախուզության ստորաբաժանումների մասին է, որոնց ներկայությունը կարող էին արձանագրել Իրանի հատուկ ծառայությունները: Իսկ այժմ, ըստ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) բրիգադի գեներալ Քիումարս Հեյդարիի, «իսրայելական վստահված անձինք և ԻՊ զինյալները գտնվում են Ադրբեջանի տարածքում»[3]:

Փաստացի Իրանն ու Իսրայելը դանդաղ ընթացող զինված առճակատման մեջ են, ժամանակ առ ժամանակ միմյանց դեմ ուժային գործողություններ են ձեռնարկում, այդ թվում՝ հարձակումներ տանկերների և այլ նավերի վրա, գիտնականների (միջուկային ֆիզիկոսների) սպանություններ Իրանում և այլն: Այժմ Ադրբեջանը նույնպես կարող է դառնալ նրանց առճակատման ասպարեզ: Իրավիճակը հատկապես սրվում է Իսրայելում, որտեղ ակնկալում են Իրանին շեղել դեպի հյուսիս և Թուրքիայի հետ առճակատման մղել: Հիանալի գաղափար, որպեսզի հրեական պետության երկու թշնամիները և միևնույն ժամանակ տարածաշրջանային մրցակիցները թուլացնեն միմյանց, իսկ սուննիների և շիաների միջև հակամարտությունը շարունակի բորբոքվել: Իսրայելն անգամ հավաստիացրել է Ադրբեջանին, որ հրեական պետությունը կաջակցի և անհրաժեշտ օգնություն կտրամադրի, ներառյալ տեխնիկական և օդային աջակցությունը, հյուսիսային հարևանի վրա Իրանի ցանկացած հարձակում հետ մղելու համար[4]: Այս առնչությամբ Իրանի արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդի նախագահ Քամալ Խարազին հայտարարություն է տարածել, որում ասվում է, որ «Ադրբեջանն անվտանգության հարցերում չպետք է արտաքին ուժերի հետ կապված պատրանքներ ունենա»[5]:

Վերոնշյալից զատ՝ պետք է նշել, որ իրանա-ադրբեջանական սահմանին լարվածության հիմնական պատճառներից են Արցախյան երկրորդ պատերազմից հետո Հարավային Կովկասում ադրբեջանա-թուրքական բլոկի կտրուկ ամրապնդումը և Թուրքիայի արդեն փաստացի ռազմական ներկայությունը: Բանն այն չէ միայն, որ պատերազմն ավարտվեց Հայաստանի պարտությամբ, իսկ Թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին Շուշիի հռչակագիրը՝ քաղաքական, տնտեսական և ռազմական փոխադարձ համագործակցության մասին համաձայնագիրը, ինչն էլ Իրանում մտահոգություններ առաջացրեց տարածաշրջանում թուրքական ազդեցության մեծացման շուրջ: Հիշենք, թե Թեհրանին որքան զայրացրեց անցյալ տարվա դեկտեմբերին Արցախյան պատերազմում հաղթանակի կապակցությամբ Բաքվում անցկացված զորահանդեսին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությունը, երբ նա իր ելույթում մեջբերեց ադրբեջանցի բանաստեղծ Բախտիար Վահաբզադեի բանաստեղծությունից մի հատված՝ նվիրված Գյուլիստանի (1813 թ.) և Թուրքմենչայի (1828 թ.) պայմանագրերով Արաքսի հարավային և հյուսիսային տարածքների բաժանմանը: Դրան հաջորդեց Իրանի պատասխանը, ըստ որի՝ Թուրքիայի նախագահի ընթերցած բանաստեղծությունը «պանթուրքիզմի անջատողական դրսևորումներից մեկն է, որը Անդրկովկասը հպատակեցնելու և «նոր Օսմանյան կայսրության» մաս դարձնելու միտում ունի»[6]: Ըստ էության, Իրանը վերջին 30 տարվա ընթացքում առաջին անգամ որոշեց հասկացնել, որ Ադրբեջանը հարավից սահմանակից է «մեծ պետության»՝ Իրանին, և ներկայիս Անդրկովկասի տարածքի մեծ մասը պատկանում է իր պատմական շահերի գոտուն, այլ ոչ թե Թուրքիային:

Ներկայումս Ադրբեջանը ճնշում է գործադրում Հայաստանի վրա՝ պահանջելով ստորագրել սահմանների զատման համաձայնագիր և Արցախը ճանաչել որպես ադրբեջանական: Հայաստանի ղեկավարությունը հրաժարվում է դա անելուց, և երկրների միջև շարունակվում է դանդաղ ընթացող զինված հակամարտությունը: Այս պայմաններում ռազմապես ավելի ուժեղ Ադրբեջանը կարող է տարբեր գործողություններ ձեռնարկել՝ ստիպելով Հայաստանին կատարել իր պայմանները: Իրանը իր հերթին ձգտում է կանխելու նման գործողությունները և ադրբեջանա-թուրքական բլոկի հետագա ամրապնդումը տարածաշրջանում: Սրան գումարվում է նաև, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» ստեղծելու ծրագիրը, որը ոչ մի կերպ չի տեղավորվում Իրանի տարածաշրջանային հետաքրքրությունների և անվտանգության ապահովման շրջանակներում: Ըստ էության, այս ծրագիրը կյանքի կոչելու գաղափարն այն կաթիլն է, որը լցրեց Թեհրանի համբերության բաժակը:

Ադրբեջանի և Հայաստանի միջև հակամարտությունում Թուրքիան սատարում է Ադրբեջանին, իսկ Իրանը, որպես հակակշիռ, որոշ չափով աջակցում է Հայաստանին: Եվ մինչ իրանցիները զորքեր և ծանր տեխնիկա էին կենտրոնացնում Ադրբեջանի սահմաններին, վերջինի տարածքում Բաքվի դաշնակիցների՝ Թուրքիայի և Պակիստանի զորամիավորումների և ադրբեջանական բանակի համատեղ զորավարժություններ էին ընթանում:

Թուրքական զորքը Նախիջևանում

Իրանին զսպելու համար Թուրքիան նաև լրացուցիչ ուժեր էր տեղափոխում Նախիջևանի շրջան:

Իրան-Ադրբեջան հարաբերություններում հիշատակության է արժանի նաև Պակիստանի գործոնը, քանի որ արցախյան 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանում այս պետության ռազմական ներկայությունը ևս բավական ակնհայտ էր դարձել: Թուրքիայի, իսկ ավելի ուշ Պակիստանի հետ եռակողմ ձևաչափով համատեղ զորավարժությունների աճը չէր կարող չառաջացնել Իրանի դժգոհությունը: Ավելի ուշ արդեն Պակիստանը կարծես թե նվազեցրեց իր ռազմական ներկայությունը Ադրբեջանում՝ շեշտը դնելով առևտրաշրջանառության վրա: Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ Պակիստանին ձեռնտու չէր լինի Իրանի հետ առճակատումը կամ հարաբերությունների վատթարացումը:

Պետք է ընդգծել նաև, որ վերջին շրջանում ադրբեջանական իշխանությունները լայնածավալ գործողություններ են սկսել երկրի ներսում «իրանամետ տարրերի» դեմ: Ձերբակալվել և հետապնդման են ենթարկվել մեծ թվով շիա ակտիվիստներ, որոնց շարքերում են նաև Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի անունից հանդես եկող ակտիվիստները: ԶԼՄ-ներում անգամ լուրեր էին շրջանառվում, որ նախագահ Ի. Ալիևը մտադիր է փակել Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության հոգևոր առաջնորդի ներկայացուցչի առաքելությունը: Նմանատիպ գործողությունները վկայում են Ադրբեջանի նախագահի վախերի և իրանական սպառնալիքն ամեն գնով չեզոքացնելու ցանկության մասին: Ի. Ալիևը մի կողմից երկրի ներսում ճնշում է գործադրում շիա և իրանամետ ակտիվիստների վրա, իսկ մյուս կողմից՝ արտաքին ասպարեզում փորձում ապավինել Թուրքիայի և Իսրայելի աջակցությանը՝ դրանով իսկ առավել մեծ կախվածության մեջ հայտնվելով նրանցից:

Կարելի է ենթադրել, որ եթե Իրան-Ադրբեջան լարված հարաբերությունների շուրջ իրավիճակը բարդանա այն աստիճան, որ հանգուցալուծման միակ ելքը լինի պատերազմը, և որոշ արտաքին խաղացողներ, հատկապես Իսրայելն ու Թուրքիան, Բաքվին և Թեհրանին դրդեն դրան, իրական

Իրանական զորքը Ադրբեջանի սահմանների մոտ

պատերազմն անխուսափելի կդառնա: Եվ եթե այդ պատերազմը սկսվի, դրա ամենամեծ զոհը կլինի հենց ադրբեջանական կողմը, ընդ որում՝ երկու դեպքում էլ՝ և՛ եթե Թուրքիան ու Ադրբեջանը, որին անպայման կաջակցի Իսրայելը, հաղթանակած դուրս գան այդ պատերազմից, և՛ առավել ևս, եթե առավելությունը Իրանի կողմը լինի: Վերջին դեպքում տուժելու է ոչ միայն ադրբեջանական իշխող վարչակարգը, այլև ժողովուրդը: Փաստն այն է, որ Ի. Ալիևի կառուցած պետությունը չափազանց աշխարհիկ է ոչ միայն կղերական Թեհրանի, այլև Անկարայի՝ չափավոր մահմեդական Էրդողանի համար: Հետևաբար այս վարչակարգը երկու դեպքում էլ կդառնա հակամարտության հիմնական զոհը, նույնիսկ եթե Ի. Ալիևը հաղթի: Այդուհանդերձ, ադրբեջանական կողմը շատ լավ գիտակցում է, որ հաղթանակը կարող է հասանելի լինել միայն Թուրքիայի շնորհիվ, ինչը նշանակում է, որ Ադրբեջանի նկատմամբ վերջինիս վերահսկողությունը կմեծանա: Իսկ եթե հաղթանակ տանեն «իրանական մոլլաները», ապա չի բացառվում, որ Ադրբեջանի ինչ-որ հատված, որը զրկված է արտոնություններից և բարեկեցիկ կյանքից, նման պայմաններում ցանկանա վերամիավորվել պատմական հայրենիքի հետ. խոսքը, մասնավորապես, Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդների՝ թալիշների, լեզգիների և այլոց մասին է, որոնք տարիներ ի վեր Բաքվի իշխանությունների կողմից ենթարկվում են բռնաճնշումների և ձուլման քաղաքականության:

Ադրբեջան, Թուրքիա, Պակիստան զորավարժություններ

Հղումներ

1- Տես Азербайджан и Израиль работают над проектами 20 межправительственных документов – Байрамов, http://interfax.az/view/831184 (մուտք՝ 31.10.2021):
2- Տես Экс-глава "Моссада" Йоси Коэн рассказал подробности о тайных израильских операциях против Ирана, https://www.bbc.com/russian/features-57433933 (մուտք՝ 31.10.2021):
3- https://www.bbc.com/persian/iran-58807254 (մուտք՝ 31.10.2021).
4- Տես В Баку началась спецоперация: Иран и Азербайджан подошли к порогу войны — СМИ, https://verelq.am/ru/node/95499 (մուտք՝ 31.10.2021):
5- https://www.irna.ir/news/84494364/ (մուտք՝ 31.10.2021).
6- http://www.irannewspaper.ir/?nid=7515&pid=2&type=0 (մուտք՝ 31.10.2021).

Կրոնական բռնաճնշումների նոր ալիք Ադրբեջանում. պատճառներ և հնարավոր զարգացումներ

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Ադրբեջանում տասնամյակներ շարունակ շիա հավատացյալները և բարձրաստիճան հոգևորականները ենթարկվում են իշխանությունների կողմից հետապնդումների, բռնաճնշումների, անհիմն ու ապօրինի ձերբակալությունների, և այս ամենը մաս է կազմում այդ երկրի իշխանությունների վարած կրոնական քաղաքականության: Ադրբեջանական կալանավայրերում արդեն մի քանի տարի անազատության մեջ են պահվում ավելի քան 100 շիա հավատացյալներ, այդ թվում՝ Ադրբեջանի իսլամական կուսակցության առաջնորդ Մովսում Սամադովը, «Մուսուլմանական միասնություն» շարժման առաջնորդներից Թալեհ Բաղիրզադեն և Էլչին Գասիմովը, շիա աստվածաբաններ Էլշան Մուսթաֆաևը, Աբգյուլ Սուլեյմանովը և ուրիշներ: Շիա հավատացյալների հանդեպ Ադրբեջանի իշխանությունների վարած այս քաղաքականությունն ունի մի քանի հիմնական պատճառ, որոնց թվում առաջնային են՝

- ԻԻՀ կրոնական ակտիվության ճնշումը Ադրբեջանի Հանրապետության տարածքում,

- ԻԻՀ-ի կողմից աստվածապետական կառավարման մոդելի («վէլայաթ-է ֆաղիհ»)՝ Ադրբեջան արտահանման և այնտեղ իսլամական պետություն ստեղծելու ավանդական վախը, որ տասնամյակներ շարունակ ունեն ԱՀ իշխանությունները,

- ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարության և ուժային ու անվտանգային կառույցներում, ինչպես նաև հասարակության շոշափելի մի հատվածի շրջանում տիրապետող այն կարծրատիպը և վախերը, որ Ադրբեջանում ակտիվ և հեղինակավոր բոլոր շիա հավատացյալներն իրանական գործակալներ ու լրտեսներ են և Ադրբեջանի տարածքում զբաղված են լրտեսությամբ, ինչպես նաև կրոնական քարոզների միջոցով «ուղեղների լվացմամբ», Ադրբեջանական հասարակության շրջանում Ադրբեջանի գործող իշխանությունների դեմ բացասական տրամադրությունների տարածմամբ և նրանց վարկաբեկմամբ:

Պատահական չէ նաև, որ Ադրբեջանում տարբեր օրենքների ընդունմամբ և արհեստական, կեղծ օրենսդրական խոչընդոտների ստեղծմամբ 1995 թվականից ի վեր քաղաքական հավակնություններ ունեցող և այդ երկրի առաջին գումարման խորհրդարանում ներկայացված իսլամական կուսակցությանը թույլ չի տրվում մասնակցել խորհրդարանական ընտրություններին:

Կրոնական ցնցումների և բռնաճնշումների մի օրինակ ոչ վաղ անցյալից

2015 թ. նոյեմբերի 2-ի խորհրդարանական ընտրություններից օրեր առաջ հետխորհրդային Ադրբեջանի ամենաթեժ կետերից մեկում՝ Ապշերոնյան թերակղզում գտնվող Նարդարան ավանում սկիզբ առած կրոնական շարժումը նոյեմբերի 26-ին ավարտվեց տեղի հավատացյալների և ԱՀ ոստիկանության ուժերի միջև բախմամբ, որի հետևանքով սպանվեցին 4 նարդարանցի և 2 ոստիկան, ավելի ուշ ևս մեկ վիրավոր նարդարանցի մահացավ հիվանդանոցում[1]: Դեպքի առնչությամբ Ադրբեջանի ՆԳՆ և գլխավոր դատախազության համատեղ հայտարարության մեջ ասված է, որ Նարդարանի շիաները **ԱՀ սահմանադրությունն իսլամական շարիաթով փոխարինելու նպատակով** ստեղծել են «Մուսուլմանական միասնություն» կազմակերպությունը, կողմնակիցներ ձեռք բերել ԱՀ այլ շրջաններում և նրանց ապահովել զենքով: Չնայած տեղի ունեցածի պատճառը մասնագետներից ոմանք համարում են Ադրբեջանում սոցիալ-տնտեսական դրության վատթարացումը, սակայն, չժխտելով նշված վարկածի հավանականությունը, դրա գլխավոր պատճառն իրականում կարող էր լինել ադրբեջանական իշխանությունների վարած կրոնական քաղաքականության խստացումը: Ադրբեջանում քաղաքական բռնաճնշումների հետևանքով էլ ավելի էր մեծացել հասարակության շրջանում շիայական հոգևորականության դերն ու ազդեցությունը, հանգամանք, որը մշտապես դիտարկվել է որպես իրական սպառնալիքի աղբյուր Ալիևների վարչակարգի դեմ: Բացի այդ՝ ավանդական ընդդիմադիր քաղաքական գործիչները

ևս սկսել էին հենվել մզկիթների և դրանցում հավաքվող հասարակության հավատացյալ շերտի աջակցության վրա[2]: Դեպքերից անմիջապես հետո ԱՀ նախագահ Ի. Ալիևի դեկտեմբերի 4-ի որոշմամբ փոփոխություններ են կատարվել «Կրոնի և հավատքի մասին» օրենքում, որով ուժեղացվել է կրոնական շարժումների գործունեության նկատմամբ վերահսկողությունը, նաև արգելվում է հասարակական վայրերում կամ պաշտամունքային վայրերից դուրս հնչեցնել կրոնական կարգախոսներ, ցուցադրել կրոնական դրոշներ և ատրիբուտներ:

Վերը ներկայացված նարդարանյան դեպքերից հետո անցած մի քանի տարվա ընթացքում Ադրբեջանում շարունակվել են շիա հոգևորականների ձերբակալությունները: Հատկապես հարավային թալիշաբնակ շրջաններում և դրանց կենտրոն Լենքորան քաղաքում, իսկ 2018 թ. Իրանում հոգևոր կրթություն ստացած մի գանձակեցի մահափորձ կատարեց Գանձակի քաղաքապետի դեմ, որից հետո նարդարանյան լարվածությունն էլ ավելի բուռն ընթացքով կրկնվեց արդեն բնակչության թվաքանակով Ադրբեջանի երրորդ մեծ քաղաք Գանձակում: Մահափորձ իրականացնողն այս տարի դատապարտվեց ցմահ ազատազրկման:

Կրոնական բռնաճնշումների նոր ալիքը

Հոկտեմբերի 19-ին Բաքվում ԱՀ պետանվտանգության ծառայության աշխատակիցների կողմից սեփական բնակարանի խուզարկությունից հետո բերման է ենթարկվել շիա հավատացյալ, աստվածաբան, Խղճի և դավանանքի ազատության պաշտպանության կենտրոնի (DEVAMM) նախագահ Իլգար Իբրահիմօղլուն, որն ազատ է արձակվել միայն մեկ օր անց՝ ժամեր տևած հարցաքննությունից հետո, պայմանով, որ պետք է շուտով նորից ներկայանա ՊԱԾ՝ կրկին հարցաքննվելու: Վերջինիս տան խուզարկության ժամանակ առգրավվել են գրքեր և աուդիո սկավառակներ:

Նույն օրը ձերբակալվել են նաև Իրանի հետ սերտ կապեր ունեցող մի քանի շիա հավատացյալներ և քարոզիչներ, այդ թվում՝ «Ադրբեջանի հոգևոր գործիչներ» հասարակական կազմակերպության 5 անդամներ՝ Սարդար Բաբաևը, Գադիր Մամմադովը, Ջալալ Շաֆիևը, Ալի Մուսաևը և Թամքին Ջաֆարովը, որոնք բոլորն էլ այս կամ այն կերպ առնչություն ունեն կրոնական քարոզով զբաղվող և, ըստ տարբեր աղբյուրների, իրանական հովանավորություն ունեցող «Maide.az» կայքի հետ: Թամքին Ջաֆարովի ձերբակալության ժամանակ, որն իրականացվել է քաղաքացիական հագուստներով նրա բնակարան ներխուժած ՊԱԾ 15 աշխատակիցների կողմից, առգրավվել են նաև նրա անձնական իրերը, այդ թվում՝ նոթբուքը, բջջային հեռախոսը և տեսանկարահանման խցիկը:

Թեև հաջորդ օրերին ձերբակալվածների մի մասն ազատ է արձակվել, սակայն արդեն հիշատակված «Maide.az» կայքի գլխավոր խմբագիր Սարդար Բաբաևը, ով 2017 թ.՝ դեռևս թալիշաբնակ Մասալլիի վարչական շրջանի Ջումա մզկիթի իմամ եղած ժամանակ, ձերբակալվել և բանտում երեք տարի անցկացնելուց հետո ազատ է արձակվել, դեռևս շարունակում է մնալ անազատության մեջ: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել Ադրբեջանի քրեական օրենսգրքի 274-րդ հոդվածով (պետական դավաճանություն), իսկ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը՝ քառամսյա ժամկետով: Ինքը՝ Սարդար Բաբաևը, հայտարարել է, որ իր հանդեպ սկսված հետապնդումներն ունեն քաղաքական պատճառներ և պայմանավորված են Իրանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների սրմամբ: Նույն միտքն է արտահայտել նաև Սարդար Բաբաևի հետ նույն օրը ձերբակալված և մի քանի օր անց ազատ արձակված Ջալալ Շաֆիևը՝ նշելով, որ Բաբաևի ձերբակալման պատճառը նրա հրապարակումներն են՝ արված «Maide.az» կայքում, ինչպես նաև նրա հանդեպ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի՝ ժամանակին ցուցաբերած հատուկ ուշադրությունը, որը դրսևորվել է չալմա (կրոնական գլխաշոր, փաթթոց) նվիրելով:

Ադրբեջանում շիա հավատացյալների հանդեպ հետապնդումները շարունակվել են նաև հաջորդ օրերին: Մասնավորապես հոկտեմբերի 25-ին Ադրբեջանի պետանվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ձերբակալվել և դարձյալ ժամեր տևած հարցաքննությունից հետո ժամանակավորապես ազատ է արձակվել աստվածաբան և Բաքվի Հաջի Ջավադ մզկիթի նախկին աղոթապետ Ահիլման Ռուստամովը, որի ձերբակալությունը ևս ուղեկցվել է անձնական իրերի, այդ թվում՝ անձնական գրադարանից 15 կրոնական գրքերի, նոթբուքի և բջջային հեռախոսի առգրավմամբ: Ահիլման Ռուստամովի ձերբակալությունից անմիջապես հետո վերջինիս որդին՝ Հասան Ռուստամովը, հայտարարել է, որ հոր ձերբակալության պատճառը Իրան-Ադրբեջան լարված հարաբերություններն են:

Բացի այս ամենից՝ հոկտեմբերի 19-27-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի պետանվտանգության ծառայության որոշմամբ այդ երկրի տարածքում արգելափակվել է հիմնականում կրոնական բովանդակություն գեներացնող և տարածող, նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ ասոցացվող մի շարք կայքերի հասանելիությունը, որոնց թվում են՝

- www.deyerler.az,
- www.maide.az,
- www.ahlibeyt.az,
- www.shia.az,
- www.islaminsesi.az:

Առաջին երկու կայքերի՝ «www.deyerler.az» և «www.maide.az», գլխավոր խմբագիրներն են համապատասխանաբար Իլգար Իբրահիմօղլուն

և Սարդար Բաբաևը՝ երկուսն էլ այս օրերի հետապնդվածների շարքերում հայտնված, իսկ վերջինը՝ «www.islaminsesi.az», Ադրբեջանի իսլամական կուսակցության պաշտոնական կայքն է, որի բոլոր առաջնորդներն այս պահին անազատության մեջ են:

Զուգահեռաբար այս օրերին տարբեր սոցիալական ցանցերում տեղեկություններ են տարածվում այն մասին, որ հոկտեմբերի երկրորդ կեսին Ադրբեջանում ձերբակալվածների կամ հարցաքննությունների կամ ՊԱԾ բաժանմունքներ բերման ենթարկվածների իրական թվաքանակը գերազանցում է 150-ը:

Եթե անդրադառնանք Ադրբեջանում սկսված կրոնական բռնաճնշումների նոր ալիքի հիմնական պատճառին և դրա քննությանը, ապա ակնհայտ է մի բան. Ադրբեջանում կրոնական բռնաճնշումների նոր ալիքը հաջորդեց Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած աննախադեպ լարվածությանը, որի պաշտոնական պատճառը կարծես թե ՀՀ-ԻԻՀ միջպետական ճանապարհի Գորիս-Կապան հատվածում ադրբեջանական կողմի իրականացրած գործողություններն էին, մասնավորապես՝ ոստիկանության կողմից իրանական պետհամարանիշներով բեռնատարների վարորդների ու բեռների փաստաթղթերի ստուգումը, երկու իրանցի վարորդների ձերբակալումը, ապա դրանց հաջորդած իրանական զորավարժությունները, կրոնական և քաղաքական գործիչների՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության համար ոչ ականջահաճո հայտարարությունները, ամենաբարձր մակարդակով փոխադարձ մեղադրանքները, սպառնալիքները և այլն:

Կարծես նույն պատճառն են նշում նաև ձերբակալված շիա հավատացյալները, նրանց հարազատները, փաստաբանները, քաղաքական վերլուծաբանները և թեմային ի մոտո ծանոթ մասնագետները: Բոլորը համարում են, որ շիա հավատացյալների ձերբակալությունների, հարցաքննությունների և հետապնդումների հիմնական պատճառը Իրան-Ադրբեջան լարված հարաբերություններն են:

Այնուամենայնիվ, Ադրբեջանում ընթացող ներքին այս գործընթացների արտաքին երեսը միայն կարող է պայմանավորված լինել Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարմամբ և դրանից բխող որոշ գործողություններով: Իսկ իրականում դրանք կարող են լինել խուլ արձագանքը այն խորքային գործընթացների, որոնք ընթանում են Ադրբեջանի ներսում և տեսանելի ու լսելի չեն արտաքին դիտարկողի համար: Այդ գործընթացներն իրենց հիմքում ունեն և՛ ներքաղաքական խմորումների, և՛ սոցիալ-տնտեսական ու այլ խնդիրների տարրեր, ինչպես և ծայրահեղ բևեռացող հետպատերազմական հասարակություններին հատուկ դրսևորումներ, ինչը, այնուամենայնիվ, շատ լավ են զգում և դրանց պայթյունավտանգ էությունը հասկանում են Ադրբեջանի գործող իշխանությունները:

Նմանատիպ բռնաճնշումները որքան էլ որ ուղղված լինեն այս պահին կոնկրետ մի խմբի՝ շիա հավատացյալների դեմ, պարունակում են ճնշող ազդակներ նաև հասարակության մյուս խմբերի համար և, մեծ հաշվով, ունեն ներսից տեսանելի՝ հավանական ապակայունությունը զսպող նշանակություն: Այս առումով տողերիս հեղինակին հետաքրքիր է թվում վտարանդիության մեջ ակտիվ գործունեություն ծավալող ադրբեջանցի քաղաքագետ Արասթուն Օրուջլուի մի մեկնաբանությունը: Վերջինս ֆեյսբուքյան իր էջում, անդրադառնալով շիա հավատացյալների ձերբակալություններին, արել է հետաքրքիր կանխատեսումներ՝ հետևյալ բովանդակությամբ. *«Ձերբակալությունները շարունակվելու են, ընդ որում, դրանք չեն սահմանափակվելու միայն հավատացյալներով: Ձերբակալվելու են նաև ընդդիմադիր կուսակցությունների անդամներ, լրագրողներ, ՀԿ առաջնորդներ և պարզապես քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչներ, քանի որ սկսված ձերբակալությունների պատճառը ոչ Իրանն է, ոչ Թուրանը և ոչ էլ որևէ այլ երկիր: Պատճառը երկրի ներսում արագորեն խորացող սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամն է, նաև կառավարման ձախողումը: Եթե մոտ օրերս Ադրբեջանում հայտարարվի նաև դևալվացիա, պետք չէ զարմանալ: Համակարգը բոլոր առումներով փապալվել է, ուստի այս իրավիճակում գործող իշխանությունները լուծումը տեսնում են ձերբակալությունների և բռնաճնշումների մեջ»:*

Եթե չափազանցված չեն Արասթուն Օրուջլուի կանխատեսումները, ապա բացառված չէ, որ մոտ ապագայում ականատեսը լինենք Ադրբեջանի ներսում որոշ զարգացումների կամ այնպիսի գործընթացների, որոնք կարող են երկիրը տանել ներքին տևական ապակայունացման:

Հղումներ

1- Նարդարանում բնակվող կովկասյան պարսիկները հայտնի են իրենց պահպանողական շիայական հայացքներով և Իրանի հանդեպ դրական վերաբերմունքով: 2015 թ. հոկտեմբերի 24-ին բողոքի ցույցեր էին տեղի ունեցել Նարդարանում՝ ի նշան այն բանի, որ մեկ օր առաջ Գանձակում ՆԳՆ ներքին զորքերի հատուկջոկատայիններն արգելել էին տեղի շիայական բնակչությանը Աշուրայի ծիսակատարության երթ անցկացնել և ձերբակալել էին 30 մարդու: Հոկտեմբերի 24-ից սկսված կրոնական այդ շարժումը թեժանում է նոյեմբերի 6-ին, երբ Սաբունչիում ձերբակալվում են ևս 20 հավատացյալներ, որոնք բողոքի ցույց էին անցկացնում՝ ի պաշտպանություն մեկ օր առաջ ձերբակալված Էյչին Գասիմովի, որը «Մուսուլմանական միասնություն» շարժման առաջնորդներից էր: Կրոնական շարժման մասնակիցների և ԱՀ իշխանությունների դիմակայությունն իր գագաթնակետին է հասնում նոյեմբերի 26-ին, երբ ոստիկանությունը կեսօրի նամազի ժամանակ ներխուժում է Նարդարանի մզկիթներից մեկը, բռնություն գործադրում հավաքվածների նկատմամբ, ձերբակալում 15 հավատացյալների, այդ թվում՝ հեղինակավոր կրոնական գործիչ, ազգությամբ կովկասյան պարսիկ Թալեհ Բաղիրզադեին:

2- Հետաքրքիր է այս առնչությամբ ադրբեջանցի բլոգեր Ռաուֆ Միրքադիրովի կարծիքը. «Իրավիճակն այնպիսին է, որ մզկիթը միակ համակարգն է, որի շուրջ կարող են համախմբվել ընդդիմադիր ուժերը: Եվ կարևոր չէ՝ կարո՞ղ են արդյոք նրանք զերծ մնալ ծայրահեղ կրոնական հայացքներից, թե՞ ոչ: Կարևորն այստեղ քաղաքական ենթատեքստն է, և դա այն եզակի վայրն է, որտեղ կարելի է ազատ քննադատել իշխանություններին»:

Թուրք-իրանական շահերի բախումը Սյունիքում

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունները կարևոր տեղ են գրավում Իրանի և Թուրքիայի հարավկովկասյան տարածաշրջանային քաղաքականության մեջ: ԻԻՀ-ն կարևորում է նրանց հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումն ու ամրապնդումը, մասնավորապես, հաշվի առնելով այդ երկրների աշխարհագրական դիրքը, որը հնարավորություն է տալիս ցամաքային կապ ապահովելու Ռուսաստանի Դաշնության և Հյուսիսային Եվրոպայի հետ: Հաշվի առնելով աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական իրողությունները՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը այդ երկրներին վերաբերում է որպես իր անվտանգային և տնտեսական լծակները համալրող գործոնների:

Թուրքիան այն երկրներից էր, որոնք Խորհրդային Միության փլուզման շրջանից փորձեցին էլ ավելի մեծ ուշադրություն հատկացնել Հարավային Կովկասի տարածաշրջանին և առանցքային դերակատարում ունենալ այդ երկրներում տեղի ունեցող իրադարձություններում: Հարավային Կովկասի երկրների դիրքը Սև և Կասպից ծովերի ավազանների միջև այս շրջանը կրկնակի արժեքավոր է դարձնում Թուրքիայի համար: Եվ զարմանալի չէ, որ և՛ Թուրքիան, և՛ Իրանը ամեն կերպ հավակնում են գերիշխող դեր ունենալու Հարավային Կովկասում ընթացող իրադարձություններում, որով կբարձրացնեն իրենց պետությունների գլոբալ և տարածաշրջանային դերն ու վարկանիշը: Այս առումով նրանց համար ռազմավարական կարևոր կետ դարձավ նաև Լեռնային Ղարաբաղը, իսկ այսօր՝ Սյունիքի մարզը:

Վերջիններիս որդեգրած քաղաքականությունն առավել բացահայտ դրսևորվեց ինչպես Արցախյան առաջին պատերազմի տարիներին, այնպես էլ 2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի օրերին: Եթե 90-ականներին Իրանն ավելի ակտիվ ու գործուն ջանքեր էր գործադրում պատերազմի դադարեցման ու հրադադարի կնքման հարցում, ապա 2020 թ. բավականին չեզոք և երբեմն նույնիսկ իրարամերժ հայտարարություններ էր հնչեցնում՝ վերջնականապես չբացահայտելով, թե պատերազմող կողմերից որին է աջակցելու: Նույնը չի կարելի ասել Թուրքիայի մասին, որն Արցախյան և՛ առաջին, և՛ երկրորդ պատերազմների օրերին ռազմական և նյութական բացահայտ օգնություն էր ցուցաբերում Ադրբեջանին՝ այդպիսով կարևոր դերակատարում ունենալով պատերազմում Ադրբեջանի հավանական հաղթանակում:

Չնայած հրադադարի կնքմանը՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող հակամարտությունը դեռևս չի կարգավորվել, և կարելի է ասել, որ այն պատկանում

է մշտապես շարունակվող հակամարտությունների շարքին: Սա այն խնդիրներից է, որոնք հանգեցնում են դրանցում ներքաշված և դրանցից օգուտներ քաղել փորձող գերտերությունների (տվյալ դեպքում՝ Իրան, Թուրքիա, ԱՄՆ, ՌԴ, Իսրայել) հարաբերություններում լարվածության աճին: Սրա վառ ապացույցը դարձավ 2021 թ. սեպտեմբերին Գորիս-Կապան ավտոճանապարհի Որոտանի հատվածում ադրբեջանական ոստիկանական անցակետի տեղադրումը, որի պատրվակով ադրբեջանցի ոստիկանները կանգնեցնում և մաքսատուրք են գանձում նաև իրանցի վարորդներից: Միջադեպերից մեկի ժամանակ անգամ իրանցի երկու վարորդներ ձերբակալվել էին, որոնք ազատ են արձակվել միայն վերջերս[1]:

Սրան ի պատասխան՝ հոկտեմբերի 1-ից Իրանի հյուսիսարևմտյան հատվածում՝ Նախիջևանի սահմանի մոտ, մեկնարկել են «Խայբերի նվաճողները» կոչվող զորավարժությունները, որոնց ընթացքում կիրառվեցին և փորձարկվեցին մի շարք զրահատանկային զինատեսակներ, հրետանի և անօդաչուներ: Վերջիններս օգտագործվեցին հետախուզական նպատակներով[2]:

Հետաքրքիր էր նաև զորավարժությունների համար ընտրված անունը: Խայբեր ամրոցում դեռևս Մոհամմադ մարգարեի օրոք պատերազմ էր տեղի ունեցել մուսուլմանների և հրեաների միջև: Ըստ մուսուլմանների՝ Խայբեր ամրոցի վրա հարձակման պատճառն այն էր, որ այնտեղից հրեաները Մեքքայի բնակիչներին տրամադրում էին մահմեդականների դեմ:

Սյունիքում՝ Ադրբեջանի հետ սահմանի հարևանությամբ անցկացվող զորավարժությունները դժգոհություն են առաջ բերել Ադրբեջանի և Թուրքիայի պաշտոնյաների շրջանում, մինչդեռ Իրանի

Իսլամական Հանրապետության ներկայացուցիչները հայտարարել են, որ դա կապված է Ադրբեջանում Իսրայելի ներկայության հետ, և փորձ է արվել հակազդելու իսրայելական սպառնալիքին:

ԻԻՀ ցամաքային զորքերի հրամանատար, բրիգադի գեներալ Քիոմարս Հեյդարին հայտարարել է, որ յուրաքանչյուր ուսումնական դասընթացի ավարտին, երբ որևէ հատուկ ձեռքբերում ունենան, Իրանը կանցկացնի զինատեսակների և նոր կիրառվող զենքերի փորձարկում: Այս դեպքում իրանական կողմի «հատուկ ձեռքբերում»-ը ներքին արտադրության անօդաչու թռչող սարքերն էին[3]:

Սրան զուգահեռ՝ Նախիջևանի սահմանային հատվածում «Անխախտ եղբայրություն» կոչվող համատեղ զորավարժություններ սկսեցին նաև Ադրբեջանի ու Թուրքիայի Հանրապետությունները, և սա այն դեպքում, երբ Իրանում դեռևս չէր մարել զայրույթը կողմերի նախորդ զորավարժության համար, որին մասնակցում էր նաև Պակիստանը:

Իրանի, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից իրականացվող նման ձևաչափով զորավարժությունները Սյունիքին սահմանակից հատվածներում, չնայած առերևույթ որևէ քաղաքական նպատակ չեն հետապնդում և միտված են նորաստեղծ տեխնիկայի փորձարկումներին ու զորքերին ռազմական պատրաստվածության բերելուն, իրականում ունեն նաև քողարկված քաղաքական ենթատեքստեր, որոնցով կողմերն ուզում են միմյանց հասկացնել իրար հետ ռազմական բախման գնալու բոլոր հնարավոր սպառնալիքների մասին: Մասնավորապես, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Սյունիքի մարզի Գորիս-Կապան ավտոճանապարհի փակումը, որով ադրբեջանցիները խոչընդոտում են իրանական բեռնատարների մուտքը Հայաստան, իրականում լուրջ մարտահրավեր է ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի համար, քանի որ դրա նպատակը ոչ միայն ՀՀ տարածքային ամբողջականությունը սպառնալիքի տակ դնելն է, այլև Իրանի տարածաշրջանային ազդեցությունն ու դերը նվազեցնելը: Ընդ որում, Իրանի հյուսիսային շրջաններում առկա լարվածությունը, հնարավոր է, որ տարածվի նաև Կասպից ծովի ավազանում, ինչը, բնականաբար, ձեռնտու չէ Թուրքիային:

Իրանը Հայաստանը դիտարկում է որպես կարևոր բուֆերային գոտի, որը հնարավորություն է տալիս կանխելու Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները: Վերջինս, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» ստեղծմամբ կկարողանա ուղիղ կապ հաստատել Ադրբեջանի հետ, ինչն էլ նրա պանթուրքական ծրագրի կարևոր բաղադրիչներից է: Զմոռանանք նաև պատերազմից հետո Ադրբեջանի Հանրապետության նախագահի այն հայտարարությունը, որ Սյունիքը ևս Ադրբեջանի պատմական տարածք է, որն էլ ավելի հստակեցրեց նրանց պլանները այս շրջանի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ 2020 թ. պատերազմի հրադադարի պայմանագրի միակ

կետը, որը սպառնում է հենց Իրանին, Բաքու-Անկարա ուղիղ կապի ստեղծումն է, ինչը հնարավոր է միայն «Զանգեզուրի միջանցքի» տրամադրմամբ: Չնայած այս միջանցքի բնույթը դեռ պարզ չէ, ասվում է, որ Բաքու-Անկարա դաշինքի նվազագույն նպատակը քաղաքացիների տեղաշարժի, ապրանքների տարանցման և վերջապես էներգիայի ու էլեկտրահաղորդման գծերի հատման միջանցք ստեղծելն է: Բայց, հակահիրանական մոտեցման համաձայն, «Զանգեզուրի միջանցքով» Ադրբեջանից դեպի Նախիջևան և Թուրքիա գազի տարանցումն արդեն կիրականանա առանց Իրանի, և դա ևս իր հերթին կնվազեցնի Ադրբեջանի վրա իրանական ազդեցության տնտեսական և լոգիստիկ կարևոր լծակների թիվը: Նման սցենարի կյանքի կոչման դեպքում շատ հնարավոր է, որ իր տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակությունն ամբողջությամբ կորցնի նաև Իրան-Թուրքիա գազատարը: Թուրքիան կդադարեցնի իրանական գազատարի շահագործումը կամ Իրանից գազի գնման ծավալը կհասցնի հնարավոր նվազագույնի՝ փոխարենը ապահովելով գազի մատակարարում Ռուսաստանից և Ադրբեջանի Հանրապետությունից:

Իրանի և Հայաստանի միջև 21 կիլոմետրանոց սահմանագծի վերացմամբ, որը հնարավոր է միայն թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից Սյունիքի բռնազավթմամբ, կբարդանա նաև Իրանի աշխարհաքաղաքական դրությունը Հարավային Կովկասում: Հաշվի առնելով Թուրքիայի նկրտումները Կասպից ծովի՝ նավթազազային պաշարներով հարուստ արևելյան և արևմտյան ափերի նկատմամբ, ինչպես նաև վերջին երեք տասնամյակներին Իսրայելի ազդեցությունը Ադրբեջանի Հանրապետությունում, որը նաև ռազմական մեծ ծավալներ ունի (ինչն առավել ցայտուն դրսևորվեց 2020 թ. արցախյան պատերազմի օրերին), և Իրանի Իսլամական Հանրապետության սահմաններում ճգնաժամ ստեղծելու Միացյալ Նահանգների լուրջ ջանքերը՝ Իրանի սահմաններից հյուսիս աշխարհաքաղաքական զարգացումների վրա աչք փակելը պատճառ կդառնա Իրանի դերի նվազեցմանը տարածաշրջանում:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը

փորձում է ռազմավարական գերակայություն ապահովել Թուրքիայի համար ինչպես Կասպից ծովի արևմտյան ափերին, այնպես էլ ողջ Հարավային Կովկասում: ԱՄՆ-ն ձգտում է թուլացնելու իր երկու թշնամիների՝ Իրանի և Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասի տարածաշրջանում և Կասպից ծովի արևմտյան եզրին՝ ընդլայնելով գաղտնի հարաբերություններն ադրբեջանական և հայկական հանրապետությունների հետ, լուծելով նրանց միջև առկա ռազմական հակամարտությունը՝ ժամանակավորապես զսպելով Ադրբեջանին և գայթակղելով Հայաստանին: Թեև ճշգրիտ վիճակագրություն չկա, սակայն բազմաթիվ զեկույցներ վկայում են իսրայելական վարչակարգի՝ հատկապես Ադրբեջանի Հանրապետությունում աճող ներկայության մասին, որը կենտրոնացած է «Գաբալայի ավիաբազայի» վրա: Այստեղ Իսրայելի անվտանգության ուժերի թիվը գնահատվում է 500-1000-ի սահմաններում, մյուս կողմից՝ վերջին տասնամյակում այս վարչակարգը զգալի ազդեցություն է ձեռք բերել Ադրբեջանի Հանրապետության և Իլհամ Ալիևի ընտանիքի վրա, քանի որ սիոնիստ առաջնորդները Ադրբեջանն անվանում էին «Իսրայելի Լիբանան»[4]: Այս պարագայում Իսլամական Հանրապետությունը ստիպված է դիմակայել սահմանների անվտանգության երկարաժամկետ մարտահրավերներին և նվազեցնել դրանց ազդեցությունը տարածաշրջանում:

Պետք է նկատի ունենալ նաև, որ թե՛ Էրդողանը, թե՛ Ալիևը հասկանում են, որ Իրանը նշված շրջանների հարցում զիջումների չի գնա: Իրանի հյուսիսային սահմանին տեղի ունեցող իրադարձություններից ամերիկա-իսրայելական ներկայության հոտ է գալիս, և այստեղ նրանք Էրդողանին ու Ալիևին կցանկանան օգտագործել որպես խամաճիկների: Մյուս կողմից՝ սա խաղ չէ Իրանի համար, որը նա կարող է անտեսել:

Այսպիսով՝ շատ քիչ հավանական է, որ Բաքուն և Անկարան երկկողմ համատեղ զորավարժությունների միջոցով վտանգ ներկայացնեն Իրանի համար: Միաժամանակ երկու երկրներն Իրանի հետ այժմ ունեն դրական հարաբերություններ տնտեսական, առևտրային, դիվանագիտական, մշակութային և այլ հարթություններում և միշտ վայելել են Թեհրանի աջակցությունը: Իրանը կարող է

Սյունիքի ճանապարհը

ռազմական միջամտության դիմել միայն այն դեպքում, եթե Ադրբեջանն ու Թուրքիան ցանկանան պատերազմական ճանապարհով խզել Իրանի և Հայաստանի միջև սահմանային կապը, և այս պարագայում Իրանն իր զորքերը կմտցնի Սյունիք միայն Հայաստանի Հանրապետության խնդրանքով: Սյունիքն Իրանի համար ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր կետ է, որով նա կանխում է պանթյուրքական էքսպանսիան: Եթե Արցախի պարագայում Իրանը կարող էր չեզոք մնալ և հարգել երկու երկրների ինքնիշխանությունը, որով փաստացի ընդունում էր Ադրբեջանի կողմից հայկական տարածքների զավթումը, ապա Սյունիքի պարագայում նա կորցնելու շատ բան ունի: Իզուր չէ, որ իրանական կողմից բազմիցս հայտարարվել է, որ երկրի հյուսիսարևմտյան սահմաններն իրենց «կարմիր գիծն են», որոնք անցնելու հնարավորություն չեն տա Ադրբեջանին: Սա Իրանի համար աշխարհաքաղաքական, տնտեսական, նաև մշակութային արժեք ունեցող շրջան է, որի կորստի հետևանքները ծանրակշիռ կլինեն: Իրանը կձգտի թույլ չտալու Թուրքիայի և Ադրբեջանի համատեղ ներկայությունն իր հյուսիսարևմտյան սահմաններին՝ այդպիսով ապահովելով իր երկրի անվտանգությունը, ինչպես նաև ամրապնդելով իր դիրքերը Հարավային Կովկասում:

Հղումներ

1- Տես Քոլոյան Ա., Ադրբեջանն ազատ է արձակել Գորիս-Կապան ճանապարհին ձերբակալված իրանցի երկու վարորդներին, https://www.azatutyun.am/amp/31507449.html?fbclid=IwAR3Orh8uAP5kiR5pz-Tw6KWOWo0-RmzGKRsKBN5i0p1L34IZW7RgSGmyj-BY (մուտք՝ 18.10.2021):

2- Տես Iran's Army military drill kicks off in NW region, https://en.irna.ir/news/84489696/Iran-s-Army-military-drill-kicks-off-in-NW-region?fbclid=IwAR33WL5ATPKTDdPRGn8q0xR3spmgLq5u2hMDiPZgorPcwcG-JHaL-hYK-UWI (մուտք՝ 19.10. 2021):

3- Տես مانور نظامی جمهوری آذربایجان و ترکیه؛ تکذیب بسته شدن دفتر رهبر ایران در باکو, https://www.bbc.com/persian/iran-58807254 (մուտք՝ 19.10.2021):

4- Տես سعدالله زارعی, ایران تغییرات مرزی را تحمل نمی‌کند,, https://kayhan.ir/fa/news/226763/ (մուտք՝ 22. 10. 2021):

Ինչո՞ւ և ինչպե՞ս է կառուցվել ատոմակայանը

Անտոն Քոչինյան
Խորհրդային Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար

«Դրօշակ»-ի խմբագրությունը որոշեց իր էջերում տեղ տալ Խորհրդային Հայաստանի ղեկավարներից մեկի՝ Անտոն Քոչինյանի ձեռքով գրված և Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն շրջանի բաժնի վարիչ Մեղա Գալստյանի կողմից սիրահոժար մեզ տրամադրված՝ Հայաստանի ատոմակայանին վերաբերող նյութին: Նյութի նկատմամբ մեր հետաքրքրությունը պայմանավորված է դրա այժմեականությամբ, ինչի մասին իր ներածականում նշում է նաև Մեղա Գալստյանը: Մյուս կողմից՝ ատոմակայանը, Հայաստանի համար ունենալով տնտեսական, ռազմավարական նշանակություն, ներկայացնում է քաղաքական արժեք՝ լինելով Հայաստանի ինքնիշխանությունն ապահովող կարևոր գործոն: Պատահական չէ նաև, որ Ադրբեջանն ու Թուրքիան ժամանակ առ ժամանակ բարձրացնում են հայկական ատոմակայանի փակման հարցը՝ ելնելով իբրև թե սեփական անվտանգության նկատառումներից: Հավելենք, որ, ելնելով ներկայացվող նյութում առկա որոշակի փաստարկներից, այն կարող էր գրված լինել 1988 թ. դեկտեմբերին կամ 1989 թ. առաջին կեսին:

Խմբագրության կողմից

Ըստ «Sputnik Արմենիա» լրատվական գործակալության՝ սույն թվականի նոյեմբերին Հայաստան կայցելի ռուսական «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովը: Այցի ընթացքում կքննարկվեն Մեծամորի ԱԷԿ-ի վերանորոգման ընթացքը (ի դեպ, այն 5 ամիս փակ է եղել վերանորոգման պատճառով և վերագործարկվել է վերջերս), 2026 թվականից հետո ատոմակայանի ծառայության ժամկետի երկարաձգման հնարավորությունները, ինչպես նաև նոր կայանի կառուցման հեռանկարները: Այս լուրը մեզ համար առիթ դարձավ անդրադառնալու **Հայաստանի պատմության թանգարանում պահվող Հայաստանի կոմունիստական կուսակցության 1-ին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանի** արխիվին և վերընթերցելու վերջինիս՝ «Ինչո՞ւ և ինչպե՞ս է կառուցվել ատոմակայանը» վերտառությամբ ձեռագիրը և, նկատի ունենալով թեմայի այժմեականությունը, պատրաստելու այն տպագրության:

Հայաստանի պատմության թանգարանի նորագույն շրջանի ֆոնդում՝ մմ 18816 համարի տակ է պահվում Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանի (1966-1974) անձնական արխիվը, որը 2005 թ. թանգարանին է նվիրել վերջինիս հարսը՝ Բելա Քոչինյանը, իմ միջոցով:

Մեղա Գալստյան

Արխիվը ներառում է տվյալ ժամանակահատվածի կարևորագույն իրադարձություններին վերաբերող փաստաթղթեր, գրություններ, նկատառումներ, մտորումներ, լուսանկարներ: Կարծում եմ՝ այն կարևոր ուղերձ է պարունակում հատկապես ազգային զարթոնքի վերաբերյալ: Հարուստ նյութը օգտակար կլինի յուրաքանչյուր ուսումնասիրողի համար՝ առարկայական պատկերացում կազմելու տիրող մթնոլորտի մասին: Արխիվի ուսումնասիրությունը թույլ է տալիս նորովի լուսաբանել տարբեր երևույթներ, վերանայել ընդունված որոշ տեսակետներ: Նյութերին ծանոթանալով՝ ինձ հետաքրքրեց մի շատ կարևոր վերլուծություն հայկական ատոմակայանի կառուցման մասին՝ «Ինչո՞ւ և ինչպե՞ս կառուցվեց ատոմակայանը» վերտառությամբ: Այն առիթ եղավ նաև ծանոթանալու ժամանակի մամուլի հրապարակումներին, հատկապես 1988 թ. նոյեմբերի 18-ին «Պրավդա» թերթում լույս տեսած ՄԱԳԱՏԷ-ի գլխավոր քարտուղար Հանս Բլիքսի հոդվածին: Մինչ նյութին անցնելը ամփոփ ներկայացնենք ՀԿԿ 1-ին քարտուղարի կենսագրությունը:

Անտոն Երվանդի Քոչինյանը ծնվել է 1913 թ. Գուգարքի շրջանի Վահագնի գյուղում: 1966 թ. փետրվարին Հայաստանի կենտկոմի պլենումը Ա. Քոչինյանին ընտրում է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնում, որը նա վարում է մինչև 1974 թ.: Ա. Քոչինյանի օրոք Հայաստանում թափ են առել արդյունաբերական, բնակարանային և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունը, հանրապետության քաղաքների և գյուղերի բարեկարգումը: Քոչինյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերի՝ խաղողագործության, պտղաբուծության և անասնաբուծության զարգացմանը: Այդ շրջանում մեծ ուշադրություն է

դարձվել ժողովրդի բարեկեցության մակարդակի բարձրացմանը, կուսակցական և խորհրդային մարմինների գործունեության բարելավմանը: Ա. Քոչինյանն ընտրվել է ՍՄԿԿ 19-24-րդ համագումարների պատգամավոր, իսկ ՍՄԿԿ 23-24-րդ համագումարներում՝ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ:

Մեղա Գալստյան

Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն շրջանի բաժնի վարիչ

Ինչո՞ւ և ինչպե՞ս է կառուցվել ատոմակայանը

Պատերազմը նոր էր վերջացել: Մարտիկները վերադառնում էին իրենց հայրենի քաղաքներն ու գյուղերը մեծ հույսով, որ կանցնեն խաղաղ աշխատանքի և կստեղծեն նորմալ կյանք իրենց և իրենց ընտանիքների համար:

Հայրենական պատերազմի տարիներին …. դժվարություններ եղան թիկունքում, նույնիսկ այն վայրերում, ուր ֆաշիստները ոտք չէին դրել: Պատերազմի չորս տարիների ընթացքում ոչ միայն չէին կառուցվել նոր ձեռնարկություններ ու արտադրական այլ օբյեկտներ, այլև եղածներից շատերը քայքայվել կամ քայքայման աստիճանի էին հասել: Նման վիճակում էր գտնվում մեր հանրապետությունը, վերադարձած մարդիկ մնացել էին առանց աշխատանքի, գյուղը գրեթե քայքայվել էր, լրացուցիչ բանվորական ձեռքեր չկային, և հնարավոր չէր ավելին օրվա հաց ճարելու համար, ընտանիքի գոյությունը պաշտպանելու համար մասսայաբար փոխադրվում էին քաղաքներ, հատկապես մայրաքաղաք Երևան, Լենինական և Կիրովական, հույս ունենալով աշխատանք գտնել:

Հիմնական թվականներին երկրի ունեցած միջոցները հատկացվեցին պատերազմի հետևանքով ավերված քաղաքների վերականգնմանը: Մեր հանրապետության էկոնոմիկան վերականգնելու և զարգացնելու համար օգտագործում էր իր ներքին միջոցները, որոնք շատ քիչ էին: Թույլ զարգացած արդյունաբերությունը, եղածները՝ երեք խոշոր ձեռնարկություն երեք քաղաքներում, Երևանում՝ քիմիական գործարան իր կարբիդի արտադրությամբ, Կիրովականում՝ քիմիական կոմբինատը, Երևանում ալյումինի գործարանը, որոնք օգտագործում էին հանրապետության արտադրվող էլեկտրաէներգիայի ավելի քան 80 տոկոսը: Արդյունաբերության նման կառուցվածքը հնարավորություն չէր տալիս զարգացնելու արդյունաբերության ավելի առաջադեմ և ոչ էներգատար ճյուղերը, ասենք՝ սարքաշինությունը, մեքենաշինությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը և այլն: Մի խոսքով, Կիրովականի քիմկոմբինատը, Երևանի կաուչուկի և կարբիդի գործարանները, Ալավերդու պղնձաքիմիական գործարանները, փաստորեն, ծախսում էին հանրապետության

Անուշ Քոչինյան

ծախսվող էլեկտրաէներգիայի 90 տոկոսից ավելին: Հանրապետության ղեկավարության առջև իր ամբողջ հասակով կանգնեց էլեկտրաէներգիայի վերացման հարցը:

Հիմնական թվականներին սկսվեց ջերմաէլեկտրակայանների կառուցումը, կառուցվեցին Երևանի, Հրազդանի, Կիրովականի ջերմաէլեկտրակայանները: Այս խոշոր կայանները կառուցվում էին գազի հումքի վրա, նախատեսվում էր գազ ստանալ Ադրբեջանից և շահագործել այդ կայանները, բայց, ցավոք, ասեմ, որ Ադրբեջանը նույնպես չուներ բավարար չափով գազ և հրաժարվեց գազի մատակարարումից, նույնիսկ կենցաղային նպատակների համար օգտագործելու: Այս պայմաններում դրությունը որքան գնում, լրջանում էր, առանց էներգիայի հնարավոր չէր զարգացնել էկոնոմիկան: Հայաստանի կառավարությունը միութենական հանրապետության առջև հարց դրեց երկրի այլ վայրերից վառելիք, առաջին հերթին՝ գազ մատակարարել: Մեր ուսումնասիրության և միութենական պետպլանի տեղակալ Վ. Կալամկարովի խորհրդով, Վրաստանի և Հայաստանի ղեկավարությունը դիմեցին Սովետմիության կառավարությանը՝ Ստավրոպոլից գազ ստանալու: Սկսվեց այդ գազամուղի շինարարությունը և շուտ ավարտվեց: Մի քանի տարի մենք օգտվեցինք Ստավրոպոլի գազից, բայց գազն այնքան քիչ էր, որ հազիվ բավարարում էր Վրաստանի մինիմալ պահանջները: Սովետական Միության և Իրանի միջև հարաբերությունը լավացել էր: Իրանի շահը Մոսկվայում գտնված ժամանակ առաջարկեց գազ վաճառել Սովետական Միությանը: Օգտվելով այդ հայտարարությունից, Հայաստանի կառավարությունը հատուկ խնդրանքով, ելնելով հանրապետության ծանր վիճակից, որոշեց Իրանից գնել գազ և գազամուղն անցկացնել Նախիջևանով, Հայաստանի վրայով Վրաստան:

Մինիստրների խորհրդի նախագահ Կոսիգինը մեկնում էր Իրան: Նա կանգ առավ Երևանում, նայեց մեր մայրաքաղաքի հիշարժան վայրերը, այցելեց

Հայոց Մեծ եղեռնի հուշարձանը, ծաղկեպսակ դրեց հուշարձանին, եղավ Մ. Սարյանի մոտ, Սարյանը նրան նվիրեց իր նկարներից մեկը: Նա գնում էր սկզբունքորեն պայմանավորվելու՝ գազ գնել Իրանից: Հայաստանում գտնված ժամանակ Կոսիգինը համոզվեց, որ գազամուղը պետք է անցկացնել Հայաստանի վրայով, որովհետև մեր հանրապետությունը զրկված է ամեն տեսակի վառելիքից, բացի դրանից՝ Ադրբեջանն ունի իր վառելիքը: Այս բոլորից հետո Պետպլանի նախագահ Բայբակովը փոխեց ուղղությունը, և գազամուղն անցկացվեց Ադրբեջանի վրայով, որի հետևանքով առյուծի բաժինը Ադրբեջանը վերցնում էր իրեն, իսկ մեր հանրապետությանն ու Վրաստանին տրվում էր այնքան, որ հազիվ բավարարում էր կոմունալ ծախսերին, այն էլ՝ ոչ լրիվ: Ջերմաէլեկտրակայանները մնացին առանց վառելիք, լավագույն դեպքում՝ մազութով, իսկ մազութով աշխատեցնելը նշանակում է բնության ոչնչացում, մանավանդ եթե կայանը հզոր է: Այդ պայմաններում մեզ մնում էր դիմել այլ միջոցների, էներգետիկայի այլ աղբյուրների: 1960-ական թվականներին մեծ թափով սկսվեց ատոմային կայանների կառուցումը, ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում, ընդ որում արտասահմանյան մասշտաբները շատ ավելի լայն էին, քան մեր երկրում: 1950-60-ական թվականների սկզբներին Երևանում և մյուս քաղաքներում գործազուրկների թիվը մի քանի տասնյակ հազարների էր հասնում: Այս վիճակը ստիպում էր շուտափույթ միջոցների դիմել՝ մի կողմից՝ արտադրական ձեռնարկությունների կառուցումը, մյուս կողմից էլ՝ էլեկտրաէներգիայի ստեղծումը, առանց որի հնարավոր չէր հաստոցաշինության, չափիչների և այլ ոչ էներգատար բնագավառների զարգացումը: Մինչև ատոմային կայանի կառուցումը հանրապետության ջանքերի լարման միջոցով կրճատվեցին Կիրովականի և Երևանի քիմկոմբինատների էլեկտրաէներգիայի ծախսումը: Երևանում նաիրիտի ստացման կարբիդի փոխարեն օգտագործեց բնական գազը, իսկ կարբիդը սարսափելի շատ էներգիա էր ծախսում: Իսկ Կիրովականում ծանր ջրի արտադրությունը լիովին հանվեց: Այս միջոցառումները հնարավորություն տվեցին հանրապետությունում կազմակերպել և կառուցել տասնյակ հաստոցաշինական և չափիչների գործարաններ, ընդ որում նոր ձեռնարկությունների գրեթե մեծ մասը տեղադրվեցին շրջկենտրոններում, ինչպես՝ Արթիկում, Ստեփանավանում, Ղափանում, Գորիսում, Մարալիկում, Ազիզբեկովում, Ալավերդիում, Կամոյում, Սևանում, Ապարանում, նույնիսկ Շամշադինում: Այս միջոցառումները մեծ չափով կրճատեցին մարդկային հոսքը դեպի մայրաքաղաք, մյուս քաղաքները: Երևանում, Լենինականում և Կիրովականում կազմակերպվեց գիտահետազոտական, արտադրական թեքումով ձեռնարկություններ, ինչպես՝ մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ինստիտուտը, Կիրովականում ավտոմատիկայի գործարանը, Լենինականի միկրոշարժիչների գործարանները: Այս գործարանները սկզբնական շրջանում աշխատում էին ոչ լրիվ կարողությամբ, պատճառներից մեկն էլ էներգիայի պակասն էր: 1958 թվի վերջում հանրապետության գրեթե բոլոր գյուղերը էլեկտրաֆիկացվել էին, ցավոք, նորից էլեկտրաէներգիայի պակասից ելնելով, միայն լապտերի լույսեր էին տալիս, հնարավոր չէր մոտորներ (շարժիչներ) աշխատեցնել, մեքենայացնել գյուղի աշխատանքի պրոցեսները: Մեր կարծիքով, էլեկտրաէներգիայի աղբյուրները լրիվ սպառվել էին, մնում էր անցնել ատոմակայանի կառուցմանը: Ատոմակայանի մասին խոսելիս մեր բոլորի մոտ էլ վախ կար, մանավանդ որ մեր գիտնականներից մի քանիսը դեմ էին արտահայտվել: Մոսկվայում եղած ժամանակ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինը ասաց, որ ուկրաինացիները հրաժարվում են փոքր կայան կառուցելուց, նրանք ցանկանում են կառուցել միլիոնանոց կիլովատ ուժի կայան, իսկ մենք ունենք պատրաստի սարքավորում՝ 400 հազար ռեակտոր, որը շատ կհամապատասխաներ ձեր հանրապետությանը, միանգամից կլուծի էլեկտրաէներգիայի պակասը: Ես խնդրեցի ժամանակ տալ գիտնականների հետ խորհրդակցելու, մինչև իմ որոշման պատասխանը: Կոսիգինն ասաց, որ այդ հարցը դեռ քննարկվում է Պետպլանում, դա երկար կտևի: Մոսկվայում առաջինը դիմեցի մեր հայրենակից, ակադեմիկոս Ալիխանովին: Նա ասաց, որ, ափսոս, իր ռեակտորը պատրաստ չէ այժմ, պատրաստ է ակադեմիկոս …. (հեղինակը չի ցանկացել նշել համապատասխան ազգանունը – Ս. Գ.) ռեակտորը: Վտանգավորության մասին խոսելիս Ալիխանովը հրավիրեց ճաշի և ասաց, որ միաժամանակ ծանոթանամ չորս հարյուր հազար ռեակտորի հեղինակի և մյուս ատոմի մասնագետների հետ: Երեկոյան ակադեմիկոս Ալիխանովը ուղարկեց իր մեքենան, գնացի իր ամառանոցը՝ քաղաքից ոչ հեռու, եթե չեմ սխալվում՝ Սերպուխովո: Մինչ իր գալը բոլորը հավաքվել էին դրսում, զրուցում էին: Ալիխանովը ծանոթացրեց հավաքվածներին ռեակտորի հեղինակ Վարոմինի հետ, /ВВР 440/ ակադեմիկոս Ա. Ալեքսանդրովը, ատոմային

էներգիայի օգտագործման կոմիտեի նախագահ Սլավսկին, որը հետագայում դարձավ միջին մեքենաշինության մինիստր: Այս նախարարությունը ժամանակին զբաղվել է ատոմային զինատեսակների և ատոմային ոլորտի արդյունաբերության կառավարմամբ: Ալիխանովն ասաց, որ Պետպլանը առաջարկում է ընկեր …. (դարձյալ ազգանունը գաղտնի է պահված – Ս. Գ.) ռեակտորի բազայի վրա կառուցել Հայաստանում, սակայն հայ ղեկավարները կասկածում են, վախենալով վտանգավորությունից, մանավանդ որ Հայաստանը սեյսմիկ շրջանում է: Բոլորը միաբերան վստահեցրեցին, որ ոչ մի վտանգ չկա, իսկ ընկեր Սլավսկին ասաց. «Եթե ինձ հարցնես, ես ատոմակայանը կարող եմ դնել Կարմիր հրապարակում»: Թվարկեց մի քանի արտասահմանյան փոքր երկրներ, որտեղ դրանք կառուցվել են՝ Հունգարիան, Ֆինլանդիան և այլն: Խոշոր գիտնականները գտնում էին, որ նույնիսկ հարկ չկա ռադիացիոն զոնա ստեղծել, մեկուկես կիլոմետր հարյուր հիսուն մետրը լրիվ բավական է, օրինակ բերելով Կույբիշևի փորձնական կայանը և այլն: Խոր համոզված լինելով գիտնականների դրական կարծիքի մեջ, վտանգավորության բացակայության մասին, սկսեցի վստահորեն զբաղվել ատոմակայանի կառուցման հարցով: Այդ քննարկումը երկար տևեց, ատոմային էներգետիկայի կոմիտեն միացրեցին միջին մեքենաշինության մինիստրությանը և ղեկավար նշանակեցին մեր հայրենակից Ա. Պետրոսյանցին: Երբ արդեն որոշվեց շինարարության հարցը, պահանջվեց նորից կառուցել փոքր կայան ևս: Այդ ժամանակ մեզ օգնության հասավ ընկեր Պետրոսյանցը: Նա գտնում էր, որ խոշորագույն կայանների մոտ կառուցել այդպիսի փոքր ատոմակայան տնտեսապես օգտավետ չէ, և վերջնականապես որոշվեց կառուցել մեր հանրապետությունում: Երբ սկսվեց ատոմային կայանի նախագծային աշխատանքները, Երևան ժամանեցին նախագծողների մեծ խումբ՝ տեղը որոշելու և նախագծման աշխատանքները սկսելու համար:

Հանրապետության ղեկավարությանը առաջարկվեց ատոմակայանը տեղադրել Արազդայանում, այնտեղ, որտեղ այժմ կառուցվել է Սևակավան սովխոզը, իսկ սկզբնական շրջանում կանգ առան Արարատի շրջկենտրոնից երեք կմ հեռու՝ Չիման գյուղում, առաջարկելով տեղափոխել գյուղը: Գյուղացիները բառացիորեն մեծ բողոքներ ուղարկեցին, ստիպված եղանք փնտրել նոր տեղ: Մեր ղեկավարներից շատերը պնդում էին Ազիզբեկովի շրջանի խորքում կամ Կուրթանում: Մի խոսքով, ավելի քան մեկ տարի քննարկվեց ատոմային կայանի տեղի հարցը: Նախագծողներն առաջին օրերից սկսած պնդում էին Ուչթափա կոչվող տեղամասում, այսինքն՝ մոտավորապես այժմյան տեղում, քանի որ այստեղ անօգտագործելի հողեր էին, և, բացի դրանից, նախատեսվում էր կայանի գոլորշու հաշվին կառուցել մինչև հինգ հարյուր հեկտար ջերմոցներ, այդ տեսակետից այստեղ ազատ հողեր էին: Երբ արդեն գիտնականների կարծիքով ոչ մի վտանգ չկար, ապա այս տարածությունը մեր առաջարկած տեղերի համեմատությամբ ավելի նպատակահարմար էր. անօգտագործելի հողեր և, ինչպես ասացի, ջերմոցների համար միանգամայն նպաստավոր: Այդ ժամանակներից անցել է 20-25 տարի, երբ տեղի է ունեցել Չեռնոբիլի ահավոր վթարը, երբ ամբողջ աշխարհը ցնցեց ատոմակայանի վտանգավորությունը, դրանից հետո էլ՝ 1988 թ. նոյեմբերի 18-ին, «Պրավդա» թերթը տպագրել է ՄԱԳԱՏԷ-ի գլխավոր քարտուղար Հանս Բլիքսի հոդ-վածը՝ ատոմային էներգետիկայի մասին: Հոդվածը վերնագրված է «Մեծ է արդյոք ռիսկի աստիճանը»: Ատոմային էներգետիկայի խնդիրներն այսօր հուզում են միլիոնավոր մարդկանց: Ամենատարբեր և երբեմն հակադիր կարծիքներ են արտահայտվում. ոմանք դրա հետագա զարգացման կողմնակիցներ են, մյուսներն էլ՝ բոլոր առկա ԱԷԿ-ների լիկվիդացման, նորերի կառուցման դադարեցման կողմնակից: Այս թեմաների շուրջ Ատոմային էներգետիկայի հարցերով միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) գլխավոր քարտուղար Հանս Բլիքսը պատասխանում է Ավստրիայում թղթակից Վ. Դուբրովինի հարցերին:

Այսքանից հետո խոսել ատոմային կայանի օգտավետության մասին, իմ կարծիքով, ավելորդ է և անհիմն: Բելգիայի և մեր հանրապետության տարածքները հավասար են: Նրանց մոտ բնակվում են և բարձր ապրելակերպ ունեն ավելի քան 16 միլիոն մարդ: Գաղտնիքը նրանում է, որ ամենազարգացած արդյունաբերության փոքր մասն է զբաղվում գյուղատնտեսությամբ, բայց ունի վերին աստիճանի բարձր մակարդակ: Պետք է նշեմ, որ ունի նաև ատոմ և Եվրոպայի մեծ մասին մատակարարում է ծաղիկ և ջերմոցային այլ արտադրանք, դրանք բոլորը հիմնված են էլեկտրաէներգիայի բազայի վրա, բայց բելգիացիները չեն վախենում ատոմային կայանից: Մարդու սիրտը պայթում է, երբ տեսնում է մի հինավուրց քաղաքակիրթ ազգ, որի հասակակիցները վաղուց պատմական հուշ են դարձել, ետ է մնում տնտեսապես մյուս ժողովուրդներից և չունի էներգիայի աղբյուրներ, որի հետևանքով հայկական գյուղերի մեծ մասը աթարի ամրոցներից չի հրաժարվել էներգիա չունենալու պատճառով: Ինչ ասեմ, որքան խորհում ես, գալիս ես մի եզրակացության՝ ատոմակայանի կառուցումը սխալ չէ, և նա այս տարիներին իր դրական դերը կատարեց, բայց երբ տեսնում ես իրադրությունը, երբ հարյուրավոր տարիներ է անցել այն ժամանակից, երբ այսպիսի ուժով երկրաշարժ եղավ մեր հայրենի հողում, ակամայից մտածում ես՝ «աստված ոչ անի, եթե այդ ուժը, ինչպիսին Լենինականում, Կիրովականում եղավ, դրա դիմաց ոչ մի կառույց չէր դիմանա»: Մանավանդ որ ամենաամուր կառույցները հաշվարկված են ինը բալի տակ, իսկ այս ահավոր երկրաշարժը եղավ 11 բալ: Ինչ զարհուրելի ուժ ու աղետ էր:

Երկու խոսք

Աղետի վայրում լինելուց հետո օրեր ու շաբաթներ

անիծում ու արտասվում ես մեր ժողովրդի բախտին, երբ սթափվում ես ու խորամուխ լինում մեր անելիքների մեջ, ակամայից գալիս ես այն եզրակացության, որ պետք է լայն մասշտաբներով օգտագործել արտասահմանյան շինարարական տեխնիկան: Հայտնի է, որ մեր երկիրը, բոլոր հանրապետությունները և խոշոր քաղաքները ցանկություն են հայտնել պրակտիկ մասնակցություն ցույց տալ մեր քաղաքների, գյուղերի վերականգնմանը: Մասսայական ինֆորմացիայի աղբյուրներից հայտնի է, որ ցանկություն են հայտնել քաղաքների վերականգնման գործին մասնակցել արտասահմանյան մի շարք երկրներ: Իմ կարծիքով՝ պետք է խրախուսել այդ համամարդկային քայլին և խնդրել, որ նրանք մասնակցեն, այդ առաջ՝ կօգնեն կարճ ժամանակում կառուցել երկրաշարժից տուժած քաղաքներն ու գյուղերը, երկրորդ՝ կնպաստի շինարարական տեխնիկայի մակարդակի բարձրացմանը: Գաղտնիք չէ, որ մեր հանրապետության շինարարական տեխնիկան մնացել է 40-ական թվականների մակարդակին, երևի մեր շինարարները օրինակ կվերցնեն մեր արտասահմանյան և Միության առաջավոր շինարարներից: Վերջապես մեր ժողովուրդը կհանգրվանի իր բնակավայրում, կմտնի նորմալ ստեղծագործական հունի մեջ:

Մեր ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում շատ զրկանքներ է տեսել ու կրել: Արիաբար կռվել է օտարերկրյա թշնամիների դեմ, բազմիցս քանդվել են մեր գյուղերն ու շեն քաղաքները, բայց նա միշտ էլ ուժ է գտել վերականգնելու, նույնիսկ թուրքական ցեղասպանության տարիներից հետո մեր աշխատասեր ու տաղանդավոր ժողովուրդը զինվորագրվեց սովետական կարգերին և պատմական կարճ ժամանակում զարգացման նոր բարձր աստիճանի հասավ էկոնոմիկայի, մշակույթի և այլ բնագավառներում: Ես համոզված եմ, որ կգտնվեն էլեկտրաէներգիայի այլ աղբյուրներ, կօգնեն եղբայրական հանրապետությունները, երևի կմիացվի մայր Ռուսաստանի էներգոսիստեմի հետ, և հանրապետության էկոնոմիկայի զարգացումը ոչ միայն չի դանդաղի, այլ ավելի արագ կաճի: Ժողովուրդների բարեկամության ընտանիքում նրանց օգնության, համաշխարհային առաջադեմ մարդկության օգնությամբ կկառուցվեն մեր ավիրված գյուղերն ու քաղաքները, ավելի գեղեցիկ կդառնան Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը և մեր հարյուրավոր գյուղերը: Խոնարհվում եմ զոհերի առջև, միաժամանակ կոչ եմ անում հայ ժողովրդին չվհատվել, ուժ ու եռանդ գտնել ավելի գեղեցիկը ստեղծել որպես հուշարձան մեր անթիվ զոհերի: Միայն ու միայն այս վախից ելնելով, երբ բնությունը մեզ չի խղճում, անհրաժեշտ է ատոմային կայանը կանգնեցնել մինչև տեխնիկապես կորոշվի նրա լրիվ անվտանգությունը, նույնիսկ այսպիսի երկրաշարժի դեպքում: Այսպես, երևի, այժմ պետք է կանգնեցնել ատոմային կայանը, բայց չպետք է մոռանալ, որ մեր հանրապետության ապագան մեր

ատոմային կայանն է: Մենք պետք է գիտենանք, որ մեր հիասքանչ լեռներում կուտակված է բավարար չափով ուրան, որը կարող է լինել էներգիայի արտադրության անսպառ աղբյուր: Ես համոզված եմ, որ տեխնիկայի զարգացման այս դարում ատոմային էներգիայի օգտագործումը կդառնա ամենաապահովը, վստահելի աղբյուրը:

Պատկերացրեք մի փոքր հանրապետություն, ինչպիսին մերն է, չունենալով վառելիքի գրեթե ոչ մի աղբյուր, ատոմային կայանի առկայության դեպքում կունենա էներգիայի արտադրության անսպառ աղբյուր: Հավատացեք, որ աշխարհի շատ երկրներ մեզ պետք է նախանձեն, երբ վառելիքի մյուս պաշարները վերջանալու վրա է լինելու, ատոմային կայանի ռեակտորները անվտանգ կլինեն, մեր հանրապետությունում կկառուցվի նոր էլեկտրական՝ մեր սքանչելի լեռների տակ պարունակվող ուրանի պաշարների բազայի վրա: Հայտնի է, որ մեր ունեցածը կարող է բավարարել երկար տարիներ: Ատոմային էներգիայի արտադրությունը մեր ապագան է: Ճիշտ է հաշտվել այն մտքի հետ, որ կարող է վթար լինել ատոմային կայանում, և անասելի դժբախտության առջև կանգնեցնել մի բուռ ժողովրդին: Այս հոգեբանությանը հնարավոր չէ համաձայնվել, քանի որ այսպիսի օբյեկտները շատ-շատ են: Նույն ձևի կարելի է մտածել մեր լեռներում կառուցված և կառուցվող ջրամբարների մասին, իսկ եթե քանդվի, չէ՞ որ դա նույնպես հնարավոր է, այս դեպքում զոհերն ու ավիրածությունները ավելի շատ կլինեն: Բայց չէ՞ որ առանց այդ ջրամբարների հնարավոր չի լինի փոխել բնությունը, մարդկանց համար բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծել: Ուրեմն պետք է կառուցել թե՛ ատոմակայաններ և թե՛ ջրամբարներ ու այլ բարդ կառույցներ, բայց դրանք պետք է կառուցել որակով, տեխնիկայի նորագույն նվաճումների բազայի վրա և պահանջվող խնամքով շահագործում ապահովել, ինչպես անում են զարգացած շատ երկրներում: Ցավով պետք է ասեմ, որ մեր կառույցների շահագործումն ու սպասարկումը չափազանց վատ է, շատ է անպատասխանատվությունն ու անկարգապահությունը:

Աչքը տեսածից է վախենում, բայց ժողովրդական առածն ասում է՝ «գայլից վախեցողը ոչխար չի պահի»: Մեզ հարկավոր երկիրը շենացնելը առանց էլեկտրաէներգիայի հնարավոր չէ: Նույնիսկ այս պայմաններում առանց էլեկտրաէներգիայի հնարավոր չէ թռչնաբուծության զարգացումը, ուր մնաց ավելի բարդ պրոցեսներ: ■

Էրդողանի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում, կամ Յենի Սուլթան Էրդողան (հոդված 2)

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Էրդողանի կառավարման վաղ շրջանը չի փայլել նրա քաղաքական ներուժի որակով. միակ բանը, որ նա ուներ, քվեարկությամբ հաստատված լեգիտիմությունն էր, ինչը, սակայն, անհատի պաշտամունքի կառուցման համար, որպես ներուժ, գործնական մեծ հնարավորություններ չէր պարունակում: Սա պատճառ դարձավ Էրդողանի ու նրա քաղաքական թիմի համար դիմելու արդեն իսկ գոյություն ունեցող մեթոդական գործիքակազմի, որն ապացուցել էր իր արդյունավետությունը Մուստաֆա Քեմալի անհատի պաշտամունքի ձևավորմամբ արևելյան այնպիսի մի հասարակությունում, ինչպիսին թուրքականն էր:

Եթե հարցնենք Թուրքիայի Հանրապետության պատմության վաղ շրջանին վերաբերող սկզբնաղբյուրներին ծանոթ անկախ ուսումնասիրողին, թե ով է Մուստաֆա Քեմալը, վերջինս իր հերթին կհարցնի, թե որ Մուստաֆա Քեմալի մասին է խոսքը: Մեզ հայտնի է միայն մեկ Մուստաֆա Քեմալ՝ Ղազի Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը, սակայն հարցին ի պատասխան հնչող այս հարցը ևս անտեղի չէ: Անտեղի չէ, քանի որ 20-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիայի քաղաքական դաշտում արմատական դիրքորոշում ունեցող ձախ-սոցիալիստական հոսանքներին հարող ուժերը Մուստաֆա Քեմալ ասելիս պատկերացնում էին իմպերիալիզմի դեմ պայքար մղած առաջին թուրք ռազմաքաղաքական գործչին՝ որպես փաստ ներկայացնելով քեմալա-բոլշևիկյան կապերը, մասնավորապես՝ բոլշևիկյան վերնախավի հետ Քեմալի նամակագրական արխիվը: Բոլշևիկյան մի պատվիրակության հետ 1920 թ. նոյեմբերին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Մուստաֆա Քեմալը հավաստիացնում էր բոլշևիկյան պատվիրակության ներկայացուցչին, որ ինքն ու իր «ընկերները համակրանք ունեն առ կոմունիզմը, սակայն հանգամանքները ստիպում են նրանց լռել այդ փաստի մասին»[1]: Ղազի Մուստաֆա Քեմալը միևնույն ժամանակ իսլամիստների Քեմալն է: «Ղազի»-ն, որն արաբերենում ունի «հերոս՝ իսլամի մարտիկ» նշանակությունը[2], իսլամում օգտագործվող տիտղոս-տերմին է, որը շնորհվում է հանուն իսլամի «անհավատների» դեմ մարտնչող-հաղթանակող մարտիկին: 1921 թ. սեպտեմբերի 19-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը այս տիտղոսը մարշալ կոչման հետ շնորհեց Մուստաֆա Քեմալին՝ Սաքարիայի ճակատամարտում հույների դեմ տարած հաղթանակի համար[3]: Չնայած ավելի ուշ իսլամի դեմ Մուստաֆա Քեմալի վարած անհաշտ քաղաքականությանը՝ այն դարձել էր նրա պաշտոնական անվան բաղկացուցիչ մասը: Այսպիսով՝ մուսուլման թուրք քաղաքացու համար Աթաթյուրքը մեկն է, ով պաշտպանել է Անատոլիայի մուսուլմաններին անհավատների՝ «գյավուրների» ոտնձգություններից[4]: Ծայրահեղ աջ ուղղվածության ազգայնականները Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքին

դիտում են որպես թուրք ազգի ազատագրողի[5] և գտնում, որ յուրաքանչյուր թուրքի պարտքն ու պատիվն է շարունակել իրագործել նրա գաղափարները:

Այս կամ այն գաղափարական դաշտում Մուստաֆա Քեմալի գործելը և դրա հիմնավորվածությունը փոքր կարևորություն ունեն, քանի որ Աթաթյուրքի սկզբունքային նպատակը իր ընդարձակ տեսլականի իրագործումն էր: Այն տարբեր գաղափարները, որոնք նա մեկտեղել էր, կոչված էին միայն ծառայելու որպես գործիքներ՝ իրականացնելու իր հիմնական ծրագրերը, և դրանք ինքնանպատակ չէին[6]: Հետևաբար նրա ինտելեկտուալ ձգտումները որևէ սահման չունեին: Որպես երևակայող՝ նա հնարավոր բոլոր աղբյուրներից վերցրեց այն ամենը, ինչը կարող էր օգտակար լինել իր քաղաքական ծրագիրը և ուտոպիան կյանքի կոչելու համար[7]: Աթաթյուրքն իր ժամանակի սոցիալական իրողությունների արդյունքն էր[8]: Միջավայրը, որտեղ նա «ձևավորվել» էր, հարկադրել էր նրան ընտրելու որոշակի հատվածներ ու մասեր՝ ամբողջացնելու իր տեսլականը և հասնելու դրա իրականացմանը: Սալոնիկում անցկացրած վաղ տարիները, աշխարհիկ և ռազմական դպրոցներում ստացած կրթությունը, ծառայությունն օսմանյան բանակում, մասնակցությունը երիտթուրքական շարժմանն ու անդամակցությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը հիմնավոր դերակատարություն ունեցան նրա աշխարհայացքի և ուտոպիական հայեցակարգի ձևավորման[9], ինչպես նաև այդ ծրագրի իրականացման հարցում:

Վերը ներկայացրինք Մուստաֆա Քեմալի մարմնավորումներից մի քանիսը, սակայն ամբողջապես թվարկել, թե ժողովրդագրական և հասարակա-քաղաքական բազմապիսի դիմագիծ ունեցող Թուրքիայում քանիսն են դրանք, հնարավոր չէ: Էլ ավելի դժվար է նշել այն կոնկրետ ժամանակահատվածը, երբ դեռևս ռազմական վարժարանի սան Քեմալը սկսեց հետաքրքրվել քաղաքականությամբ և ներգրավվեց քաղաքական գործընթացներում:

Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի քաղաքական կենսագրությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի.

1) անկախության համար մղվող պայքարին նախորդած շրջան, որը մեկնարկում է երիտթուրքերի շարքերն անցնելու պահից և տևում մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը (1908-1918 թթ.),

2) անկախության պայքարի շրջան, որի սկիզբը ինքը՝ Քեմալը, սահմանում է 1919 թ. մայիսի 19-ը՝ իր՝ Սամսուն ժամանելու պահը[10], և որն ավարտվում է 1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ[11] ու դրանից որոպեներ անց ԹԱՄԺ-ի կողմից Մուստաֆա Քեմալի՝ Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ ընտրմամբ[12] (1919-1923 թթ.),

3) Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի նախագահության շրջան, որը տևում է 15 տարի՝ 1923 թվականից մինչև Քեմալի մահը՝ 1938 թվականը:

Ինչպես Մուստաֆա Քեմալն է գրում իր հուշերում, ռազմական վարժարանում սովորելու սկզբնական շրջանում նրա և նրա ընկերների քաղաքական պատկերացումներն աղոտ էին և սահմանափակվում էին միայն հայրենասիրությամբ ու կայսրության մասին մտահոգություններով[13]. *«....ռազմական քոլեջում անցկացրածս տարիներին որոշ քաղաքական գաղափարներ քննարկվում էին: Սկզբում մենք հստակ պատկերացում չունեինք իրերի դրության մասին....»*[14]:

Շարունակելով ռազմական գործի ուսանումը՝ Մուստաֆա Քեմալը փորձում էր համատեղել քաղաքական գործունեությունը ռազմական կրթության հետ: Նա փորձում էր իրեն դրսևորել որպես քաղաքականապես իրազեկ և քաղաքական հավակնությունների տեր արհեստավարժ զինվորականի: Նա որևէ հակասություն չէր տեսնում քաղաքական գործունեությամբ զբաղվելու և զինվորական ծառայության միջև: Ըստ նրա՝ երկուսն էլ հետապնդում են նույն նպատակը՝ պաշտպանել պետությունը[15]: Որպես ազատագրական շարժման ղեկավար և հետագայում նաև քաղաքական առաջնորդ՝ Մուստաֆա Քեմալն իր գործունեությունը, ըստ երևույթին, սկսեց քաղաքականության, պետության և կառավարման մասին տեսական սահմանափակ գիտելիքներով[16]: Տարված լինելով ֆրանսիական քաղաքական փիլիսոփայության գաղափարներով՝ նա այնքան քիչ գիտելիքներ ուներ այդ ոլորտից, որ քննարկումների ժամանակ հաճախ շփոթում էր բարոն դե Մոնտեսքյոյին Ժան-Ժակ Ռուսոյի հետ[17]:

Ռազմական ուսումնարանում սովորելու տարիներին Մուստաֆա Քեմալը հիմնում է փոքր, գաղտնի մի կազմակերպություն, որը քարոզչություն էր ծավալում հօգուտ օսմանյան սահմանադրության վերականգնման[18]: Մուստաֆա Քեմալն իր փոքր ընկերախմբով հրատարակում էր ձեռագիր թերթ, որում փորձում էր վերլուծել ու մեկնաբանել օսմանյան կառավարության վարած քաղաքականությունը և քննադատում էր պետական կառավարման գործում եղած թերացումներն ու բացթողումները[19]: Ռազմական և քաղաքական գործիչ Ալի Ֆուադ Ջեբեսոյի վկայությամբ, ով եղել է Քեմալի դասընկերը, թերթի առաջին երկու կամ երեք համարները հրատարակվել են, երբ Քեմալը տակավին ռազմական քոլեջի երրորդ դասարանում էր, այսինքն՝ քննարկվող դեպքերը տեղի են ունեցել մոտ 1902 թվականին[20] (Քեմալը Ստամբուլի ռազմական քոլեջ է ընդունվել 1899 թ. մարտի 13-ին[21]):

1907 թ. հոկտեմբերին Մուստաֆա Քեմալն իր հայրենի Սալոնիկ քաղաքում ընդունվեց մասոնների շարքերը[22], իսկ 1908 թ. փետրվարին անցավ երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության շարքերը[23]:

1908 թ. հուլիսի 24-ին երիտթուրքական հեղաշրջման հետևանքով գահընկեց արվեց Աբդուլ Համիդ II սուլթանը, և Օսմանյան կայսրությունում վերականգնվեց 1878 թ. սահմանադրությունը[24]: Մուստաֆա Քեմալը, ով այդ ժամանակ նշանակված էր իր հայրենի Սալոնիկում և ծառայում էր օսմանյան 3-րդ բանակի շտաբում[25], հեղաշրջումից օրեր առաջ նշանակվել էր ծառայության նաև Ռումելիայի արևելյան երկաթգծի տեսչությունում որպես ռազմական տեսուչ[26]: Հեղաշրջման նախօրեին նա կատարում էր կապավորի դեր «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ Սալոնիկում գտնվող կենտրոնի և Սկոպիեի միջև:

Հեղաշրջման ժամանակ Քեմալը, ինչպես ինքն է ասում, Սկոպիեում էր՝ *«Սալոնիկից տրված ցուցումներին համապատասխան գործողությունները համակարգելու նպատակով, քանզի այնտեղ անտեղի շփապողականություն էր նկատվում սահմանադրության հայտարարման համար կազմակերպվելիք ցույցերի հարցում»* [27]:

Այնուհետև Մուստաֆա Քեմալը միաժամանակ քաղաքական ակտիվ գործունեությամբ չի զբաղվում: Դա պայմանավորված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերնախավի, հիմնականում Էնվեր փաշայի հետ ունեցած անհարթ հարաբերություններով: Քեմալը երբևիցե չի համակրել Էնվերին[28] և ամեն պատեհ առիթով քննադատում էր նրան[29]: Այս ընթացքում Մուստաֆա Քեմալը զբաղեցնում է մի շարք ռազմական պաշտոններ, այդ թվում՝ ռազմական կցորդի պաշտոն Սոֆիայի օսմանյան դեսպանությունում 1913 թ. հոկտեմբերից[30]: Դեսպանության ռազմական կցորդի պարտականություններից Մուստաֆա Քեմալն ազատվեց 1915 թ. հունվարին, երբ ռազմական նախարար Էնվեր փաշան նրան նշանակեց Գալիպոլիում գտնվող 19-րդ դիվիզիայի հրամանատար[31]:

Քեմալի՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերնախավի հետ հակասությունների հիմնական պատճառը վերջինիս վարած արտաքին քաղաքականությունն էր Գերմանիայի հետ: 1913 թ. Բալկանյան պատերազմից հետո օսմանյան կառավարությունը բանակում բարեփոխումներ իրականացնելու նպատակով դիմեց Գերմանիային, և Գերմանիայի կայսերական բանակի գեներալ Լիման ֆոն Սանդերսը, ստանձնելով օսմանյան բանակի բարեփոխման գերմանական առաքելության ղեկավարումը, ժամանեց Ստամբուլ[32]: Մուստաֆա Քեմալը սա դիտում էր որպես Օսմանյան կայսրության ինքնիշխանության սահմանափակում[33]: Բացի այդ՝ նա վերապահումով էր մոտենում գերմանական դաշնակցային վերաբերմունքին առ Օսմանյան կայսրությունը: Դա հատկապես երևում է Քեմալի՝ 1917 թ. Սիրիայում

գտնվող 7-րդ բանակի հրամանատար նշանակվելուց հետո օսմանյան մեծ վեզիրին ներկայացված ծավալուն, բազմակողմանի հուշագրում, որով Քեմալը ոչ միայն զգուշացնում էր օսմանյան ռազմական ղեկավարության մեջ գերմանական կողմի գերակշռության և դրա վտանգների մասին, այլ նաև այն միտքն էր հայտնում, որ Օսմանյան կայսրությունը Գերմանիայի հետ նման համագործակցության շարունակության պարագայում մեծ ռիսկի է դիմում դառնալու գերմանական գաղութ, եթե ներկա իրադրությունը շարունակվի, և կենտրոնական ուժերը հաղթեն պատերազմում[34]: Նշված հուշագրով նա պահանջում էր Սիրիայում և Պաղեստինում տեղակայված օսմանյան ուժերի միանձնյա հրամանատարությունը, սակայն, մերժում ստանալով, 1917 թ. հոկտեմբերի 4-ին հրաժարական տվեց ու վերադարձավ մայրաքաղաք: Ստեղծված իրավիճակը հարթելու նպատակով նրան առաջարկվեց ուղեկցել թագաժառանգ Վահիդեդինին Բեռլին կատարելիք այցի ընթացքում[35]: Գերմանական հրամանատարության նկատմամբ իր բացասական վերաբերմունքը Քեմալը չէր թաքցնում անգամ գերմանական սպայակազմի ներկայացուցիչներից, և Լիման ֆոն Սանդերսի հետ առաջին հանդիպման ժամանակ տեղի ունեցած երկխոսության ընթացքում նա իր թերահավատությունն է հայտնում պատերազմում Գերմանիայի հաղթական ելքի վերելքը:

Մուդրոսի զինադադարից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներքին շրջանակներում որոշվեց Անատոլիայում դիմադրություն կազմակերպել ընդդեմ Անտանտի ուժերի[36]: Այս ծրագրի իրագործմամբ զբաղվում էր պատերազմի ավարտից որոշ ժամանակ անց ստեղծված «Քարաքոլ» գաղտնի կազմակերպությունը[37], որը կազմակերպում էր զինամթերքի և իթթիհադական սպաների փոխադրումը Անատոլիա[38]: Դիմադրության առաջնորդ ընտրելու ժամանակ Մուստաֆա Քեմալը ընդունվեց որպես լավագույն թեկնածու և, 1919 թ. ապրիլի 30-ին նշանակվելով 9-րդ բանակի (հետագայում՝ 3-րդ բանակի) տեսուչ[39], մեկնեց Անատոլիա: Նախքան Քեմալին ընտրելը նկատի էր առնվել օսմանյան բանակի գլխավոր շտաբի նախկին պետ և մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի թեկնածությունը՝ որպես դիմադրության շարժման առաջնորդի, սակայն վերջինս մերժել էր առաջարկը:

Նշանակվելով 9-րդ բանակի տեսուչ՝ Մուստաֆա Քեմալ փաշան պաշտոնապես պարտավոր էր ապահովել զինապահեստների անվտանգությունը, պայքարել Անտանտի դեմ ընդհատակում ձևավորվող դիմադրության խմբերի դեմ, վերակազմավորել բանակի քայքայված ստորաբաժանումները և կարգուկանոն հաստատել երկրում[40]: Մայիսի 19-ին Քեմալը ժամանեց Սամսուն և, մշակելով գործողությունների ծրագիր, համախոհների հետ անցավ գործի: Հունիսի 21-ին Ամասիայում գումարված գաղտնի ժողովից[41] հետո քեմալականները շրջաբերականով դիմեցին քաղաքացիական և զինվորական իշխանությունների ներկայացուցիչներին: Շրջաբերականում նշված էր, որ սուլթանի կառավարությունը չի կարողանում պահպանել կայսրության տարածքային ամբողջականությունը, և այդ պարտականությունն իր վրա պետք է վերցնի «ազգը»[42]: 1919 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Քեմալը կազմակերպեց մի շարք համաժողովներ, որոնց մասնակցում էին իթթիհադականների ձևավորած «իրավունքների պաշտպանության խմբերի» ներկայացուցիչները[43], և, ամբողջացնելով դիմադրության շարժման ծրագիրը, իր համախոհների հետ անցավ դրա իրագործմանը:

Քեմալի ծավալած գործունեությունն անհանգստացնում էր Անտանտին հավատարիմ սուլթանի կառավարությանը: Հուլիսի 5-ին Քեմալը հրաման ստացավ մեկնելու մայրաքաղաք, և երբ հրաժարվեց կատարել հրամանը, երեք օր անց նրան հեռացրին օսմանյան բանակից և իր զբաղեցրած պաշտոնից[44]: Ստամբուլի հրամանը շրջանցելը մեծ ռիսկեր էր պարունակում. Քեմալը կարող էր ձերբակալվել և ուղարկվել Ստամբուլ, որտեղ 1920 թ. մայիսի 24-ին սուլթանի կողմից վավերացված դատական որոշում կար նրան մահապատժի ենթարկելու մասին[45]: Սակայն Քյազիմ Կարաբեքիրը, որին հրամայված էր ձերբակալել Քեմալին և ստանձնել նրա պարտականությունները, ևս հրաժարվեց հրամանի կատարումից՝ այդպես իր աջակցությունը հայտնելով Քեմալին և փաստացի հայտնվելով նրա հրամանատարության ներքո[46]:

Հետագա ռազմական գործողությունները և քաղաքական գործընթացները թուրքական պատմագրությանը հայտնի են որպես «Ազատագրության պայքար»[47]: Այս ընթացքում դրսևորվեցին Մուստաֆա Քեմալի դիվանագիտական և քաղաքական կարողությունները: Քեմալը քաղաքական ճիշտ հաշվարկների շնորհիվ կարողացավ աջակցություն ստանալ միաժամանակ և՛ իսլամական աշխարհից, և՛ Ռուսաստանի բոլշևիկյան վարչակարգից, և՛ Անտանտից: Օսմանյան խալիֆաթը Արևմուտքի ոտնձգություններից պաշտպանելու նպատակով նա դիմում է իսլամի աշխարհին՝ «Դամասկոսի, Կորդովայի, Կահիրեի և Բաղդադի խալիֆայությունների անկումից հետո թշնամու զենքի տակ ընկած իսլամի վերջին խալիֆաթը»[48] փրկելու կոչով, ինչը անարձագանք չի մնում: Միայն «Համահնդկական խալիֆաթ» կազմակերպությունը հանգանակում և շարժմանն է ուղարկում 125.000 ֆունտ ստերլինգ ոսկով[49], որը հետագայում Քեմալը ծառայեցրեց որպես հիմնադիր դրամագլուխ 1924 թ. բացված Թուրքիայի ձեռնարկատիրական բանկի[50] ստեղծման համար: Բոլշևիկյան իշխանությունները ևս անմասն չմնացին քեմալական շարժմանն աջակցելուց: 1921 թ. քեմալականները բոլշևիկյան Ռուսաստանից ստացան ահռելի քանակությամբ ռազմամթերք և ֆինանսական աջակցություն[51], ինչն անգնահատելի խթան հանդիսացավ Քեմալի առաջխաղացման համար:

Քեմալի ծրագրերի իրականացման համար թերևս առավել մեծ նշանակություն ունեցան Անտանտի երկրների ներքաղաքական զարգացումները՝ Հունաստանի վարչապետ Վենեզիլոսի հրաժարականը[52] Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի, Ֆրանսիայի նախագահ Ժորժ Կլեմանսոյի և ԱՄՆ

նախագահ Վուդրո Վիլսոնի պաշտոնաթող լինելը[53], ԱՄՆ Սենատի կողմից հայկական մանդատի մերժումը[54], ինչպես նաև Իտալիայի վարչապետի թուրքամետ կողմնորոշումը[55]: Այս ամենը հաշվարկվեց Քեմալի կողմից և հեշտացրեց ու արագացրեց Քեմալի հաղթանակը:

Անկախության պատերազմից հետո Լոզանի հաշտության պայմանագրի կնքմամբ (1923 թ. հուլիսի 24) և հանրապետության հռչակմամբ (1923թ. հոկտեմբերի 29) ավարտվեց Մուստաֆա Քեմալի քաղաքական պայքարի ամենադժվար ու արդյունավետ փուլը: Ընտրվելով Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ՝ Քեմալն անցավ իր մյուս՝ ոչ պակաս կարևոր ծրագրերի իրականացմանը: Դրանք էին միապետության վերացումը, խալիֆայության վերացումը, երկրի արևմտականացումն ու արդիականացումը և մի շարք այլ բարեփոխումներ:

1922 թ. նոյեմբերի 1-ին ԹԱՄԺ-ի ընդունած որոշմամբ երկրում վերացվեց սուլթանությունը, և վերջին սուլթանը՝ Մեհմեդ VI Վահդեդինը, որի համարզը ժամանակին Մուստաֆա Քեմալն էր[56], ստիպված եղավ լքել երկիրը[57]: Այդ ժամանակահատվածում, սակայն, խալիֆայության վերացումը աննպատակահարմար էր դիտվում մի շարք պատճառներով: Նախ՝ իսլամական կոչեր հղելով՝ Քեմալը կարողանում էր որոշակի օգնական ուժեր մոբիլիզացնել հօգուտ շարժման[58]: Եվ հետո՝ խալիֆայությա՝ իսլամի կենտրոն լինելու փաստը կարող էր օգտագործվել դիվանագիտական նպատակներով, ինչպես, օրինակ, Լոզանի բանակցությունների ընթացքում[59]: Եվ վերջապես՝ թուրքերի գերակշիռ մասը դեռ պատրաստ չէր այդ փոփոխությանը, և նշված շրջանում այդ քաղաքական որոշումը հանրային աջակցության չէր արժանանա[60]:

Հաջորդ քայլը խալիֆայության վերացումն էր: Մուստաֆա Քեմալը սկզբունքորեն դեմ էր իսլամի գերակայությանը հանրային կյանքում[61] և խալիֆայության հետ մեկտեղ վերացրեց նաև իսլամական դատարանները[62], տարանջատեց կրթական համակարգը կրոնից և այլն:

1924 թ. մարտի 3-ին ԹԱՄԺ-ն ընդունեց օրենք, որով խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալուց[63]: Վերջին խալիֆ Աբդուլ Մեջիդ 2-րդը հայտարարվեց գահընկեց, և ամբողջ օսմանյան արքայատոհմը արտաքսվեց երկրից: Նույն օրն ընդունված օրենքներով վերացվեց շարիաթի և վաքֆների նախարարությունը: Արգելվեցին դերվիշական եղբայրությունները, վաքֆները (կրոնական կալվածքները) պետականացվեցին: Արդեն 1928 թ. ընդունված նոր սահմանադրության մեջ իսլամը որպես պետական կրոն ամրագրող կետը բացակայում էր[64]:

Ընդունվեցին եվրոպական օրենսգրքեր, ազգանունների, եվրոպական հագուստ կրելու մասին օրենքներ, ֆես (օսմանյան ավանդական գլխարկ) կրելը արգելվեց օրենքով: Հիջրայի (մուսուլմանական) օրացույցը փոխարինվեց Գրիգորյան տոմարով, արաբատառ գիրը՝ լատինատառ գրով, ոչաշխատանքային օր դարձավ կիրակին՝ նախկին ուրբաթ օրվա փոխարեն[65]: Այս և նմանատիպ այլ ձեռնարկներով Քեմալը ձգտում էր արևմտականացնելու Թուրքիան և արդիականացնելու թուրքական ավանդական հասարակությունը:

Հղումներ

1- Mehmet Perinçek, Atatürk'ün Sovyetler.le Görüşmeleri: Sovyet Arşiv Belgeleriyle, Istanbul: Kaynak Yayinlari, 2005, p. 272.
2- Տես Mahmoud Ismail Saleh, Dictionary of Islamic Words and Expressions, Riyadh, 2011, էջ 61:
3- Տես Andrew Mango, Ataturk, The Biography of the Founder of Modern Turkey, Overlook Press, New York, 2000, էջ 322:
4- Տես Erik-Jan Zürcher, In the name of the father, the teacher, and the hero: the Atatürk personality cult in Turkey, Routledge, 2012 էջ 6:
5- Տես նույն տեղում:
6- Տես M. Şükrü Hanioğlu, Atatürk. An Intellectual Biography, Princeton, 2013, էջ 229:
7- Տես նույն տեղում:
8- Տես նույն տեղում:
9- Տես նույն տեղում:
10- Տես Nutuk: Gazi Mustafa Kemal Tarafindan, Ankara: n.p., 1927, էջ 1:
11- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, Եր., 2018, էջ 356:
12- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 394-395:
13- Տես նույն տեղում, էջ 48:
14 Ataturk'un Soylev ve Demecleri, III, 42.
15- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 49-50:
16- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 109:
17- Տես Mete Tunçay, Atatürk.e Nasil Bakmak, Toplum ve Bilim 1/4 (1977), էջ 90-91:
18- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 2:
19- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 51:
20- Տես նույն տեղում:
21- Տես նույն տեղում, էջ 556:
22-23- Տես նույն տեղում, էջ 66:
24- Տես Erik J. Zurcher, Turkey. A Modern History, fourth edition, New York, 2017, էջ 87, 91-93:
25- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 72:
26- Տես նույն տեղում, էջ 73:
27- Mustafa Kemal Atatürk, Nutuk, 1927, p. 490.
28- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 142:
29- Տես նույն տեղում, էջ 126:
30- Տես նույն տեղում, էջ 124:
31- Տես նույն տեղում, էջ 142-143, 557:
32- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 42:
33- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 127:
34- Տես Atatürk՛ün Bütün Eserleri, II cilt, Istanbul: Kaynak Yayinlari, 1999, էջ 120-125:
35- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 81-82:
36- Տես նույն տեղում, էջ 135:
37- Տես նույն տեղում:
38- Տես նույն տեղում, էջ 141-142:
39- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 558:
40- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 24:
41- Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 149-150:
42- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 24:
43- Տես նույն տեղում, էջ 24-25:
44- Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ 150:
45- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 25:
46- Տես Erik J. Zurcher, նշվ. աշխ., էջ150:
47- Տես նույն տեղում, էջ 152-156:
48- Atatürk՛ün Tamim Telgraf ve Beyannameleri, "Büyük Millet Meclisinin Bütün İslâm Âlemine Beyannamesi, 9.V.1920," 4 cilt, 323-326 ss.
49- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 104:
50- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 410:
51- Տես նույն տեղում, էջ 310:
52- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 124:
53- Տես նույն տեղում, էջ 143:
54- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 248:
55- Տես նույն տեղում, էջ 122:
56- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 82:
57- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 53:
58- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 102-104:
59- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 53:
60- Տես նույն տեղում:
61- Տես Andrew Mango, նշվ. աշխ., էջ 407:
62- Նույն տեղում, էջ 407:
63- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, էջ 54:
64- Տես նույն տեղում, էջ 55:
65- Տես նույն տեղում, էջ 58-61:

Թուրք-գերմանական փոխհարաբերությունների պատմությունից. Երկրորդ աշխարհամարտի տարիներ

ՊԱՊԵՆԸ* — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Գաղտնի
Տերապիա[1] 5 օգոստոսի 1941 թ.

ԳԵՐՄԱՆԱԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
№ Ա 3018/41
Արտաքին գործերի մինիստրությանը

Բեռլին

Բովանդակություն. Պանթուրանական շարժում:

Լավատեղյակ մի վստահված անձնավորություն հաղորդում է. նկատի ունենալով գերմանացիների հաջողությունները Ռուսաստանում՝ թուրքական կառավարական շրջաններն ավելի ու ավելի են սկսում զբաղվել իրենց այն հայրենակիցների վիճակով, որոնք գտնվում են ռուս-թուրքական սահմանի մյուս կողմը, և առանձնապես ադրբեջանական թյուրքերի վիճակով:

Այդ շրջաններում, ըստ երևույթին, հակամետ են վերադառնալ 1918 թ. դեպքերին և ուզում են իրենց միացնել այդ մարզը, առանձնապես Բաքվի ամենաարժեքավոր նավթի հանքավայրերը: Այս նպատակի համար որոշ անձերից, որոնք Աբդուլ Համիդի ժամանակ արդեն մասնակիորեն կատարում էին նման ծառայություն, կազմվել է մի յուրատեսակ էքսպերտների կոմիտե, որին հանձնարարվում է հավաքել այս հարցին վերաբերող ամբողջ նյութը և ինչպես երկրի ներսում՝ արտասահմանից գաղթած էմիգրանտների շրջանում, այնպես էլ արտասահմանում, առանձնապես Իրանի ադրբեջանական մասում, հավաքագրել նոր Թուրքիան թյուրքերով բնակված այն մարզերի հետ միավորելու կողմնակիցներին, որոնք սահմանակից են նրան արևելքից ընդհուպ մինչև Կասպից ծովը:

Այս խմբի ղեկավարը Ստամբուլի դեպուտատ Շյուքրյու Ենի Բակչան է (որը ինքն իրեն համարում է թաթար, թեպետ նրա ընտանիքն արդեն մի քանի սերունդ ապրում է Թուրքիայում):

Այնուհետև այստեղ են մտնում.

Նուրի փաշան (Էնվեր փաշայի եղբայրը. իր ժամանակին նա առաջատար պոստ էր գրավում, այսպես կոչված, Իսլամ Օրդույում[2], և նրա մասին ասում են, որ նա առանձնապես համակրում էր իր եղբոր պան-թուրանական պլաններին):

Պրոֆեսոր Ջեքի Վելիդին (Բաշկիր): Առաջ Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր է եղել, բայց Աթաթուրքի հետ ընդհարվելու պատճառով պետք է թողներ այն, որպեսզի ժամանակավորապես տեղավորվեր Վիեննայում, Հալլեում և Բոնում:

Ահմեդ Ջաֆարը (որին անվանում են նաև Ահմեդ Սաիդ Ջաֆար), ղրիմցի թյուրք, համարվում է որպես մի մարդ, որի վրա բոլորովին չի կարելի հույս դնել, նաև լրտեսական աշխատանք է տանում կառավարության

Ֆրանց Ֆոն Պապեն

օգտին. ինչպես ասում են, դեռ հիմա էլ մոտ է գեներալ Սիկորսկու** «Պրոմեթեյ» կազմակերպությանը՝ Լոնդոնում: Հայտնի է որպես թյուրքագետ՝ Ահմեդ Ջաֆարօղլու անունով:

Այս խմբին պետք է դասել նաև Քաբուլում թուրքական դեսպան Մեմդուխ Շևքեթին, որը վերջերս մասնակցում էր Անկարայում տեղի ունեցող բանակցություններին: Լինելով աստիճանավոր՝ նա հազիվ թե կկարողանա այլ գիծ բռնել, քան կառավարությունը, թեպետ նրան չի էլ կարելի խառնել վերն անվանվածների հետ, բայց, այնուամենայնիվ, նա համարվում է արևելյան թյուրքերի իսկական բարեկամը:

Ինչ վերաբերում է արևելյան թյուրքական ժողովուրդներին՝ բացի Ադրբեջանից, այսինքն՝ Պոլոյժիեի թյուրքերին, թաթարներին, թուրքմեններին և այլն, ապա թուրքական կառավարական շրջանների այժմյան պլանները հանգում են այս թյուրքերի միավորմանը սեփական, արտաքուստ անկախ արևելա-թյուրքական պետության մեջ, որտեղ, սակայն, արևմտյան թյուրքերը կխաղան «խորհրդատուների» վճռողական քաղաքական և կուլտուրական դեր:

Բայց այս պլանները ոչ մի կերպ չեն համընկնում հենց իրենց՝ արևելյան թյուրքերի ցանկություններին: Վերջինների կարծիքի համաձայն՝ նոր Թուրքիայում միավորված թուրքերն արդեն կորած են իսկական թուրքական ազգության համար և այն էլ ոչ թե վերջին ժամանակներում, այլ արդեն շատ տարիներ սրանից առաջ: Բաքվում նրանց ներկայացնում են ոչ այլ ինչ, քան լևանտացիներ, որոնք խոսում են թուրքերեն

լեզվով, որոնց հետ ցանկալի է հնարավորության չափ քիչ շփում ունենալ:

Այս զարգացումն առայսօր ունի բազմադարյան պատմություն: Օսմանյան պատմության արդեն վերջին հարյուրամյակներում արքունիքի և կայսրության բարձր աստիճանավորությունը միայն աննշան մասով էր բաղկացած թուրքերից: Այն հաջորդաբար հունգարական ծագումից էր, ալբանացիներից և ապա՝ Աբդուլ-Համիդի օրով՝ չերքեզներից ու արաբներից, բայց երբեք թուրքերից չէր: (Այս պատմական նկատառումներն ու քաղաքական տեսակետը հաճախ հաստատվում էին Թավրիզում շահագրգռված շրջանների հետ ունեցած քաղաքական խոսակցությունների ժամանակ: Հենց այնտեղ այժմ այս թեման դրված է օրակարգում, որովհետև Թավրիզի բնակիչները նույնպես ադրբեջանական թյուրքեր են համարվում և իրենց զգում են որպես Բաքվի թյուրքերի արյունակցական ազգակիցներ: Առանձնապես անհրաժեշտ է նշել, որ Թավրիզում այս շարժման առաջատար ղեկավարներից մեկը ինքը՝ իրանական գեներալ-նահանգապետն է):

Շարժման ղեկավարն այժմ, ինչպես և առաջ, համարվում է Մեհմեդ Էմին Ռասուլ-զադեն («Մուսավաթ» պարտիայի հիմնադիրը. «մուսավաթ» նշանակում է «հավասարություն»): Նա հարեց լեհական «Պրոմեթեյ» շարժմանը, որը ոչ այլ ինչ էր, քան լեհական գլխավոր շտաբի ենթաբաժինը: Գլխավոր շտաբի ֆոնդերով (այսպես կոչված Պիլսուդսկու ֆոնդերը), որոնք փոխադրվել էին Շվեյցարիա, Ռասուլ-զադեն ապրում էր 1939 թ. տեղի ունեցած Լեհաստանի անկումից հետո էլ: 1940 թ. քաղաքական հանձնարարությամբ նա եղել է Սիկորսկու մոտ՝ Լոնդոնում, իսկ ապա ուրիշ լեհական էմիգրանտների հետ ապրում էր Բուխարեստում: Սա խոշոր քաղաքական գործիչ է, եթե ուշադրության չառնենք ֆինանսական կողմը: (Քանի որ «Պրոմեթեյ» կազմակերպության մյուս թուրք անդամները վերջերս թուրքական տերիտորիայի վրա Գերմանիայի նկատմամբ թշնամական ոգով էին արտահայտվում, ապա Ռասուլ-զադեի նկատմամբ էլ հարկ կա որոշ զսպվածություն պահպանել): Ռասուլ-զադեի ներկայացուցիչը Թուրքիայում նրա համհարզ Միրզա Բալան է (ներկայումս նա թուրքական բանակ է կանչված և որպես շարքային զինվոր ծառայում է Ստամբուլի մոտերքում: Նրա մասին բան չկա ասելու, բացի այն, որ նա իր ավելի նշանավոր ուսուցչի հավատարիմ աշակերտն է): Վստահված անձի կարծիքով՝ այդ երկուսի հետ էլ պետք է աշխատանք տանել: (Արևելաթյուրք մի ուրիշ վստահված անձի կարծիքով՝ ավելի լավ է հրաժարվել այդ ամբողջ հին գվարդիայից, որի համար, ելնելով նրա անցյալից և նրա ֆինանսական կապերից, ամենևին չի կարելի երաշխավորել, և որին նոր ադրբեջանական պետությունում ոչ մի դեր չի կարելի վստահել):

Այս նոր ադրբեջանական պետությունը չի ուզում իրեն ծանրաբեռնել ուրիշ արևելյան թյուրքերով, այլ, ընդհակառակը, այն կարծիքն ունի, թե նրանք, այսինքն՝ Վոլգայի թյուրքերը, թաթարները, թուրքմենները և այլն, իրենց տարաբնակման բնույթով, տարաբնակում, որն ամենևին էլ կոմպակտ չէ, և ամենից առաջ իրենց տնտեսական հետամնացության պատճառով բնավ չունեն պետական ինքնուրույնության հավակնություն, այլ պետք է դեռ զարգացման երկար ճանապարհ անցնեն: Ադրբեջանական ռևոլյուցիոն շարժումն իրեն խնդիր չի դնում նրանց դաստիարակելը, որպեսզի նրանք պետականության հասնեն: Բայց և այնպես, վստահված անձը հանձնարարում է չթողնել այս խնդիրը ռուսներին, այլ հոգ տանել, որ գերմանական կազմակերպումն ու փորձը հետագա զարգացման ընթացքում մնան վճռողական: Գերմանիան պետք է առանձին նշանակություն տա ըստ հնարավորության ուժեղ պետություն կազմելուն հարավ-արևելքում, որպեսզի ի վիճակի լինի այս զարտուղի ճանապարհով ռուսներին ամբողջ ժամանակ սպառնալիքի տակ պահել: Ուկրաինան այս խնդիրը բավական չափով չի կատարի: Ուկրաինացիները սլավոններ են և կարող են ամեն ժամանակ, ինչպես և բուլղարներն ու սերբերը, գիտակցել իրենց ընդհանուր անցյալը Ռուսաստանի հետ: Ինչ վերաբերում է թյուրքերին, ապա դա լիովին բացառված է:

Իմ այն հիշեցմանը, թե Իրանի կառավարությունը նույնպես չափազանց հետաքրքրվում է Ադրբեջանական թյուրքերով, իմ վստահված անձը մատնանշեց, որ դա ըստինքյան հասկանալի է: Այժմյան Իրանում ապրում են հավասար քանակությամբ թյուրքեր և պարսիկներ: Ինքը՝ շահը, ծագում է թյուրքական ընտանիքից: Այդ պատճառով նա շատ հեշտությամբ գրչի մի շարժումով կկարողանար իր իրան-արաբական պետությունը դարձնել խառն բնակչություն ունեցող մի պետություն, եթե նրան ապացուցեին այսպիսի կերպափոխության առավելությունը, և եթե նա տեսներ, որ այսպիսի ճանապարհով կկարողանա իր քաղաքական անկախությունը պահպանել: Սրանով բացատրվում է և այն դերը, որը խաղում է Թավրիզի գեներալ-նահանգապետը շարժման մեջ:

ՊԱՊԵՆ

P.S. Ի լրումն առաջին էջի:

Անկարայում արևելա-թյուրքական հարցերի վերաբերյալ կառավարության վստահված անձերի թվին է պատկանում նաև թաթարական ծագում ունեցող գեներալ Հյուսեյն Հյուսնյու Էմիր Էրքիլեթը:

Ծանոթագրություններ

** Ֆոն Պապեն – 1939-ից մինչև 1944 թ՝ Գերմանիայի դեսպանը Թուրքիայում:*

*** Գեներալ Սիկորսկի – 1939-ից մինչև 1943 թ.՝ Լոնդոնի լեհական էմիգրանտական կառավարության պրեմիեր-մինիստր և ռազմական մինիստր:*

1. Տերապիա – ամառանոցային վայր Ստամբուլի

մոտ, որտեղ գտնվում էր գերմանական նախկին դեսպանության ամառանոցը:

2. «Իսլամի բանակ» – պանթուրքական կազմակերպություն Թուրքիայում:

Գրականություն

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՊՐԱԿ II,
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (1941-1943), Երևան, Հայպետհրատ, 1947 թ., էջ 29-34:

ՎԵՅՑԶԵԿԵՐԸ* — ՌԻԲԲԵՆՏՐՈՊԻՆ**

ԳԱՂՏՆԻ

Բեռլին, 5 օգոստոսի 1941 թ.
№ 494

Պատճեն

Թուրքական դեսպանն այսօր ինձ ներկայացրեց դեսպանության իր նոր խորհրդականին: Շուտով նա խոսակցությունն ուղղեց սովետական տերիտորիայի վրա ապրող թյուրքական ծագում ունեցող սահմանամերձ ցեղերի վերաբերյալ թեմային: Նա ուշադրություն հրավիրեց այս թյուրքական ցեղերի միջոցով հակասովետական պրոպագանդա մղելու հնարավորության վրա: Հետո նա բավական անկեղծորեն խոսում էր այն մասին, թե հետագայում կարելի է կովկասյան ժողովուրդներին միավորել մի բուֆերային պետության մեջ, և ակնարկեց, որ Կասպից ծովից դեպի արևելք նույնպես կարող էր մի ինքնուրույն թյուրքական պետություն ծագել:

Գերեղեն թռուցիկ կերպով հիշատակեց այս մասին ոչ պաշտոնական զրույցի տոնով: Բայց նրա նկատողությունները ոչ մի կերպ պատահական չէին, որովհետև նրանք լիովին համընկնում են պարոն ֆոն Պապենի հետ Ալի Ֆուադի զրույցում արտահայտած կարծիքներին (տես անցյալ ամսի 14-ին Անկարայից ստացված №2335 հաղորդագրությունը): Գերեղեն չուշացրեց շոշափել հիմնական հարցը՝ բնութագրելով Բաքուն որպես մի քաղաք, որտեղ ամբողջ բնակչությունը թուրքերեն է խոսում: ■

Արտաքին գործերի պարոն ռայխսմինիստրին
Վեյցզեկեր

Ծանոթագրություններ

Պատճենում՝ Տերապիայում գերմանական դեսպանությանը, սուրհանդակով:

** Վեյցզեկեր – գերմանացի դիվանագետ, հիտլերյան արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար:*

*** Ռիբենտրոպ – հիտլերյան Գերմանիայի արտաքին գործերի մինիստր 1938-ից մինչև 1945 թ .:*

Ջույգ փաստաթղթերի ստորագրությունները Փաստաթղթերի ժողովածուի անվանացանկից:

1941-ի հունիսի 18-ին ստորագրվեց գերմանա-թուրքական բարեկամության և ոչ ագրեսիայի դաշնագիրը

Գրականություն

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՊՐԱԿ II,
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ, (1941—1943) Երևան, Հայպետհրատ, 1947, էջ 35:

Խմբագրություն

Ձինուորեալը՝ միշտ զինուոր

Նուէր պատնէշի վրայ մնացողներուն

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Այս զրոյցը կուսակցական ըլլալուն մասին չէ, կուսակցականներուն ալ մասին չէ, թէև ինչպէս ուրիշներու, անոնց ալ կրնայ առնչուիլ:

Այս զրոյցը ծառայութեա՛ն մասին է, ծառայութեան, ի՛նչ ճամբով ալ ըլլայ ան: Անշուշտ, խօսքը կը վերաբերի հասարակական ոլորտին, կը վերաբերի կամաւո՛ր ծառայութեան:

Երբ կ'անդամակցինք որևէ հանրօգուտ անշահաբեր կազմակերպութեան, կ'անդամակցինք քանի մը պատճառներով, առաջին հերթին՝ մեր մասնակցութիւնը բերելու անոր գործունէութեան՝ այդ ձևով ալ մեր բաժինը ընծայելու հաւաքականութեան օգտակար ըլլալու աշխատանքին: Այս պատրաստակամութենէն անդին կամ նոյնիսկ անոր ետև կայ, անշուշտ, այն հետաքրքրութիւնը, այն սէրն ու խանդը, որ ունինք այն ոլորտին հանդէպ, որուն ծառայութեան է նուիրուած տուեալ կազմակերպութիւնը: Վերջապէս կայ նաև յանձնառութեան հարցը, որ պատասխանատուութեան զգացումի մը առկայութիւնն է, գիտակցութեան մը վկայութիւնը:

Մեզմէ անոնք, որոնք հետաքրքրուած են մշակոյթի զարգացմամբ, կրթութեան յառաջացմամբ, կ'անդամակցին մշակութային-կրթական միութիւններու, կը մասնակցին խումբերու, որոնք ինքնազարգացմամբ կը պարապին, այլև, ինչու ոչ, նաև կը պարեն, կ'երգեն, բեմ կ'ելլեն, կը գրեն կամ կ'օգնեն հաստատութիւններու կազմակերպական աշխատանքներուն և այլն:

Ուրիշներ, որոնք կապ մը կը զգան մարզական,

երիտասարդական ոլորտին հետ, նոյնպէս կ'անդամակցին համապատասխան միութիւններու, կը նպաստեն այդ ոլորտի զարգացման:

Տակաւին անոնք, որոնք հետաքրքրուած են ընկերային-բարեսիրական աշխատանքներով, կը գտնեն զիրենք հրապուրող կազմակերպութիւնները կամ հաստատութիւնները, ժամանակ կը տրամադրեն այդ մարզին մէջ իրենց օգտակարութիւնը բերելու:

Վերջապէս, ուրիշներ ալ հետաքրքրուած կ'ըլլան քաղաքական գործունէութեամբ, մաս կը կազմեն կուսակցութիւններու՝ երկրի մը կառավարման տարբեր մակարդակներուն վրայ, թեկնածու կը դառնան, կ'ընտրուին, կը գործեն ազգային ժողովներու, խորհրդարաններու կամ նման կառոյցներու մէջ կամ կողքին ու կը բերեն իրենց օժանդակութիւնը:

Սա ընդհանրական երևոյթ է, ոչ միայն հայկական:

Այս բոլորը գիտցուած, գիտակցուած իրողութիւններ են, կրկնելու անհրաժեշտութիւն կրնայ չըլլալ, բայց և այնպէս, յիշեցնելը կրնայ օգտակար ըլլալ: Բայց այդ յիշեցումն ալ չէ յօդուածիս նպատակը:

Բոլոր պարագաներուն, ըստ կարողութեան ու հնարաւորութեան, այդ կազմակերպութիւններու որոշ անդամներ կը հասնին ղեկավար դիրքերու, կը վերցնեն պատասխանատու պաշտօններ՝ յանձնախումբերու ատենապետութենէն մինչև երկրի մը վարչապետի կամ նախագահի բարձրագոյն աստիճանները: Անոնք այդ պաշտօնները կը վարեն առաւել կամ նուազ տևողութեամբ, ըստ սահմանուած օրէնքներու կամ աւանդութեան, ապա իրենց տեղը կը զիջին իրենց յաջորդներուն:

Միշտ չէ, սակայն, որ այդ զիջումը հեզասահ կ'ըլլայ:

Որքան ալ որ իմաստութիւնը այդ պահանջէ, որքան ալ որ տուեալ կազմակերպութեան մը շահն ալ այդ պահանջէ այն առումով, որ միշտ նոր ուժեր հասնին ղեկավար դիրքերու, փոխարինեն երկարատև, գուցէ արդէն յոգնած գործողները, նոր շունչ բերեն ղեկավարման մէջ, բարձր պաշտօններու հասնողներ կամ չեն կրնար ինքզինք երևակայել այդ պաշտօններէն զուրկ, կամ ինքզինք կը նկատեն անփոխարինելի և կ'ընդդիմանան, կը դիմեն ամեն տեսակի ապօրինի միջոցներու, կը մերժեն զիջիլ, կը մերժեն դրօշարշաւի դրօշը փոխանցել իրենց ետևէն վազող-հասնողին, կը մերժեն զայն պատրաստել իրենց տեղը առնելու: Այդպէս է, որ բռնակալներ կը յառաջանան, այդպէս է, որ ժողովրդական քուէներով իսկ ընտրուած պաշտօնատարներ կը վերածուին... ցկեանս իշխող թագաւորներու: Այդպէս է նաև, որ զինուորական հարուածներով, ահաբեկչութեամբ կամ յեղափոխութեամբ վար կ'առնուին անոնք:

Այս տխուր երևոյթները նուազ տարողութեամբ տեսած ենք ու կը տեսնենք նաև մե՛ր հաւաքական կեանքին մէջ, մեր ազգային-կազմակերպական կեանքին մէջ: Եւ եթէ մեր պարագային իշխաններ ու թագաւորներ չեն յայտնաբերուիր, միւս կողմէ ականատեսն ենք ուրիշ բացասական երևոյթի մը, որուն վերացման համար է, որ գրի կ'առնեմ այս տողերը:

Այդ մեկուսացումն է, ինքնամեկուսացումը այն պատասխանատուներուն, որոնք յանկարծ ամբողջովին կը բաժնուին մեր հաւաքական կեանքէն իրենց վարած պաշտօններէն հեռանալէ ետք:

Երկար տարիներ այնքան նուիրումով ու զոհաբերութեամբ, հետևողականօրէն ու անսակարկ ծառայելէ ետք իրենց այնքան սիրած, փայփայած այդ միութիւններուն, հաստատութիւններուն կամ կազմակերպութիւններուն մէջ, անոնք մէկ օրէն միւսը երես կը դարձնեն անոնց, կը բացակային անոնց անդամական ժողովներէն ու հրապարակային միջոցառումներէն, կ'անհետանան հորիզոնէն: Մինչդեռ եթէ անոնք իրապէս այդքան հաւատքով փարած էին իրենց պատկանած այդ կառոյցներուն, իրենց ղեկավար դիրքերը զիջելէ ետք անոնք կրնային շարունակել ծառայել որպէս աջակից նոր ղեկավարներուն, որպէս խորհրդական, որպէս այս կամ այն աշխատանքին մասնակից կամ լոկ որպէս պարզ անդամ՝ իրենց փորձառութիւնն ու հմտութիւնը շնորհելու համար իրենց յաջորդներուն՝ այդ ձևով նաև շարունակելով վայելել անոնց ու շրջապատին յարգանքն ու երախտագիտութիւնը:

Դաշնակցութեան շարքերը դիմող նորընծան կ'երդնու իր բոլոր ուժերով, իսկ եթէ հարկ ըլլայ, նաև կեանքին գնով ծառայել... Առանց նման երդումի՝ գրեթէ նոյն յանձնառութիւնն է, որ կը վերցնենք, երբ կ'անդամակցինք մեր ազգային կազմակերպութիւններուն:

Որքան ալ դիրք զիջիլը դժուար ըլլայ ոմանց համար, այդ դիրքերէն դուրս ևս տևական ծառայութեան գիտակցութիւնը ցկեանս գոհունակութիւն չէ՞ արդեօք, որ պիտի պատճառէր բոլորին: Պէ՛տք է պատճառէ:

Անգամ մը, որ զինուորեալ դարձար, զինուո՛ր ես մինչև կեանքիդ վերջ... ■

Անմահները

Վիգեն Մուրադյան

Ծնվել է 1995 թ. մայիսի 22-ին Պռոշյան գյուղում: 2001-2012 թթ. սովորել է Պռոշյանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիա: Ուսումը կիսատ թողնելով՝ մեկնել է զինվորական ծառայության: ՀՀ զինված ուժերում ծառայությունից հետո շարունակել է ուսումը:
2018 թվականից ՀՅԴ անդամ էր:
2020 թ. հոկտեմբերի 2-ին «Կամավորական շարժում» ՀԿ-ի 2-րդ հրաձգային վաշտի կազմում մեկնել է առաջնագիծ:
Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին Վարանգաթաղի բարձունքում՝ Մատաղիսի մատույցներում, իր 21 նվիրյալ ընկերների հետ միասին:
Վիգեն Իսրայելի Մուրադյանը Արցախի նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Գէորգ Հաճեան

Ծնած է 1971 թ. յունիս 11-ին Լիբանանի Այնճար հայաւանում՝ մուսալեռցի ընտանիքին մէջ:
1974 թուականէն նախակրթութիւնն ստացած է ծննդավայրին «Յառաջ Գալուստ Կիլպէնկեան» վարժարանին մէջ:
1982-1992 թթ. բարձրագոյն կրթութիւնը ստացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Զարեհեան դպրեվանքի մէջ և որպէս աւագ սարկաւագ մուտք գործած է աշխարհիկ կեանք:
1985-1992 թթ. հետևած է Հայ սև գօտիներու միութեան (ABBA) մարզումներուն՝ հասնելով սև գօտիի:
1992-2019 թթ. եղած է դպրապետ Պէյրութի Սբ. Յակոբ, Այնճարի Սբ. Պօղոս, Քուէյթի Սբ. Վարդանանց և Նիւ Եորքի Սբ. Աստուածածին եկեղեցիներուն մէջ:
1995 թ. հրաւիրուած է Քուէյթ Ազգային վարժարանի հոգաբարձութեան կողմէ, ուր պաշտօնավարել է մինչև 2005 թ.: Միաժամանակ խմբագրած է տեղի «Ազդարար» շաբաթաթերթը:
2005 թ. ընտանիքին հետ տեղափոխուած է Հայաստան և ընդունուած է Կոմիտասի անուան պետական կոնսերուատորիա՝ խմբավարական բաժին:
1992 թուականէն սկսած է Գէորգին բեմական կատարողական արուեստի կեանքը՝որպէս մենակատար:
Մինչև իր նահատակութիւնը լոյս ընծայած է հինգ ձայնասկաւառակ:
Մենահամերգներով բազմիցս հանդէս եկած է Հայաստանի, Արցախի և արտերկրի բազմաթիվ բեմերու վրայ:
ՀՅԴ անդամ էր:
2020 թ. հոկտեմբերի 2-ին «Կամաւորական շարժում» ՀԿ 2-րդ հրաձգային վաշտի կազմին մէջ մեկնած է առաջնագիծ:
Հերոսաբար զոհվեր է 2020 թ. հոկտեմբերի 6-ին Վարանգաթաղի բարձունքին՝ Մատաղիսի մատոյցներուն մէջ, իր 21 նուիրեալ ընկերներուն հետ:

Գոռ Սարգսյան

Ծնվել է 1985 թ. փետրվարի 2-ին Կոտայքի մարզի Պառոշյան գյուղում: Սովորել է Պառոշյանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում:
Ծանր փորձությունների պատճառով երեք անգամ չէր զորակոչվել ՀՀ ազգային բանակ, բայց սեպտեմբերի 27-ը չկարողացավ հետ պահել ազնիվ ու նվիրյալ հայորդուն:
Բյուրականում անցկացված վարժական հավաքներից հետո՝ 2020 թ. հոկտեմբերի 2-ին, «Կամավորական շարժում» ՀԿ 2-րդ հրաձգային վաշտի կազմում մեկնել է առաջնագիծ:
Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին Վարանգաթաղի բարձունքում՝ Մատաղիսի մատույցներում, իր 21 նվիրյալ ընկերների հետ:
Գոռ Սարգսյանը Արցախի նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Հակոբ Ռոստոմյան

Ծնվել է 1989 թ. փետրվարի 13-ին Երևանում: 1995-2002 թթ. սովորել է Սուրեն Սպանդարյանի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցում: 2002-2005 թթ. սովորել է Ա. Շահինյանի անվան ֆիզմաթի դպրոցում, այնուհետև՝ 2005-2009 թթ.՝ ԵՊՀ կիրառական ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետում:
2009 թ. ամռանը զորակոչվել է բանակ: 2009-2010 թթ. անցել է սպայական դասընթացներ՝ մոտոհրաձիգի մասնագիտությամբ, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում և ստացել լեյտենանտի կոչում:
2010-2015 թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում: Ձբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ մասնակցել է մարտական գործողությունների:
2015 թ. զորացրվել է՝ անցնելով պահեստազոր ավագ լեյտենանտի կոչումով:
Քաղաքացիական կյանքում եղել է թաեքվոնդոյի մարզիչ: Ունի միջազգային կարգի սև գոտի 1-ին դան կոչում:
2016 թվականից անդամակցել է ՀՅԴ կուսակցությանը:
Մինչ 2020 թ. սեպտեմբերի 27-ը աշխատել է Չափագիտության ազգային ինստիտուտում:
2020 թ. պատերազմի առաջին օրվանից մեկնել է առաջնագիծ և նշանակվել վաշտի հրամանատարի տեղակալ:
Մասնակցել է մի շարք մարտական գործողությունների, որոնցից մեկի ժամանակ՝ հոկտեմբերի 6-ին, քաջաբար զոհվել է:
Ամուսնացած էր, ունի 2 որդի:
Հակոբ Ռոստոմյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Աբրահամ Բարնջյան

Ծնվել է 1993 թ. մայիսի 12-ին Արագածոտնի մարզի Արտենի գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Արտենիի թիվ մեկ միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո՝ 2010 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ:
2011 թ. զորակոչվել է բանակ և ծառայությունն անցկացրել ՌԴ Արտաշատի սահմանապահ զորամասում: 2013 թվականից նույն զորամասում ծառայությունը շարունակել է որպես պայմանագրային զինծառայող և միայն 2016 թ. զորացրվել և շարունակել ուսումը ԵՊՀ-ում:
2016 թվականից ՀՅԴ անդամ էր:
2020 թ. հոկտեմբերի 2-ին «Կամավորական շարժում» ՀԿ 2-րդ հրաձգային վաշտի կազմում մեկնել է առաջնագիծ:
Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին Վարանգաթաղի բարձունքում՝ Մատաղիսի մատույցներում, իր 21 նվիրյալ ընկերների հետ:
Աբրահամ Բարնջյանը Արցախի նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆ
ԴԱՇԻՆՔ

«Հայաստան» դաշինքի հայտարարությունը

Հիմք ընդունելով հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտող՝ Հայաստանի անկախության և ԼՂՀ հռչակման մասին հռչակագրերը, վերահաստատելով Հայաստանի և հայ ժողովրդի անքակտելի իրավունքներն ու կենսական շահերը պաշտպանելու հանձնառությունը,

Նկատի ունենալով, որ՝

- այս իշխանությունն աղետաբեր է Հայաստանի, Արցախի ու հայության համար,
- պարտության խորհրդանիշ ուժը չի կարող խաղաղություն, արժանապատվություն, զարգացում ապահովել,
- իշխանությունը պահելու համար իշխող ուժը պատրաստ է գնալ նորանոր զիջումների և ինքնիշխանության կորստի,

Հաշվի առնելով՝

- Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի հետևանքով տարածաշրջանային և աշխարհաքաղաքական լրջագույն մարտահրավերները,
- քաղաքական-տնտեսական էքսպանսիա իրականացնելով տարածաշրջանում հաստատվելու՝ Թուրքիայի նկրտումները,
- 44-օրյա պատերազմի արդյունքներից առավելագույնը ստանալու՝ թուրք-ադրբեջանական տանդեմի նպատակը, այն է՝ Արցախի հայաթափումն ու Հայաստանի հանդեպ տարածքային հավակնությունները բավարարելը,
- արցախյան հակամարտության էության և ձևաչափի միջազգային ընկալումից, խաղաղ կարգավորման գործընթացի հիմնարար սկզբունքներից Ադրբեջանի հրաժարումը,
- ՌԴ խաղաղապահ առաքելությունը սահմանափակելու և պատերազմ վերսկսելու՝ Ադրբեջանի փորձերը,

Արձանագրելով, որ՝

- Հայաստանում հաստատվել է մեկ մարդու իշխանություն, պետական ինստիտուտները կազմալուծված են,
- ուժային կառույցները ծառայեցվում են իշխանությունը պահելու միակ նպատակին,
- Հայաստանն այլևս իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետություն չէ,

Համոզված լինելով, որ՝

- Հայաստանի և հայության կողմից կենսական զիջումներ ենթադրող որևէ գործընթացի վերջնարդյունքը հայոց պետականության փլուզումն է,
- Հայաստանի՝ որպես ազգային և ինքնիշխան պետության զարգացման երաշխիքը նրա աշխարհաքաղաքական նշանակության և սերունդների իրավունքների պահպանումն ու ամրապնդումն է,
- Հայաստանի և Արցախի գոյության ու անվտանգության հիմնահարցերը փոխկապակցված են,
- Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման, կայուն խաղաղության ապահովման երաշխիքը ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի անվերապահ կիրառումն է՝ բացառելով Ադրբեջանի կազմում Արցախի՝ որևէ կարգավիճակով ամրագրումը,
- անհրաժեշտ է վերականգնել Արցախի ժողովրդի անվտանգությունն ու ինքնորոշման իրավունքի իրացումը երաշխավորելու՝ Հայաստանի հանձնառությունը,
- Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ներկայացնող որևէ անձ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընթացակարգերի խախտումով չի կարող ստորագրել քաղաքական կամ ռազմական բնույթի որևէ փաստաթուղթ,

Հանրահավաքը հայտարարում է.

Արտաքին վտանգները չեզոքացնելու, Արցախի հայաթափումը, Հայաստանի թուրքացումը բացառելու, ներքին կյանքում համերաշխություն հաստատելու, հայությունը համախմբելու նպատակով մենք սկզբնավորում ենք համազգային դիմադրություն՝ Հայաստանում, Արցախում, Սփյուռքում:

Նպատակն անփոփոխ է՝ հեռացնել պարտության խորհրդանիշ ուժին, վերականգնել Հայաստանի ինքնիշխանությունն ու հայ մարդու արժանապատվությունը:

Սա մեկ ուժի, մեկ դաշինքի դիմադրություն չէ, յուրաքանչյուր արժանապատիվ հայ մարդու գործն է:

Մինչև հաղթանակը այս պայքարը կարող է մեկ շաբաթ կամ ամիսներ տևել: Սա ենթադրում է յուրաքանչյուրիս հետևողական, ամենօրյա աշխատանք և գործողություն:

Մենք սկսում ենք կազմակերպվել: Մեր ներկայությունն Ազգային ժողովում ծառայելու է դիմադրության հզորացմանը: Պահը հասունացավ. պայքարը կտեղափոխենք միայն փողոցներ ու հրապարակներ:

Պարտության խորհրդանիշ վարչախումբը հեռացվելու է: Սյունիքը չի զիջվելու, Արցախը չի հայաթափվելու, Հայաստանը չի թուրքացվելու:

Հայաստանը լինելու է ինքնիշխան պետություն, հայ մարդն ապրելու է արդար, ուժեղ երկրում: Հայ մարդն աշխարհում քայլելու է գլուխը բարձր:

Երևան, Ազատության հրապարակ
08-ը նոյեմբերի 2021 թ.

2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրվեց
հայադավ հայտարարությունը

ԴՐՕՇԱԿ